



Ա.Ս. ՊՈԽՅԱՆ

ԵՎԳԵՆԻ
ՕՆԵԳԻՆ







891.71

14773

Q-90

891.71 14773
Q-90 Qmzypa. B. V.

Եղգեի

Եղգիւնք Օրնի գիշեր.

15n



Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆ

(Վ. Ա. Տրուպինի նկարից)

А.С.ПУШКИН

ЕВГЕНИЙ ОНЕГИН

роман в стихах

Перевод ГУРГЕНА СЕВАКА

АРМГИЗ

ЕРЕВАН 1949 МОСКВА

391.71
Պ-90

ՍՅՈՒԳՆԵՐ : 1961

Ա.Ա. ՊՈՒԿՏՅԱՆ

ԷՎԳԵՆԻ ՕՆԵԳԻՆ

չափաճո վեպ

Թարգմանություն ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿԻ



ՀԱՅԳԵՏՂԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949 ՄՈՍԿՎԱ

II
A 22658
44773

Գրքի նկարները և ձևավորումը
նկարիչ՝ Մ. Ա. ԱՐՈՒՏՉՅԱՆԻ

Պատ. խմբագիր Գ. ՍԱՐՅԱՆ

Հանձնված է արտադրության՝ 5.VIII.1948 թ.

Ստորագրված է տպագրության՝ 12.V.1949 թ.

А5403: Պատվեր № 1560: Տիրած 5000,
տպագր. 16,5 մամուլ

Գինը 15 ռուբլի

Типография «Известий Советов депутатов трудящихся СССР»
имени И. И. Скворцова-Степанова, Москва, Пушкинская пл., 5.

ԹԱՐԳՄԱՆՁԻ ԿՈՂՄԻՅ

«Օնեգինի» հայերեն թարգմանության մեր գրականությունը հարստանում է համաշխարհային հանճարեղ մի երկով, այդ փաստը վկայում է մեր լեզվի աննախընթաց վերելքն ու մեր լեզվական մշակույթի հուժկու աճը սովետական իշխանության տարիներին, ինչպես և մեր թարգմանչական արվեստի կատարելագործումը: Բնավ պատահական չէ, որ մեր մեջ անցյալում կա'մ խապառ չեն եղել «Օնեգինի» թարգմանության փորձեր, կա'մ, եթե եղել են՝ անհաջողությամբ են պսակվել: Միանգամայն օրինաչափական է, որ այդ չքնաղ ստեղծագործությունը թարգմանելու փորձերը մեծագույն մասամբ կատարվել են Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, առավել ևս Պուշկինի մահվան հարյուրամյակի նշումից 1937 թվից հետո:

«Եվգենի Օնեգինը», որ Բելինսկու գնահատմամբ Պուշկինի «ամենամտերիմ և հոգեհարազատ երկն է, նրա երևակայության ամենասիրելի զավակը», ծավալուն չափածո վեպ է, որ հաճախ հորջորջվում է և պոեմ: Նա գրված է 1823—1830 թվերին և արտացոլում է տասնիններորդ դարի 20-ական թվերի կալվածատիրական-ազնվապետական Ռուսաստանը՝ մայրաքաղաքի և գավառի կյանքը, քայքայվող ազնվականության մտավորականության անել վիճակը, լայնածավալ Ռուսիայի

բազմերանդ բնության, ուստի ժողովրդի հոգևոր հարստության ֆոնի վրա: Այս երկը իրավամբ անվանվել է «Ռուսական կյանքի հանրագիտարան»:

Առաջին անգամ ռուսական բնությունը, կյանքը, ուստի մարդիկ այդքան ռեալիստորեն և խոր արտացոլված են այս շափածո վեպի մեջ: «Եվգենի Օնեգինը» ռեալիստական վեպի սկիզբը դրեց ուստի գրականության մեջ: Վեպը դրված է աշխույժ քառոտնյա յամբական տաղաչափությամբ, երիտասարդական ավյունով. պատմողական-նկարագրական մասը հաճախակի ընդմիջարկվում է նուրբ կատակով, պայծառ սրամտությամբ, անմոռանալի աֆորիզմով, քնարական ղեղումով, հեղինակի անձնական վերհուշով և այլն: Լիրիկը իշխող է ամբողջ վեպում, հատկապես տասնութամյա բանաստեղծ Վլադիմիր Լենսկու և Թախտուն Տատյանա Լարինայի դրվագներում: Ավելորդ չի լինի հիշատակել, որ այս վեպը լիրիկմի առավել ընդգծումով օպերայի է վերածել հանճարեղ Չայկովսկին, որի «Եվգենի Օնեգին» օպերան համարձակ խաղարկվում է համաշխարհային մայրաքաղաքների օպերային թատրոններում դասական լավագույն օպերաների հետ մեկտեղ:

Թարգմանել «Եվգենի Օնեգին» շափածո վեպը նշանակում է հավասարապես հաղթահարել երկու դժվարություն՝ գեղարվեստական և գիտական. կարելի է առանց շափազանցության մեջ ընկնելու հայտարարել, որ նոր և նորագույն համաշխարհային գրականության մեջ չկա մի ուրիշ երկ, որն այսքան դժվարություններ ներկայացնի թարգմանչին: Իբրև «ռուսական կյանքի հանրագիտարան» այս վեպը պահանջում է գիտական ճշտություն մերարտադրել բնագրի բոլոր մանրամասնությունները, որովհետև այլապես կաղքատանա կամ կաղճատվի այդ հանրագիտարանը: Չի կարելի դուրս գցել ոչ մի էական նկարագիր, ոչ մեկ անուն, ոչ մի նույնիսկ աղոտ ակնարկ: Այսպես, խոսելով կալվածա-

տիրուհի Լարինայի մասին, Պուշկինը վեպի երկրորդ գլխի մեջ գրում է, որ նա, ի միջի այլոց, «ճակատներ էր խուզում»: Անուշագիր թարգմանիչը, եթե քմահաճորեն դուրս էլ չնետի այս ոչ այնքան բանաստեղծական ակնարկը, կարող է «խմբագրել» և դարձնել «գլուխներ էր խուզում», որով Լարինան կվերածվի վարսավորի: Մինչդեռ «ճակատներ խուզել» նշանակում է, որ Լարինան իր ճորտերի միջից ընտրում էր զինվորացուներին և նրանց ճակատի վրայից խուզում մազերը: Մի թեթև անզգուշությունը կարող է աղճատել այդ կնոջ կերպարը: Այս մեկ օրինակը բավական է ցույց տալու համար, որ «Օնեգինի» թարգմանությունը շատ ավելի դժվար է, քան որևէ պոեմի թարգմանություն առհասարակ:

Բայց բացի գիտական ճշտությունից այս վեպի թարգմանությունը բացառիկ դժվարություն ունի և այն պատճառով, որ Պուշկինի հանճարի ամբողջ փայլը, նրա տաղի թեթևությունը, նուրբ զեղումները, լեզվի հմայիչ սահունությունը, արտահայտությունից սեղմությունը և վերջապես նրա հոգու վեհ խոյանքը պետք է արտահայտվեն մի տաղաչափությամբ, որ ինքնին ըստ ամենայնի կաշկանդում է թարգմանչին:

Խնդիրն այն է, որ Պուշկինը հատկապես այս վեպի համար հորինել է այսպես կոչված «Օնեգինյան տուն», որն ինքնին մի անկրկնելի շեղեր է տաղաչափական արվեստի մեջ: Ամբողջ վեպը բաժանված է մոտ 400 այդպիսի տաղաչափական տների: Յուրաքանչյուր տունը բաղկացած է 14 տողից, որ բաժանվում է 4 մասի՝ երեք քառատողի և մեկ երկտողի, յուրաքանչյուր մաս ունի յուր հատուկ ռիթմիկան ու հանգավորումը և հանդիսանում է որոշ չափով ինքնամիտի միավոր տան մեջ:

Օնեգինյան տունը ես կնամանեցնեի քառածի կառքի, որը մի հանգրվանից մինչև հաջորդ հանգրվանը (տնից տուն) 4 անգամ փոխում է յուր ընթացքի արագությունը:

նը՝ ձիերին, մանավանդ ուղևորներին, այսինքն ընթերցողներին չհոգնեցնելու համար միալար երթով:

Օնեգինյան տան առաջին քառատողը ունի սովորական քառյակի հանգավորում հանգերի ընդմիջական հաջորդականությամբ, այսպես աբ աբ աբ աբ: Այստեղ չորս ձին առաջ են ընթանում քառատրոփ արշավով և լսվում է նրանց յուրաքանչյուր ոտքի տրոփը:

Քեռիս, հայտնի բարքով ազնիվ,	ա
Երբ լուրջ կերպով տկար դարձավ,	բ
Ուղեց տեսնել հարգ ու պատիվ	ա
Եվ ի՞նչ գտներ դրանից լավ:	բ

Երկրորդ քառատողը ունի բեյթային հանգավորում, հանգերի զույգ-զույգ հաջորդականությամբ, այսպես՝ դդ դդ դդ դդ: Այստեղ հմուտ կառավարը կարծես մի պահ բաց է թողնում ձիերի սանձերը և նրանք սուրում են արագ վարգով՝ զույգ զույգ առաջ նետելով առջևի ու ետևի ոտքերը, և այդ պատճառով լսվում է զույգ ոտքերի տրոփը:

Նրա փորձը թող լինի դաս,	դ
Բայց, տեր իմ, ի՞նչ ձանձրույթ է այս.	դ
Դիշեր ցերեկ հիվանդ պահել,	դ
Նրա մահճի առաջ դամիլել.	դ

Երրորդ քառատողը ունի գոտևորված հանգավորում, այսպես՝ եզզե եզզե: Այստեղ կառավարը փորձում է զսպանակել արշավի արդեն ծայրահեղության հասած արագությունը և ուժեղ քաշում է եզրերի ձիերի սանձերը, մինչդեռ մեջտեղի ձիերը դեռ շարունակում են իրենց արագ վարգը, և պարզ լսվում է, թե ինչպես առաջինների մեկ տրոփին հաջորդում է երկրորդների երկուական տրոփը:

Ինչ խարդավա՞նք ամոթաբեր.	ե
Կիսակենդան մարդ խնամել,	զ
Բարձ տալ նրան ու հարդարել,	զ
Մատուցանել շուտ շուտ դեղեր:	ե

Եվ վերջապես Օնեգինյան տան շորրորդ հատվածում, որ սովորաբար ամբողջ տան եզրափակիչ, ամփոփիչ միտքն է արտահայտում, հավասարակշռվում է երկու զույգ ձևերի վազքը, հանդարտվում՝ կարծես հանգրվանի մատուցին հասնելու հանգստությունը: Այստեղ մի զույգ նույնահանգ տողեր են էէ էէ, որով և ավարտվում է Օնեգինյան տան բարդ ընթացքը:

Հոգոց հանել, խորհել մի բան՝ է
Ե՞րբ կտանի քեզ սատանան: է

Ահա և ամբողջ Օնեգինյան տան հանգային ութմիկան.

1. $\widehat{աբ} \widehat{աբ} (\widehat{աբ} \widehat{աբ}) (\widehat{աբ} \widehat{աբ})$ և այլն
2. $\widehat{գգ} (\widehat{գգ} \widehat{դդ}) (\widehat{գգ} \widehat{դդ})$ և այլն
3. $\widehat{եզ} \widehat{զե} (\widehat{եզ} \widehat{զե}) (\widehat{եզ} \widehat{զե})$ և այլն
4. $\widehat{էէ} (\widehat{էէ} \widehat{էէ})$ և այլն:

Եվ ամբողջ վեպը, մոտ 6000 տող ծավալով, բացի երեք հատվածից (Տատյանայի նամակը, աղջիկների երգը և Օնեգինի նամակը) գրված է Օնեգինյան տան այս ճարտարարվեստով, որ իհարկե նույնությունը պահպանել եմ և թարգմանության մեջ:

Չնայած ահավոր դժվարություններին, ինձ հաջողվել է պահպանել բնագրի տաղաչափական համարյա բոլոր առանձնահատկությունները. իմ թարգմանությունը համատող, համառիքմիկ և համահանգ է բնագրին:

Պետք է նշել նաև այն, որ առավել դժվար էր բնագրի առանց այն էլ սեղմ ու զուսպ շարադրանքը թարգմանել առավել սեղմ կերպով, քանի որ հայոց լեզվի տաղաչափությունը հնարավոր չի դարձնում պահպանել բնագրի 8 և 9 վանկանի տողերը, որի հետևանքով ես ստիպված եմ եղել ամբողջը թարգմանելու 8 վանկանի տողերով՝ այդպիսով ամբողջ վեպի մեջ գործածելու 2700 վանկ ավելի պակաս, քան բնագիրն ունի. սականի մոտ 1000 բառ կամ 335 տող բնագրից պակաս, մինչդեռ նույնիսկ արձակի թարգմանությունը հայերենում տալիս է 20—25% աճ: Ի դեպ 10 տարի առաջ, 1937 թվին, երբ առաջին անգամ ձեռնարկեցի «Օնեգինի» թարգմանությունը և Պուշկինի մահվան հարյուրամյակին նվիրված երեկույթի համար թարգմանեցի լենսկու տաղը և Տատյանայի նամակը, ես ընտրեցի 10 վանկանի տողի ուղին, որից սակայն հետագայում հրաժարվեցի և կանգ առա 8 վանկանի տողի վրա:

Այժմ երբ ամեն ինչ ավարտված է, ես նույնիսկ խուսափում եմ վերհիշելուց բոլոր դժվարությունները, խոսքի երկունքը, որ ապրել եմ այս 10 տարիների ընթացքում «Օնեգինի» թարգմանության պահերին: Յուրաքանչյուր տան անմիջական թարգմանական աշխատանքին, որպես կանոն, նախորդել են հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

1 Համապատասխան ծանոթությունների և մեկնաբանությունների հավաքում, տարբեր հրատարակություններից, ուսումնասիրություններից և Բրոդսկու «Комментарии к Евгению Онегину» երկից.

2. Տան տողացի արձակ թարգմանություն՝ համապատասխան ո՛չ միայն անձանոթ, այլև՝ կասկած հարուցող բառական առումների ճշտումով ըստ Ուշակովի խմբագրած քառահատոր բառարանի, որի մեջ շատ օրինակներ բերված են հենց «Օնեգինից».

3. Տողացի թարգմանության համեմատությունը վրացերեն¹, էսպերանտերեն², երբեմն նաև ադրբեջաներեն³ թարգմանությունների համապատասխան տեղերի հետ.

4. Հայերեն կարճ, արտահայտիչ և բարեհնչյուն հոմանիշների և նույնանիշների որոնում (հիշողությամբ և բառարաններով):

Այս նախապատրաստական աշխատանքին հետագայում հաջորդում էր արդեն ստուգված, ճշտված, պատրաստի տողացի թարգմանությունը չափածոյի վերածելու, կոկեկու և շնչավորելու աշխատանքը: Յույց տալու համար, թե այս դեպքում ինչից ինչ էի ստանում, ստորև տալիս եմ 7-րդ գլխի 7-րդ տան նախնական տողացի թարգմանությունը և վերջնական, մշակված չափածո արտահայտությունը:

Ահա տողացի թարգմանությունը.

Թեքված սոսու ճյուղերի վրա,
երբեմն, վաղ առավոտվա մեղմ քամին
Այս խաղաղ դամբարանի վերևում
Տարուբերում էր խորհրդավոր ծաղկեպսակ.
երբեմն, ուշ ժամանակ,
Այստեղ էին գալիս երկու ընկերուհիներ,
Նվ գերեզմանի վրա, լուսնի տակ
Գրկվելով՝ լալիս էին:
Իսկ այժմ... հողնած հուշարձանը
Մոռացված է: Նրա մոտ տանող սովոր
Ճանապարհը

¹) ალექსანდრე პუშკინი — ევგენი ონეგინი. თარგმანი გრიგოლ ცეცხლაძის, თბილისი, 1935 წ.

²) A. S. Puškin — Eugenio Onegin. Tradukis kaj komentis N. V. Nekrasov, Paris-Leipzig-Moskvo, 1931 j.

³) A. S. Puškin — Jevgeni Onegin. Cevirdni Samed Vuroqun, Bakh, 1937.

Խլացել է: Ճյուղի վրա պսակը չկա.

Միայնակ նրա տակ, սպիտակահեր ու
հիվանդ

Հովիվը առաջվա նման երգում է

Եվ աղքատիկ ոտնաման հյուսում:

Ահա և սրա շափածո դեղարվեստական արտահայտությունը.

Սոսու ճյուղին սաղարթակոր
Մի ժամանակ, վաղորդային,
Պարզ դամբանի խորհրդավոր
Պսակն էր մեղմ ճոճում քամին.

Մերթ էլ երկու մտերմուհի

Լուսնի շողով, ըստ պատեհի,

Այցի էին նրան դալիս

Եվ գիրկընդխառն այտնեղ լալիս:

Այժմ... Խուլ է արձանն, անտեր,

Հարթվել է հեղ նրա ճամփան,

Եվ էլ պսակ չկա վրան:

Միայն տկար և ալեհեր

Հովիվն է իր հին երգն ասում

Եվ անպաճույճ տրեխ հյուսում:

Այսպիսով տունն ավարտված է, դեղարվեստորեն ձևավորված և չի մատնում տքնություն հետք:

Սակայն պետք է ասեմ, որ այդ երկունքը ինձ համար առավել տևական էր, որոհվեալ վեպի առաջին չորս գլուխները, 1937—40 թվերին արդեն 10 վանկանի տողերով թարգմանած լինելուց հետո 1941—1944 թվերին ստիպված եղա քանդելու և վերածելու ութ վանկանի տողերի, քանի որ 5-րդ և 6-րդ գլուխները արդեն ութով էի թարգմանել և այդ շափը ընտրել վերջնականորեն: Հայրենական մեծ պատերազմի փառավոր ավարտումից հետո ինձ առաջարկվեց ամբողջացնել այդ թարգմանությունը, որ և ես ավարտեցի 1947 թվի սեպտեմբերի 15-ին:

Մի քանի խոսք էլ իմ թարգմանություն լեզվական
կողմի մասին. սկզբից ի վեր պետք է հայտարարեմ,
որ թարգմանություն ընթացքում ես ձգտել եմ արտա-
հայտել Սովետական Հայաստանի լեզվական բարձր
մշակույթը՝ անխախտ պահելով մեր պետական լեզվի
միասնականությունը և չզբաղվելով զանազան նորա-
րարություններով, խուսափելով գրաբարյան ու բարբա-
ռային անընդունելի տարրերից:

Թե որքան է ինձ հաջողվել սովետական գեղարվես-
տական կլասիկ լեզվի նմուշ դարձնել այս թարգմանու-
թյունը, դրա գնահատականը կստանանք առաջիկայում;
երբ վեպը լույս կտեսնի, թեև առաջուց կարելի է ասել,
որ 6000 տողի մեջ կարող են լինել մի քանի տասնյակ
անհաջող տողեր ևս:

ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

ԵՎԳԵՆԻ
ՕՆԵԳԻՆ

Pétri de vanité il avait encore plus de
cette espèce d'orgueil qui fait avouer avec la
même indifférence les bonnes comme les
mauvaises actions, suite d'un sentiment de
supériorité, peut-être imaginaire.

*Tiré d'une lettre particulière.**

Ո՛չ նշուի տալը սեզ աշխարհին,
Ա՛յլ գորովդ մտերմության
Հուշում է ինձ տալ սրտագին,
Քեզ արժանի գրավական,
Վայել հոգուդ վեհ ու պայծառ,
Միշտ առկեցուն սուրբ տենչերով,
Պոեզիայով հստակ ու ժիր,
Վեհ պարզությամբ և խոհերով...
Արդ, կողմնակալ ձեռքով ստանձնի՛ր
Իմ այս տողերն, որ փնջեցի՝
Մերթ խնդալի, մերթ տխրական,
Պարզ ու մեղալին, իգեալական,
Անփութ պտուղն իմ ժամանցի,
Անփության, հեշտ ներշնչման,
Խակ և թռչնած տարիների,
Մտքիս սառը դատողության,
Սրտիս վշտոտ նշումների:

* Անափառությամբ տողորված՝ նա ուներ բացի զբանից նաև
մի աշխարհի հպարտություն, որը հարկադրում է հավատար ան-
տարբերությամբ խոստովանել ինչպես բարի, այնպես էլ չար
արարքները, իրեն հետևանք գերազանցության զգացմունքի,
թերևս երևայական:

Քաղվածք մասնավոր նամակից:





ԳԼՈՒԽ Ա.ՌԱԶԻՆ

Ե՛վ ապրել է շտապում, և՛ զգալ աճապարում,
Իշխա. վլազեմսկի



I

եռիս, հայտնի բարձրով ազնիվ,
Երբ լուրջ կերպով տկար դարձավ
Ուզեց տեսնել հարգ ու պատիվ,
Եվ ի՛նչ գտներ դրանից լավ:
Նրա փորձը թող լինի դաս,
Բայց, տե՛ր իմ, ի՛նչ ձանձրույթ է այս՝
Գիշեր—ցերեկ հիվանդ պահել,
Նրա մահճի առաջ գամվել.
Ի՛նչ խարդավանք ամոթաբեր՝
Կիսակենդան մարդ խնամել,
Բարձ տալ նրան ու հարդարել,
Մատուցանել շուտ-շուտ դեղեր,
Հոգոց հանել, խորհել մի բան՝
Ե՛րբ կտանի քեզ սատանան»:

II

Այս էր միտքը՝ փոստի կառքով
 Փոշում թռչող մի կտրիճի,
 Որ ժառանգն էր Զևսի կամքով
 Իրենց տոհմում ամեն ինչի:
 Զդիմելով նախաբանի՝
 Լյուդմիլայի և Ռուսլանի
 Բարեկամներ, իսկույն ևեթ
 Ծանոթացնեմ հերոսիս հետ:
 Օնեգինն է, ընկերն իմ լավ,
 Ծնված նեվայի մոտ գլուխով,
 Ուր գուցե և դո՛ւք, ընթերցո՛ւղ,
 Ծնվել էք կամ փայլել անբավ:
 Ես էլ աչնտեղ դտա բերկրանք,
 Բայց հյուսիսում ունեմ վտանգ՝:

III

Ծառայելով լավ ու կարգին՝
 Նրա հայրը ուներ պարտքեր,
 Երեք բալ էր սարքում տարին,
 Այդպես վատնեց, ինչ որ ուներ:
 Եվզենիին բախտը շոյեց.
 Նախ մի Madame խնամք թափեց,
 Ապա Monsieur-ն տեղը եկավ:
 Մանուկն անկարգ էր ոչ սակավ.
 Monsieur l'Abbé -ն խեղճ ֆրանսացի՝
 Երեխային չնեղելով,
 Դաս էր տալիս միշտ կատակով:
 Չէր պահանջում վարք խելացի,
 Կշտամբում էր նա մերթ բնդ մերթ,
 Ամռան աչդին տանում իր հետ:

IV

Իսկ փոթորկոտ ջահելության
 Երբ ժամն եկավ նվզենի՜
 Ժամ հույսերի, թախծի նազան,
 Քշվեց Monsieur-ն առաքինի:
 Օնեգինն իմ ազատ էր արդ,
 Վերջին ձեռով սանրված հարթ,
 Զուգված կոնդոնի գենդոն² պես՝
 Աշխարհ մտավ նա վերջապես:
 Յրանսերենով ազատ, սահուն
 Խոսում, գրում էր անարգել,
 Կավ մազուրկա գիտեր պարել,
 Վարժ էր հմուտ բարե տալուն:
 Էլ ի՞նչ էր պետք. ողջ շրջական
 Վճռեց՝ խելոք է, դուրեկան:

V

Չէ՛ որ այդպես վայրիվերո,
 Թշուր ուտում ենք առել և մենք,
 Բայց այդ հիմա, փա՛ռք աստուծո,
 Չի խանդարում, որ մենք փայլենք:
 Օնեգինն, ըստ շատ շատերի
 (Ծանր ու խիստ դատողների),
 Կիրթ էր, սակայն բծնախնդիր,
 Նվ կարող էր տաղանդը իր
 Մեջ բերելով՝ զրույցներում
 Հեշտ ձեռք մեկնել ամեն բանի,
 Խոհուն տեսքով գիտնականի
 Միշտ լուռ մնալ լուրջ վեճերում,
 Կանանց ժպիտ կորզել անշափ
 Էպիգրամով տեղատարափ:

VI

Լատին լեզվի օրերն անցան,
 Բայց, ճիշտ առած, Եվգենին մեր
 Սովերել էր լատինն այնքան,
 Որ հասկանար բնաբաններ,
 Յովեննալի մասին դատեր,
 Իր նամակին vale կցեր.
 Գիտեր անգիր, բայց ոչ սահուն,
 էնեսսից մի երկու տուն:
 Քրքրելու նա չէր սովոր,
 Ժամանակագրության փոշին՝
 Պատմությունը երկրի մեր հին,
 Բայց անեկդոտները բոլոր,
 Ռոմուլից մինչ օրերը մեր,
 Դարձրել էր մտքի գանձեր:

VII

Զուրկ լինելով տաղի համար
 Կյանքը տալու ջերմ ավյունից՝
 Նա չէր կարող, ինչքան ջանար,
 Յամբը ջոկել պարզ քորեյից:
 Չէր սիրում Հոմեր, Թեոկրիտ,
 Բայց կարգում էր նա Ադամ Սմիտ,
 Եվ լինելով տնտեսագետ՝
 Շատ լավ գիտեր, թե ի՞նչ է պետք,
 Որ մի երկիր հարուստ լինի,
 Ի՞նչն է պահում նրան, ինչո՞ւ
 Նրան պետք է պաշար ոսկու,
 Եթե պարզ արտադրանք ունի:
 Հայրը որդուն չհասկացավ
 Եվ հողերը զրեց գրավ:

X

Վաղ սովորեց նա հեշտ կեղծել,
 Խանդ արծարծել, հուսալ թաքուն,
 Իր կարծիքին մարդկանց բերել,
 Տանջվել, թվալ տխուր, անքուն,
 Մերթ խիստ հպարտ, մերթ հնազանդ,
 Մերթ ուշադիր, մերթ սառն, անխանդ.
 Մեկ նվաղ էր ու լռակյաց,
 Մեկ ճարտասան՝ կրակ կտրած:
 Ի՞նչ անփութ էր շարադրում սեր.
 Լոկ մի բան էր սիրում, շնչում
 Եվ նրա մեջ իսպառ կորչում.
 Ի՞նչ կենդանի հայացք ուներ՝
 Մերթ հանդուգն, մերթ ամոթխած,
 Հլու արցունքն աչքին իջած:

XI

Ինչպե՞ս կարող էր նոր թվալ,
 Զարմանք ազդել հեզ կատակով,
 Իր հուսահատ վարքով ահ տալ,
 Շողոքորթել հաճո խոսքով,
 Որսալ հարմար բուպեն հույսի,
 Ամոթն ու վախն անմեղ կույսի
 Հեշտ փարատել, և շատ անգամ
 Կորդել փաղաքշանքներ դժկամ,
 Սիրո բացատրության դրդել,
 Տեսնել մի նոր սրտի առկալծ,
 Հետապնդել անվերջ, հանկարծ
 Ծածուկ ժամադրության կանչվել
 Եվ հետո լուռ, հարմար սլահին
 Նրան դասեր տալ առանձին:


XII

Ինչ վա՛ղ գիտեր նա վրդովել
Կոկեանների սիրտը նբլին.
Իսկ երբ ուզեր ոչնչացնել
Իր ախոյան ոսոխներին,
Ի՛նչ խայթով էր շարախոսում,
Ի՛նչ խճճած ցանցեր հյուսում:
Բայց դուք, անհո՛գ ամուսիններ,
Մնում էիք նրան ընկեր.
Փաղաքշում էր նրա դշխեմ՝
Ֆոբլասի. նոր հետնորդն անգող,
Ամուսինը ծեր, կասկածող
Եվ եղջերակիրը վսեմ՝
Միշտ զըհունակ ինքն իրենից,
Իր լավ ճաշից ու կնոջից:

XIII

This image shows a full page of dot grid paper. The background is white, and it is covered with a regular pattern of small, solid black dots. The dots are arranged in straight horizontal and vertical rows, creating a grid-like appearance across the entire surface. There are no margins, text, or other markings present.

XIV



XV

Հաճախ, չելած դեռ անկողնից,
 Ստանում է նա նամակներ:
 Ի՞նչ է, կոչմո՞ւնք. մի անգամից
 Երեք երեկոյի հրավեր՝
 Պարահանդես, տոն մանկական:
 Որի՞ն հասնի մեր խենթ տղան,
 Ո՞ւր մեկնի նախ: Մեկ չէ՞ արդյոք:
 Նա կհասնի, եղե՛ք անհոգ:
 Դեռ իր շորով առավոտյան,
 Գլխին դրած լայն բուլիւլար՝³
 Մեկնում է նա դեպի բուլիւլար
 Եվ զբոսնում այնտեղ այնքան,
 Մինչև որ զանգը Բրեգետի
 Նրան ճաշի հրավեր նետի:

XVI

Մթնեց. նստում է նա սահնակ,
 «Քշի՛ր» — ձայնում պարզ ու մեկին.
 Նրա կուղբն օձիքը տաք
 Արծաթում է սառցափռշին:
 Դեպի Talon⁴. վստահ է նա՝
 Կավերինն է այնտեղ հիմա:
 Մտավ թե չէ, շիշը ճայթեց,
 Ասուպ գինու շիթը ցայտեց:
 Ահա roast-beef-ն արնատապակ,
 Գետնասունկը միշտ պատվական՝
 Նուրբ ճաշակով ֆրանսիական
 Եվ Ստրասբուրգի թարմ կարկանդակ.
 Կողքին պանիրը Լիմբուրգի
 Եվ անանասն այնպես հարգի:

XVII

Գինու ծարավն է դեռ խնդրում
 Հեղեղել ճարպը կոտլետի
 Բայց Բրեգետի զանգն է հայտնում
 Սկիզբը մի նոր բալետի.
 Եվ թատրոնի մեր օրենստուն՝
 Փոփոխամիտ երկրապագուն
 Հմայիչ պարուհիների,
 Սովոր հյուրը կուլիսների,
 Թատրոն մեկնեց խիստ փութագին,
 Որտեղ ամեն մի Entrechat
 Ազատ ծափահարում է նա,
 Սուլում Ֆեդրին, Կլեոպատրին,
 Մոխնային կանչում հանդես՝
 Իրեն ցուցադրելով ի տես:

XVIII

Օ՛, վա՛յր դյուժիշ. շատ տարիներ
 Այդտեղ իշխեց երգիծանքով
 Տոնվիզինը ազատասեր,
 Եվ Կնյաժնինը մեր դյուրաթով.
 Օղերովը քաղեց այդտեղ,
 Սեմյոնովայի հետ մեկտեղ,
 Անմեղ լաց ու ծափ բերկրալի,
 Եվ հանճարին վեհ Կորնեյի
 Կատենինը նոր կյանք տվեց,
 Շախովսկոյը գրեց խայթող
 Կոմեդիաներն իր աղմկող,
 Այդտեղ Դիդլոն փառքով օծվեց:
 Այդտեղ, այդտեղ կուլիսներում
 Ջահել օրերս էին եռում:

XIX

Իմ դիցուհի՛ք, ո՛ւր եք դուք, ո՛ւր:
 Ո՛հ, հաճեցեք պատասխանել՝
 Դուք կա՛ք էլի, թե՛ նորալուր
 Այլ կույտեր են ձեր տեղն եկել:
 Կարժանանա՛մ արդյոք կրկին
 Մեր ուսական Տերփսիքորին,
 Ձեր խմբերգին, թե՛ էլ նվաղ
 Հայացքը իմ այդտեղ, ավա՛ղ,
 Չի գտնելու ծանոթ գեմքեր,
 Եվ լուռնետս հառած իզուր
 Նոր գեմքերին անհրապույ՛ր՝
 Իբր անձանոթ ու անտարբեր,
 Ես լուռ պիտի սոսկ հորանջեմ
 Եվ անցյալը միշտ անրջեմ:

Լեցուն թատրոն, ճոխ օթյակներ,
 Բազկաթոռներ. և պարտերում
 Ծափեր ուրախ ու անհամբեր.
 Վարագույրն է արդեն բացվում:
 Փայլաթափանց, եթերային,
 Միշտ ունկնդիր մեզմ ջութակին,
 Փերիների խմբում նազան
 Կաքավում է Իստոմինան:
 Գետնին հենած մի ոտքն ամուր՝
 Մյուսով շրջվում է նա դանդաղ,
 Ոստնում, թռչում ինչպես փետուր,
 Սահում ինչպես էսլան տաղ,
 Գալարվում է, ձղվում արագ,
 Ոտքերն իրար խփում բարակ:

XXI

Ծափեր: Եվգենին է մտնում,
 Անցնում՝ տրորելով շատ ոտ,
 Երկրոռնետն է շլած ուղղում
 Կանանց կողմը դեռ անծանոթ:
 Յարուսները դիտեց արդեն,
 Բոլոր դեմքերն, շորերն ամեն
 Զննեց նա խիստ, դժկամակած,
 Բոլոր ծանոթ տղամարդկանց
 Գլուխ տվեց, հետո բեմին
 Սառն ու ցրվ հալացք նետեց,
 Դեմքը շրջեց ու հորանջեց,
 Հարեց՝ «Բան չեն ամեններն.
 Բալետն երկար հանդուրժեցի,
 Դիզլույց էլ արդ զգվեցի⁵»:

XXII

Դեռ ամուսնեք, դեք, օձեր
 Բեմում ցատկում են, աղմկում,
 Մառաները հոգնած ու ծեր
 Տաք քնած նն նախամուտքում,
 Դեռ թնդում են միշտ անպակաս
 Մափ ու դոփյուն, խնշոց ու հազ,
 Դեռ դուրսն ու ներսն ամենուրեք,
 Լապտերներն են փայլում բեկ-բեկ,
 Դեռ ձիերն են դոփում մրսած՝
 Լծասարքից խիստ ձանձրացած,
 Կառապաններն են տերերին
 Հայհոյում խարուչիկ եզրին,
 Բայց Եվգենին տուն է թռչում,
 Շոր փոխելու աճապարում:

XXIII

Գծե՞մ պատկերն հավատարիմ՝
 Այն սենյակի փարթամ ու պերճ,
 Ուր մոգայի սանը ուշիմ,
 Շոր է փոխում, զուգվում անվերջ:
 Ինչ որ Լոնդոնն ունի մանրուք՝
 Գոհացնելով քմահաճույք,
 Փայտի, ճարպի դեմ մշտապես
 Բալթիկ ծովով հղում է մեզ,
 Ինչ Փարիզը ճաշակի ստրուկ՝
 Գտած իբրև շահի աղբյուր,
 Հագեցնելով պապակը յուր,
 Հնարում է պերճանք ու շուք,
 Բոլորն ունի իր մոտ հիմա
 Փիլիսոփան տասնութամյա:

XXIV

Պոլսի ծխամորճներ սաթի,
 Բրոնզ, շինի ամենագույլ,
 Եվ զմայլանք նրբին սրտի՝
 Օծանելիք ջինջ ապակույլ,
 Սղոցիկներ, սանրեր ամուր,
 Մկրատիկներ ուղիղ և ծուռ,
 Խողանակի ամբողջ մի շար՝
 Ատամի, եղունգի համար...
 Ռուսոն (թող այս մեր մեջ ասվի)
 Չէր ներում, որ Գրիմն իր մոտ
 Կղունդ մաքրեց մի առավոտ՝⁶
 Ի վիշտ այդ խենթ պերճախոսի:
 Ազատության պաշտպանն այդ լավ
 Սույն դիպվածում ճիշտ չէր բնավ:

XXV

Կարելի է լինել խելոք՝
 Եվ եղունգի մասին հոգալ:
 Ինչու ուղղել դարին բողոք.
 Սովորութիւն է մեծ բռնակալ:
 Եվգենին՝ մի Չադաև նոր,
 Պատշաճ կարգ ու ծեսին սովոր՝
 Հագնվելում շատ էր պեղանտ
 Եվ այն, ինչ կոչվում է ֆրանտ:
 Նա երեք ժամ ամբողջովին
 Անց էր կացնում հայելու մոտ
 Եվ հեռանում կոկ ու խանդոտ՝
 Նման թեթև վահանալին,
 Որ հագնված այր մարդու պես,
 Գնում է դիմակահանդես:

XXVI

Յանկանալով ձեզ ցուցադրել
 Զուգսի բնաիր ճաշակն այդ նոր,
 Կարող էի նկարագրել
 Օնեգինի զարդը բոլոր:
 Դա հանդուգն բան է իրավ.
 Նկարագրել զիտեմ ես լավ,
 Բայց պանտալոն, միլետ, ֆրակ
 Ռուսերեն չեն առհասարակ,
 Մինչդեռ ասեմ՝ ոճս տհաս
 Առանց այն էլ շատ կշահեր,
 Եթե օտարազգի բառեր
 Գործածելի մի քիչ պակաս,
 Թեև վարժ եմ բավականին
 Ակադեմիկ բառարանին:

XXVII

Բայց այդ չէ մեր նյութը բնավ.
 Պարահանդես գնանք հիմի,
 Ուր կարեւորով արագ թռավ
 Իմ Օնեգինը շեշտակի:
 Տների դեմ արդեն խավար,
 Մութ փողոցում, շարքով երկար,
 Լապտերները կարեւորերի
 Շողերն իրենց ժիր լույսերի
 Ձյան վրա են խուրձ-խուրձ նետում:
 Ճրագներով իր անհամար
 Մի տուն փայլում է լուսավառ,
 Ներսից ստվերներ են երևում,
 Պրոֆիլներ են ծկլում կանանց
 Եվ մոդայիկ տղամարդկանց:



XXVIII

Մեր հերոսը գավիթ հասավ,
 Մարմարաշեն սանդուղքներով
 Նետի նման վերև թռավ,
 Սանրվածքն իր հարթեց ձեռքով,
 Մտավ դահլիճ. ի՞նչ բազմութուն,
 Նվագն արդեն հոգնած, նկուն:
 Մազուրկա են պարում վառված,
 Շուրջը աղմուկ ու խիստ նեղված:
 Խթաններն են զնգում ամեն,
 Կանանց ոտքերն են հեզ փախչում,
 Նրանց դյուլթիչ հետքով թռչում
 Աչք ու հայացք՝ ողջ բոցեղեն.
 Զուլթակներն ոռնոցի մեջ
 Քշիշում են տիկնաչք անվերջ:

XXIX

Ես էլ իմ ջերմ օրերում վառ
 Խենթ էի պարահանդես գալու.
 Չկա մի տեղ այդքան հարմար՝
 Սեր հայտնելու, նամակ տալու:
 Ամուսիննե՛ր դուք պատվարժան,
 Ահա խոսքն իմ մտերմական,
 Խնդրեմ ասածս լավ հիշել՝
 Ուզում եմ ձեզ զգուշացնել.
 Դուք էլ, մայրե՛ր, ուշի՛մ ու խի՛ստ
 Հետեցեք ձեր դուստրերին,
 Ձեր լոռնետին մի՛ տաք հանգիստ,
 Թե չէ՛... աստված անի բարին:
 Նրա համար եմ այս գրում,
 Որ ինքս էլ մեղք չեմ կրում:

Աւա՛ղ, կյանքիցս շատ օրեր
 Վաշելքները տարան պես-պես,
 Բայց այժմ էլ, թե լավ բարբ լիներ,
 Կսիրեի պարահանդես:
 Սիրում եմ խենթ ջահելություն,
 Նեղվածք և փայլ ու խնդություն,
 Կանանց ընտիր զարդերը այն
 Եւ ոտիկները նուրբ. սակայն,
 Ռուսաց երկրում փնտրելն է զուր
 Երեք զույգ լավ ոտիկ հիմա:
 Զեմ մոռանում ես ակամա
 Երկու ոտիկ... պաղած, տխուր՝
 Հիշում եմ դեռ, և երազում
 Նրանք իմ սիրտն են միշտ հուզում:

XXXI

Բայց ե՛րբ և ի՞նչ անապատում,
 Ո՛ւ խենթ, նրանց կմոռոնաս:
 Ա՛խ, ոտիկներ՛ր, ո՛ւր եք ճմլում
 Այժմ ծաղկունքը դարնահաս:
 Արեւելքի նազով սնված՝
 Դուք հյուսիսում մեր այս սառած,
 Հետք չթողիք պաղ ձյան վրա.
 Սովոր էիք գորգի վրա
 Հանդել փափուկ և անապակ:
 Վաղուց է՝ ինձ մոռացրիք
 Դուք հայրենիքն իմ անուշիկ,
 Ե՛վ աքսոր, և՛ փառքի պապակ:
 Կորավ խինդս երազաթև,
 Ինչպես ձեր հետքն արտում՝ թեթև:

XXXII

Դիանի կուրծքն, ալտերն Ֆլորի
 Շատ են չքնաղ, բարեկամնե՛ր,
 Բայց ոտիկը Տերվիսիքորի
 Ալիկի է ինձ համար վեր.
 Խոստանում է նա հայացքին
 Վարձատրություն մեծ ու անդին
 Եվ խաբուսիկ նա իր գեղով
 Դուրս է կոչում կրքերի բով:
 Էլվի՛նա, սիրում եմ նրան
 Սեղանների սփռոցի տակ,
 Գարնան դաշտում ծաղկահատակ,
 Վառարանի առաջ ձմռան,
 Կոկ պարկետի վրա նրբին,
 Գոռ ժայռի մոտ և ծովափին:

XXXIII

Հիշում եմ ծովն հողմից առաջ
 Եվ իմ նախանձն ալիքներին,
 Որ վազելով խուլաշառաչ՝
 Փարվում էին նրա ոտքին:
 Ուզում էի շուրթով և ես
 Ոտիկներին փարվել այնպես:
 Ո՛չ, իմ բորբոք ջահելության
 Զերմ օրերում ես դեռ այնքան
 Չեմ ցանկացել, ներքին ցավով,
 Պագել շուրթերն Արմիզների,
 Կամ վարդերը բոց ալտերի,
 Կամ կուրծքը՝ լի տվայտանքով.
 Ո՛չ, չի տանջել իմ մոլեգին
 Կիրքը այդպես դեռ իմ հոգին:

XXXIV

Հիշում եմ այլ մի ժամանակ.
 Իմ տենչերի հախուռն վազքում,
 Ձեռքով բռնած նուրբ ասպանդակ՝
 Այն ոտիկն եմ ասիիս զդում.
 Անուրջներս են եռում կրկին,
 Եվ այդ հպումը վերստին
 Վառք է տալիս սրտիս անեռ.
 Դարձյալ թախիժ ու դարձյալ սեր...
 Բա՛վ է, քնա՛ր իմ անլուին,
 Գովես կանանց ամբարտաւան,
 Որոնք բնավ իսկ չեն արժան
 Ո՛չ մեր կրթին, ո՛չ երգերին.
 Նրանց խոսքն ու հայացքը կեղ
 Խաբուսիկ են ոտքերի պես:

XXXV

Իսկ Եվգենին: Քնաթաթախ
 Անկողին է մեկնում բալից,
 Մինչ Պետերբուրգը բյուրազբազ
 Զարթնեց արդեն թմբկի ձայնից.
 Ելան շարշի, վաճառական,
 Կառքն է վազում դեպի բորսան.
 Ա՛յ, օխտեցի կժով մի կին
 Ճոռացնում է ձյունը նրբին:
 Զարթնեց աղմուկն այգաբացի,
 Փեղկից բացվեց դուռ, լուսամուտ,
 Ծխնելույզից ծուխն ելավ լուրթ,
 Եվ հացթուխը գերմանացի՝
 Գլխին թասակ՝ և ճշտասպաս
 Բացեց արդեն իր վասիսդաս:

XXXVI

Հոգնած բալի աղմուկներում,
 Այգը խորին գիշեր արած,
 Երանելի ստվերներում
 Փարթամ կյանքի սանն է քնած:
 Նա կարթնանա ուշ կեսօրին,
 Եվ որոշ է կյանքը կրկին՝
 Միօրինակ, խուռն ու անդեկ,
 Վաղը նույնը, ինչ որ երեկ:
 Երջանի՞կ էր բայց նա արդյոք
 Տարիներում իր վառ, ազատ,
 Արկածներում իր պայազատ,
 Վայելքների մեջ իր անհոգ:
 Արդյոք զո՞ւր էր նա քեֆերում
 Անզգուշ և առողջ լինում:

XXXVII

Ո՛չ: Ծուռ սառեց հույզը նրա,
 Կյանքի հեքից նա ձանձրացավ,
 Կանանց դասը գեղահմա
 Նրա մտքից շուտ դուրս թռավ:
 Սիրո դավերից էլ հոգնեց,
 Բարեկամ ու ընկեր լքեց,
 Քանի որ չէր կարող հո միշտ
 Beef-steaks-ն ու կարկանդակն անվիշտ
 Հեղեղել շամպայնի շշով
 Եվ դուրս տալ սուր, խայթող բառեր,
 Երբ զգում էր դժբաղակեր.
 Ու թեև դեռ ուներ կորով՝
 Բայց և այնպես նա համառ
 Լքեց կռիվ, սուրեր, կապար:

XΣXVIII

Մի ախտ, որը դեռ հիմնովին
Զի վերլուծված մեզ մոտ սակալն,
Նման անդլիական սպլինին,
Կարճ՝ մեկամաղձր ուսական,
Կամաց-կամաց նրան տիրեց.
Բայց, փառք ասածո, նա չբռնեց
Ինքնասպանի տխուր ուղին,
Միայն ստույգ կյանքից իր հին.
Նա շրջում էր դահլիճներում,
Ինչպես Child-Harold-ի շտաղբաղ,
Ո՛չ բամբասանք, ո՛չ թղթախաղ,
Ո՛չ ժպիտ, ո՛չ ակնկալում
Բնավ չէին ազդում նրան.
Զէր նկատում նա ոչ մի բան:

XXXIX. XL. XLI

XLII

Ո՛ւ պշրուհի՛ք մեծ աշխարհի,
 նախ և առաջ ձե՛զ լքեց նա.
 Եվ իրոք, մեր տարիների
 Բարձր տոնը ծանր է հիմա,
 Թեև կարող է ինչ-որ կին
 Քննել Սեյին ու Բենթամին⁷.
 Բայց նրանց խոսքն առհասարակ
 Անտանելի է ու դատարկ.
 Նրանք այնպե՛ս են անբասիր,
 Այնպե՛ս են վեհ, այնպե՛ս խոհեմ
 Եվ բարեպա՛շտ այնպես, վաե՛մ,
 Մանրակրկիտ և ուշադիր,
 Այնպե՛ս հպարտ, այնպե՛ս անհաս,
 Որ տեսնելիս սպլին կստանաս:

XLIII

Դուք, աղջիկնե՛ր ջահել, սիրուն,
 Որ ուշ պահին թեթև կառքով
 Արագ սուրում եք դեպի տուն
 Պետերբուրգի հարթ սալարկով,
 Իմ Եվգենին լքեց և ձեզ՝
 Վայելքներից դարձրած երես,
 Եվ փակվեց իր տանը մենակ.
 Պատրաստելով գրիչ, թանաք՝
 Գրել փորձեց, բայց նա տքնել
 Չէր ախորժում, և վերջը ի՞նչ.
 Նա յուր գրչով շերկնեց ոչինչ,
 Եվ չաջողվեց նրան ընկնել
 Գրողների կրքոտ մի թեմ,
 Որի մասին պիտի լռեմ:

XLIV

Անգործութեանը միշտ հլու,
Իր ամալի հոգուն գերի՝
Նորից նստեց յուրացնելու
Նա մտքերը ուրիշների:
Գրքեր շարեց իր դարակին:
Կարդաց, բայց ի՞նչ արդյունք—չնչին.
Սա ձանձրութիւն է, նա զառանցանք,
Սա խիղճ շունի, նա էլ՝ խոյանք,
Բոլորն ինչ-որ բեռ են մի մեծ:
Հինը արդեն հին է ու հին,
Նորն էլ հին է բրդում կրկին:
Ինչպես կանանց՝ գիրքն էլ թուկեց
Եւ գրքերը իրենց փոշով
Ծածկեց սգո մռայլ քողով:

XLV

Թոթափելով լուծը դաժան,
Նրա պես՝ սին կյանքից պաղած՝
Ես մոտեցա անժամ նրան,
Կարծես ինչ-որ հմայք գտած
Տենչերի մեջ նրան գերող,
Նրա վարքում՝ չկրկնող,
Նրա խելքում սուր և պաղած.
Նա մռայլ էր, ես՝ գաղազած.
Մեզ ծանոթ էր խաղը կրքի.
Կյանքն էր դարձել մեզ հոգս ու բեռ,
Սրտի հուրը մարել էր մեր,
Սպասում էր մեզ աշխարհքի
Եւ կույր բախտի քենը բաժին՝
Մեր կյանքի հենց այգաբային:

XLVI

Ու՛մ ապրեւել է ու մտածել,
 Նա չի կարող շատել մարդուն,
 Եւ նա, ու՛մ շատ է զգացել,
 Ծորտ է մի տեսիլքի արթուն.
 Նա չի գտնի խինդ անթերի,
 Նրան օձը իր հուշերի
 Եւ զղջումն է անվերջ կրծում.
 Եւ դա զրույցներին տրտում
 Հրապույր է տալիս հաճախ:
 Մի պահ Օնեգինի լեզուն
 Շփոթեցրեց ինձ, բայց իսկույն
 Ընտելացա վեճին խիզախ
 Եւ կիսամաղձ կատակներին,
 Էպիգրամի սուր խալթերին:

XLVII

Հաճախ գիշերն մեր ամառվա,
 Երբ լուսավոր է և հստակ
 Երկինքը նեւայի վրա,⁸
 Եւ հայելին ջրահատակ
 Զի ցոլացնում Դիանային,
 Վերհիշելով վեպերն մեր հին
 Եւ անց կացած սերը ծփուն՝
 Նորից անհագ և զգայուն
 Ըմպում էինք մենք բախտավոր
 Կես գիշերի շունչը դալար,
 Ինչպես բանտից կանաչ անտառ
 Փոխադրված կալանավոր.
 Թռչում էինք տենչով ալդպես
 Դեպի կյանքի ալգը մեր վես:

XLVIII

Հոգում՝ ամիսոսանքը անհուն,
 Հենոված սալին գրանիտի՝
 Եվգենին էր կանգնած խոհուն,
 Ինչպես կերպարը պովետի՝
 Լուռ էր շուրջը. գիշերային
 Պահակն էր սոսկ կանչում ժամին,
 Կամ թե կառքի ձայնն էր հեռվում
 Միլիոննայից հանկարծ լսվում.
 Մի նավակ էր թիագնաց
 Սահում դետի վրա ննջող,
 Եվ մի երգ ու եղջերավող
 Դյուբում էին գիշերակաց:
 Ավելի են անուշ սակայն
 Օկտավաները Տորկվատյան:

XLIX

Ադրիատիկ ջրեր ծփուն,
 Ո՛վ Բրենտա, ո՛չ, ձեզ կտեսնեմ
 Եվ ավյունով կրկին լեցուն՝
 Դյուբիչ ձեր ձայնն ես կլսեմ:
 Սուրբ է ձայնն այդ Ապոլոնի
 Թոռան համար, Ալբիոնի
 Սեզ քնարով՝ ինձ հարազատ:
 Կվայելեմ գիշերն, ազատ,
 Իտալիայում միշտ գրգածոր,
 Կողքիս՝ ջահել վենետուհին,
 Մերթ շատախոս ու մերթ լռին,
 Գոնդոլի մեջ խորհրդավոր.
 Նրա հետ ես հեշտ կխոսեմ
 Պետրարկայի լեզվով վսեմ:

Կդա՞ ժամն իմ ազատութեան:
 Ժամանակն է. զուր չեմ մնում
 Այս ծովի¹⁰ մոտ վազուց նրան
 Եվ նավերը դեպ ինձ կոչում:
 Ալիքների դեմ ըմբշելով,
 Արձակ ծովի հողմի թևով
 Ե՞րբ իմ ազատ չուն կսկսեմ.
 Չար տարերքի ափն այս դշխեմ
 Պետք է որ ես թողնեմ, այո՛,
 Եվ կեսօրին ջերմախորշակ,
 Աֆրիկայիս երկնքի տակ¹¹
 Կարոտ քաշեմ մռայլ Ռուսիո,
 Որտեղ տանջվել, որտեղ սիրել,
 Որտեղ իմ սիրտն եմ ես թաղել:

LI

Օնեգինն ուզում էր սրտով
 Ինձ հետ շրջել օտար կողմեր,
 Սակայն երկար ժամանակով
 Մեզ անջատեց շար բախտը մեր.
 Հայրը մեռավ հենց այդ պահին:
 Մեր եվդենուն պաշարեցին
 Մի գունդ պարտատերեր ազահ:
 Ամեն մարդու իր խելքն է շահ.
 Եվդենիս՝ դատ չսիրելով,
 Իր վիճակին հավան սրտանց,
 Հոր կալվածը զիջեց նրանց՝
 Կորուստը մեծ չդիտելով,
 Կամ զգալով արդեն հեռվից
 Իր ծեր քեռու մահն անձկալից:

Եվ ճիշտ, հանկարծ նա ստացավ
 Քեռու կառավարչից մի դիմ,
 Թե զգալով սա մահվան ցավ՝
 Ուզում է տալ հրաժեշտը իր:
 Կարգալով այդ բոլքն՝ անխափան
 Եվգենիս քեռու տեսության
 Շտապ դիմեց փոստի կառքով
 Եվ առաջուց հորանջելով՝
 Պատրաստվում էր, փողի սիրու,
 Հոգոց հանել, տխրել, ստել
 (Այդպես էլ վեսս եմ սկսել),
 Բայց հասնելով գյուղն իր քեռու՝
 Զգված գտավ նրա շոր դին,
 Պատրաստ՝ հանձնվելու հողին:

LHI

Տեսավ՝ բակը լի ծառաներ,
 Ժամանում են ամեն կողմից
 Թշնամիներ, բարեկամներ՝
 Թաղում սիրող կամ վշտակից:
 Ննջեցյալին լավ թաղեցին,
 Տերտեր, հյուրեր, կուշտ, խմեցին
 Եվ ցրվեցին գոհ, լրջատես,
 Մի մեծ դործ են արել կարծես:
 Օնեգինը ժառանգեց հող,
 Գործարաններ, կալված, ջրեր
 Ու անտառներ, առաջ մինչդեռ
 Վատնող էր և կարգի ոսոխ.
 Ուրախացավ, որ կյանքն իր հին
 Փոխվեց, մտավ այդ նոր ուղին:

Նա երկու օր տարվեց սիրով
 Լուռ արտերով առանձնակի,
 Անտառակի խաղաղ զովով
 Եվ կարկաչով մեղմ առվակի:
 Երբորդ օրը արտ ու անտառ
 Ոչինչ էին նրա համար
 Եվ նույնիսկ քուն բերին կարգին:
 Հետո տեսավ պարզ ու մեկին,
 Որ գյուղն էլ նույն ձանձրույթն ունի,
 Թեև չկան թղթախաղեր,
 Պարահանդես, պալատ, տաղեր:
 Մեղամաղձն էր նրան դժնի
 Հետապնդում ինչպես ստվեր,
 Եվ կամ ինչպես կիսն անձնվեր:

Սիրում եմ ես կյանքը խաղաղ
 Եվ գյուղական անդորրություն.
 Այնտեղ քնարն է աննվաղ,
 Եվ կենսախինդ՝ ամեն ավլուն:
 Տրված անմեղ զվարճանքի՝
 Շրջում եմ այս լիճն ամայի.
 Far niente-ն օրենքս է նոր.
 Արթնանում եմ ես ամեն օր՝
 Պատրաստ նազի, աղատության,
 Կարդում եմ քիչ, երկար քնում,
 Բեթևաթև փառք չեմ բռնում:
 Մի՞թե օրերն իմ աննման
 Անցյալում էլ չեմ ծախսել ես
 Ստվերի մեջ, անգործ այսպես:

LVI

Ծաղկո՜ւնք ու սե՛ր, ազատ ու վեա
 Արտե՛ր, ձերն եմ ամբողջ հոգով:
 Ինչ լավ է, որ տարբեր եմ ես
 Օնեգինից շատ-շատ բանով,
 Թե չէ ծաղրիչ մի ընթերցող
 Կամ մի ինչ-որ հրատարակող,
 Որ սարքում է լուսանք հոսուն,
 Կնույնացնի ինձ Եվգենուն,
 Կրկնելով միշտ աներես,
 Թե ես ինձ եմ նկարագրել,
 Ինչպես գոռ Բայրոնն էր արել:
 Անկարելի բան է կարծես,
 Որ պոետը ո՛չ թե իրեն,
 Ա՛յլ ուրիշի գծի պորտրեն:

LVII

Իդեալ նշեմ. ամեն պոետ
 Բարեկամ է տենչոտ սիրո:
 Շատ եմ տեսել երազ անհետ՝
 Անուշ դեմքեր. հոգուս ներքո
 Նբանց կերպարն եմ ես պահել.
 Մուսան նրանց կյանք է տվել:
 Անփույթ, երգել եմ ես աշղպես
 Լեոնակուլսին՝ իդեալն իմ վես,
 Եվ Սալգիրի նազ հարձերին:
 Այժմ հաճախ, բարեկամներ,
 Ուղղում եք ինձ այս հարցը ձեր.
 «Քնարդ ո՞ւմ է ողբում կրկին,
 Աղջիկների խանդոտ խմբում
 Որի՞ն ես քո երգը ձոնում:

LVIII

Ո՞ւմ հայացքն է ներշնչելով
Գորովաջերմ վարձատրել
Քո մտաղբաղ երգը բյուրթով.
Ո՞ւմ է տաղդ աստվածացրել»:
— Աստված վկա, և ո՛չ ոքի.
Խենթ տաղնապն իմ սիրո կրքի
Ես ապրել եմ ոչ խնդավետ:
Երանի՛, ով իր սիրո հետ
Ունի հանգեր. նա մի երկրորդ
Տենդ է ապրում պոետական,
Մեղմում սրտի ցավն իր դաժան՝
Պետրարկայի իբրև հետնորդ,
Եվ փառք բռնում իրեն համար.
Իսկ իմ սերը համր էր, հիմար:

LIX

Անցավ սերս, եկավ Մուսան,
Միտքս պարզվեց. ազատ կրկին՝
Դաշն եմ փնտրում ես դյուխական
Հնչյուններին, զգացման, խոհին:
Թեև դրոմ, բայց չեմ թախծում,
Եվ, մոռացման մեջ, չեմ դժում
Տաղերիս մոտ անավարտուն
Կնոջ ոտիկ, գլուխ սիրուն:
Պաղ մոխիրը չի բռնկի.
Տխուր եմ, բայց լալու անկար,
Կկորցնեմ շուտով իսպառ
Հոգուս մեջ հետքն էլ փոթորկի,
Այն ժամանակ ես կսկսեմ
Գրել քսանհինգ երգով պոետ:

Ես հերոսի անունն ընտրել
 Ծրագիր եմ կազմել կարգին.
 Մինչ այդ ավարտեցի գրել
 Վեպիս գլուխն այս առաջին:
 Ողջ խստությամբ ես կարդացի՝
 Հակասություն շատ դիտեցի,
 Բայց չեմ ուզում շտկել նորից.
 Ինչո՞ւ խույս տամ ես ցենզորից,
 Եվ թող բերքը իմ տփնության
 Լրագրողներին լինի կեր:
 Իմ նորածի՛ն երկ, առ թեև՛ր,
 Արագ թռի՛ր դեպի նեվան,
 Ինձ բե՛ր փառքի վարձատրություն՝
 Լուսանք, աղմուկ, թյուր մեկնություն:





ՊԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

O rus!

Hor.*

Ո՛վ Ռուսիա:

I



յուզն, ուր Եվգենին էր տրտմում,
Մի անկյուն էր հրապուրալից.
Պարզ հաճույք սիրողն իր սրտում
Գոհ կլիներ այնտեղ երկնից.
Առանձնացած կալվածատուն՝
Քամիներից զերծ օրն ի բուն.
Մոտը հնչուն, փոքրիկ մի գետ,
Հեռվում՝ ծաղկող խայտաբղետ
Ոսկի արտեր, արոտ, գյուղեր.
Մարգագետինն անծայրածիր
Շրջում էին հոտ ու նախիր.
Կար և մի մեծ ու լայնատվեր
Լքված աչգի, որ մտադբաղ
Դրիագների բույն էր չքնաղ:

II

Կառուցված էր ամրոցն այնպես,
 Ինչպես պահանջն է ամրոցի.
 Անշափ ամուր, խաղաղ ու վեհ՝
 Հին ճաշակով հույժ խելացի:
 Սենյակները՝ բարձր ու պայծառ,
 Ճոխ դահլիճում՝ մետաքս պատառ,
 Հախճասալով վառարաններ,
 Պատին՝ արքայապատկերներ:
 Այժմ այդ բոլորն ասվում է հին,
 Եվ չգիտեմ՝ ինչո՛ւ իրոք,
 Բայց բարեկամն իմ այն խելոք
 Չէր էլ խորհում դրա մասին.
 Նույն ձևով էր նա հորանջում
 Թե՛ նոր և թե՛ հին դահլիճում:

III

Նա բնակվեց այն սենյակում,
 Ուր քառասուն տարի քեռին
 Տնտեսուհու հետ էր կռվում
 Եվ ճանճ ճղմում պատուհանին:
 Պարզ էր կահը. զույգ պահարան,
 Կաղնի հատակ, բազմոց, սեղան:
 Բանաք չկար այնտեղ բնավ.
 Պահարանները բաց արավ,
 Մեկում գտավ մի ծախսացույց,
 Մեկում՝ խմիչքների մի ծով,
 Խնձորօղի սափորներով
 Եվ ութ թվի մի օրացույց:
 Ծերուկը միշտ շատ գործ ուներ
 Եվ չէր նայում ուրիշ գրքեր:

IV

Յանկանալով մենակ, տրտում
 Կլանքը դարձնել մի քիչ թեթև՝
 Օնեգինը իր կալվածքում
 Վճռեց հիմնել նոր կարգ ու ձև:
 Այդ իմաստունն անապատի
 Կոռի լուծը հին աղաթի
 Փոխարինեց հողատուրքով.
 Ճորտը դո՛հ էր ամբողջ հոգով,
 Բայց խիստ փքվեց իր կալվածում,
 Հարևանը հաշվանկատ՝
 Մեջը վնաս տեսնելով շատ,
 Մյուսը ժպտաց նենգացասում,
 Եվ ամենքն էլ նրան գտան
 Վտանգավոր, անտրամաբան:

V

Առաջ շատ էին հյուր գալիս,
 Բայց ետեի թափուր բազով
 Նա հյուրերից խույս էր տալիս
 Դոնի ընտիր հովատակով,
 Հենց որ հեռու ճամփից լսվեր
 Կառքի ձայնը միշտ հյուրաբեր.
 Ուստի, դժգոհ նրա բարքից,
 Շուտ պաղեցին հյուրերն այցից:
 «Մեր դրացին համբալ է, խենթ,
 Ֆարմասոն է. միայն լինի
 Մեծ բաժակով կարմիր գինի.
 Կանանց սառն է նայում և խեթ.
 Միշտ՝ ո՛չ, այո՛, միշտ՝ անբարի»
 Այս էր կարծիքն ընդհանուրի:

VI

Այդ ժամանակ իր գլուղն եկավ
 Եվս մի նոր կալվածատեր,
 Որը նույնպես տվեց անբավ
 Խոսակցության լուրջ առիթներ:
 Վլադիմիր Լենսկի էր կոչվում,
 Գյոտինգենցի էր իր հոգում,
 Սիրուն, բարձր ու թիկնավետ,
 Կանտին սիրող, անկեղծ պոետ:
 Գերմանիայից միգրտ, խառնակ,
 Նա գիտության բերեց բերքեր,
 Ազատամիտ ոգորումներ,
 Բոբբոք ոգի տարօրինակ,
 Միշտ խանդավառ զրույց ու ճառ,
 Սև խոպոպներ ուսերն ի վար:

VII

Պաղ, անառակ տիրող կյանքից
 Դեռ չթռչնած նրա հոգին
 Խինդ էր առնում ողջույններից
 Եվ կույսերից մեղմ, կաթոգին:
 Սրտով համբակ էր սիրելի,
 Եվ օբորող հույսերով լի:
 Նոր աշխարհի փայլ և աղմուկ
 Գերում էին խելքը մանուկ:
 Նա երազով իր ոսկեշող
 Կասկածներն էր սրտում փակում
 Եվ մեր կյանքի նպատակում
 Հանելուկ էր փնտրում դյուլթող,
 Նրա վրա ջարդում գլուխ,
 Հրաշքների սպասում կանուխ:

VIII

Վստահ էր, որ մի ջերմ հոգի
 Միանալու է իրեն հետ,
 Որ կարոտով սփռփռանքի
 Սպասում է իրեն հավետ.
 Ընկերները պատրաստ են միշտ
 Կրել իր տեղ շղթա ու վիշտ,
 Որ չի զգա նրանց ձեռքը դող,
 Երբ թշնամուն անեն խողխող,
 Որ կան բախտի ընտրյալ մարդիկ

IX

Վրդովմունք և կարեկցություն,
 Բարու սերը անմեղսական,
 Փառքի տանջանք, գորով, ավյուն.
 Փոթորկեցին շատ վաղ նրան:
 Երկար շրջեց իր քնարով.
 Շիլլերի, Գյոթեի հրով,
 Նրանց երկնի տակ, կաթոգին
 Բոցավառվեց նրա հոգին:
 Մուսաների արվեստը սեգ
 Նա չիջեցրեց դեպի արատ.
 Իր երգերում պահեց հպարտ
 Բարձր հույզեր ամենուրեք,
 Կույս տենչանքի սլացումներ,
 Վեհ պարզություն հմայարեր:

X

Սիրո հնազանդ՝ երգում էր սեր,
 Միշտ պարզ, ինչպես երազ մանկան,
 Ինչպես անշար կույսի տենչեր,
 Ինչպես երկնում անապական
 Հավետ շրջող խաղաղ լուսին՝
 Սիրո գաղտնյաց լուռ դիցուհին:
 Անջատում էր երգում, կարոտ,
 Մի ինչ-որ բան, հեռուն միգոտ,
 Կարմիր վարդերը ոռմանտիկ,
 Հեռու վայրերը այն լքած,
 Որտեղ թափել էր, լռակյաց,
 Արցունքը իր հատիկ-հատիկ:
 Կյանքի թռչնած թույրն էր երգում
 Հաղիվ տասնութ իր տարիքում:

XI

Անապատում այդ, ուր նրան
 Լոկ Եվգենին կգնահատեր,
 Նա դժգոհ էր իր հարեան
 Աղաներից խրախճասեր
 Եվ նրանցից խույս էր տալիս,
 Ատում ճառեր ու ասուլիս
 Շան, խոտհարքի, գինու և սին
 Յեղ ու պատվի, տոհմի մասին:
 Այդ ճառերում ո՛չ զգացմունք,
 Ո՛չ կրակ կար պոետական,
 Ո՛չ արվեստ հանրակեցության,
 Ո՛չ սուր մի խոսք, ո՛չ միտք, խոկմունք.
 Իսկ զրույցը կանանց, իրոք,
 Շատ ավելի քիչ էր խելոք:

XII

Գեղեցիկ ու հարուստ Լենսկին
 Լավ փեսացվի ունեւ համբաւ.
 Ամեն մեկը ծեսով մեր հին
 Իր աղջկան մտքում կանխաւ
 Տալիս էր այդ կես-ուսա մարդուն:
 Ուր այցի գար, այնտեղ իսկույն
 Այն էր նյութը զրուցների,
 Թե տխուր է կյանքն ամուրի:
 Նրան կանչել են թեյի հյուր,
 Թեյ է լեցնում ջահել Դոմնյան,
 Հուշում են՝ «Դոմնյա, մտի՛կ տուր»:
 Մեջ է բերվում և գիթարան.
 Դոմնյան ճղղում է (տե՛ր աստված)
 Արի դոյակն իմ ոսկեմաժ¹²....

XIII

Բայց Լենսկին, որ շունեւ ձգտում
 Դեպի կապանքն ամուսնության,
 Եվզենու հետ շատ էր ուզում
 Կռել դաշինք ծանոթության:
 Մտերմացան. քար և փրփուր,
 Արձակ ու տաղ, սառույց ու հուր
 Այդքան իրար չեն հակառակ:
 Նախ լինելով իրար ներհակ՝
 Նրանք զգում էին ձաճրույթ,
 Հետո իրար քիչ-քիչ վարժվում,
 Ամենայն օր ձիով շրջում.
 Մտերմացան այդպես շատ շուտ:
 Քիչ չէ, որ մարդ (նույնպես և ես)
 Մտերմանում է հենց այնպես:

XIV

Բայց այդ կայան էլ չկա մեզնում.
 Քանդելով հին սովորությունը՝
 Բոլորին զերո ենք դիտում
 Եվ մեզ միայն՝ միավորներ:
 Ամեն մեկս՝ մի նապուեռն,
 Մենք այս մարդկանց բազմամիլիոն
 Արել ենք մեզ համար գործիք
 Եվ հույզը՝ ծաղր ու խաղալիք:
 Եվգենին այլ կերպ էր, սակայն.
 Թեև մարդկանց նա ճանաչում
 Եվ ատում էր հոգու խորքում,
 Բայց կանոնը չէ անխափան,
 Մեծարում էր նա մերթ ոմանց,
 Նույնիսկ հարգում հույզեր սրտանց:

XV

Նա լսում էր Լենսկուն՝ ժպտուն.
 Պոետական զրույցը վառ,
 Խելքն ու դատումը երերուն
 Եվ հայացքը միշտ խանդավառ.
 Օնեգինին թվում էր նոր:
 Եվ սառեցնող խոսքերն իր շոր
 Ճզնում էր նա շարտասանել,
 Խորհում՝ չպետք է խանդարել
 Սրա խինդը բոպենների,
 Առանց այդ էլ ժամը կգա,
 Թող առայժմ ապրի, զգա,
 Թե աշխարհքն է մեր անթերի.
 Զահելությանը չէ հանցանք
 Զահել հուրը և զառանցանք:

XVI

Ամեն հարց նյութ էր վեճերի,
 Խթանում էր միտքը նրանց.
 Դաշինքները հին ցեղերի,
 Չար ու բարի, գիտություն, գանձ,
 Նախապաշար մտքերն ունայն,
 Ճակատագիր, գաղտնիք մահվան
 Եվ բախտ ու կյանք իրենց հերթին
 Նրանց դատի նյութերն էին:
 Եվ պոետը, տենդում խոկի,
 Հատվածներ էր կարդում նորից
 Հյուսիսային պոեմներից,
 Իսկ Եվգենին, ներող ոգի,
 Թեև հաճախ չէր հասկանում,
 Բայց սիրով էր ականջ դնում:

XVII

Կրքի հարցերն էին հաճախ
 Հուզում մեր զույգ ճգնաժողովին.
 Լքած սիրո լուծ ու բաբախ՝
 Օնեգինը նրանց մասին
 Խոսում էր միշտ պաղ հառաչով:
 Լավ է, երբ մարդ ճաշակելով՝
 Շուտ է սիրո հույզից սառել,
 Եվ մանավանդ՝ ով չի սիրել,
 Ով խեղդել է սերն անձկությամբ,
 Թշնամանքը՝ խոսքով ցասկոտ,
 Բարեկամի և կնոջ մոտ
 Հորանջել է միշտ սառնությամբ,
 Ով կապիտալն իր հայրենի
 Չի վստահել տուգին գծնի:

XVIII

Երբ մեր տեղն ենք կանգնում խոհեմ
 Մեծ լուսնյան դրոշի ներքո,
 Մարում է կիրքն արփիաճեմ,
 Մեզ թվում են ծաղր ու անդո
 Սիրո ցուքերը քմահաճ,
 Ուշ հակումները բարեհաճ,
 Մենք, հեզ դարձած ինքնասատմամբ,
 Ունկնդրում ենք հոժարությամբ
 Ուրիշների լեզվին կրքոտ,
 Եվ շարժում է նա սիրտը մեր.
 Ճիշտ, ինչպես մի հաշմանդամ ծեր
 Զահեկների խոսքը տենդոտ
 Սիրում է միշտ լսել կրկին,
 Գամված անփայլ իր խրճիթին:

XIX

Զահելությունն էլ վարվուռն
 Հո չի կարող ոչինչ պահել.
 Խնդում, վիշտ, սեր, թշնամություն
 Նա պատրաստ է իսկույն հայտնել:
 Իբրև սիրո մի հաշմանդամ՝
 Եվզենին լուրջ, բարյացակամ
 Լսում էր, թե պոետն ինչպես
 Գաղտնիքներն է բացում իր վեպ՝
 Մերկացնելով անկեղծորեն
 Նրա առաջ իր սիրտը ողջ.
 Եվ Եվզենին գիտեր ամբողջ
 Նրա սիրո պատումն արդեն՝
 Զերմ հույզերով հարուստ մի վեպ,
 Որ մեզ համար չէ հազվադեպ:

Ա՛խ, նա սիրում էր դեռ այնպես,
 Ինչպես էլ չեն սիրում մեզնում,
 Ինչպես պոետն երազատես
 Դեռ կարող է սիրել՝ հոգում.
 Ամեն տեղ նույն կարոտը միշտ,
 Սովորական դարձած մի վիշտ,
 Սովորական նույն ցանկություն:
 Ո՛չ սառեցնող հեռուություն,
 Ո՛չ մուսային տրված ժամեր,
 Ո՛չ անջատում երկարամյա,
 Ո՛չ հմայքներ օտարերկրյա,
 Ո՛չ խինդ, անմուկ, գիտություններ
 Չէին փոխել նրա հոգին՝
 Սիրո հրով ջերմ, կաթոգին:

XXI

Իր Օլգայով մանկութ տարված,
 Դեռ անծանոթ սիրո վշտին,
 Նա վկա էր ոգևորված՝
 Նրա անմեղ զբաղմունքներին,
 Եվ անտառում սովերալից
 Նրա խաղին միշտ մասնակից.
 Նրանց հայրերը հարևան
 Օրհնում էին լավ ապագան:
 Դյուղում, խաղաղ հովանու տակ,
 Ծնողների աչքի առջև,
 Անմեղ թովով իր ակներև,
 Փթթեց աղջիկն այդ անապակ
 Ինչպես շուշան՝ խոտում ծփուն,
 Թիթեռնիկից, մեղվից թաքուն:

XXII

Մեր պոետին նա նվիրեց
 Սիրո երազը առաջին,
 Եվ սրնգից հառաչ կորզեց
 Սոսկ վերհուշը նրա մասին:
 Ոսկի՝ խաղեր, մնա՛ք բարե,
 Անտառ սիրեց նա թանձրաթե,
 Մենությունը խաղաղ, լռին,
 Եվ գիշերներ, աստղունք, լուսին՝
 Գիշերային կանթեղն անհոգ,
 Որին բերել ենք մենք նվեր,
 Իրիկնային շատ զբոսանքներ,
 Թաքուն արցունք վշտաամոք.
 Իսկ այժմ արդեն նա մեզ համար
 Մի լապտեր է սոսկ լուսարար:

XXIII

Միշտ համեստ էր աղջիկն այդ հեզ,
 Զվարթ, ինչպես այգը լույսի.
 Պարզ՝ պոետի կյանքը ինչպես,
 Անուշ, որպես համբույր կույսի.
 Երկնի ցռվքով կապույտ աչեր,
 Քնքույշ ժպիտ, վուշ խոպոպներ,
 Զայնիկ, իրան, կեցվածք ճկուն՝
 Բոլորն ուներ Օլգան սիրուն:
 Բայց կգտնեք ամեն վեպում
 Նրա նկարն այդ դուրեկան,
 Որ սիրել եմ ես էլ, սակայն
 Այժմ ինձ ձանձրույթ է նա բերում:
 Արդ թո՛ւյլ տվեք դուք ինձ, խնդրեմ,
 Որ ես ավագ քրոջն անցնեմ:

XXIV

Տատյանա էր քույրը կոչվում¹³...
 Այս անունն առաջին անգամ
 Վիպագրության նուրբ էջերում
 Սրբագործում ենք ինքնակամ:
 Ի՞նչ կա. հնչեղ է, դուրեկան,
 Թեև դրան մենք անբաժան
 Կապում ենք միշտ հուշեր հնի
 Կամ սպասուհու: Հարկ կլինի
 Խոստովանել, որ մենք իրավ
 Անունների ճաշակ չունենք
 (Տաղերը դեռ մի կողմ թողնենք):
 Կրթությունը մեզ չկապվ,
 Մեզ նրանից հասավ մի քիչ
 Սեթևեթանք, ուրիշ ոչինչ:

XXV

Եվ արդ, Տատյանա էր կոչվում.
 Ոչ իր քրոջ գեղեցկությամբ
 Մարդկանց աչքին էր սա ընկնում.
 Ոչ էլ նրա ալ թարմությամբ:
 Թախծոտ էր սա, լուռ ու վայրի, —
 Վախկոտ, ինչպես վիթն անտառի,
 Ընտանիքում իր հոգատար
 Զգում էր միշտ իրեն օտար.
 Սրա սիրտը չէին շարժում
 Ծնողների շոյանք ու սեր,
 Մանկանց հետ, երբ մանուկ էր դեռ,
 Ցատկել, խաղալ չէր ախորժում,
 Հաճախ ամբողջ օրով տրտում
 Պատուհանի մոտ էր նստում:

XXVI

Խոհուն լինելն արդեն նրան
 Մտերիմ էր օրորոցից՝
 Զարդարելով միշտ ձանձրության
 Հոսքը տենչով երազալից.
 Ասեղ չէին առել նրբին
 Մատներն, թեքված իր քարզահին՝
 Նա կտավին շունչ չէր տվել
 Զարդարանքով մետաքսաթել:
 Տեսե՛ք ահա իշխման հակում.
 Մանուկն իր հեզ, լուռ տիկնիկով
 Արդեն վարժվում է կատակով
 Բռնելու իր տեղը կյանքում՝
 Լրջմիտ դասեր տալով նրան
 Իր մայրիկին հար և նման:

XXVII

Տատյանան չէր սիրում պահել
 Տիկնիկ՝ նույնիսկ այդ հասակում.
 Մոզաներից նրան պատմել,
 Կամ թե՛ ինչ լուր կա քաղաքում:
 Չուներ մանկան շարություններ,
 Բայց զարդանդոզ պատմություններ
 Զմեռվա մութ գիշերներին
 Մոտ էր դրում նա իր սրտին:
 Երբ դայակի շուրջն էր խմբվում
 Օլգայի հետ, մարդում մոտիկ,
 Ընկերների խումբը փոքրիկ,
 Տանյան խաղին չէր մասնակցում.
 Նա խորշում էր զիլ ծիծաղից,
 Թեթևամիտ խինդ ու խաղից:

XXVIII

Նա սիրում էր պատշգամբում
Դիտել ծագումն արշալույսի,
Երբ աստղերը գունատ երկնում
Չքանում են ցութից լույսի,
Երկրին դիպչում արվիու շողեր,
Փչում հովը վաղորդաբեր
Եվ բացվում է օրը դանդաղ:
Ձմռան գիշերն, երբ որ խաղաղ
Կես աշխարհն է դեռ ստվերում
Եվ լուծյան մեջ շատ երկար,
Լուսնի ներքո կիսախավար,
Ծուլլ արևելքն է մեղկ նիրհում,
Տանյան մահճից սովոր ժամին
Վեր էր կենում՝ մոմը ձեռքին:

XXIX

Նրան վեպերն վաղ դուր եկան՝
Բռնելով տեղն ամեն բանի.
Սիրտը տվեց խաբեության
Ռուսոյի և Ռիչարդսոնի:
Նրա հայրը անցյալ դարի
Մի ուշացած մարդ էր բարի,
Սակայն գրքից չէր վախենում.
Նա ինքը գիրք չէր էլ կարդում,
Խաղալիք էր համարում այն,
Ուստի բնավ իսկ հոգս չուներ,
Թե ի՞նչ հատոր է իր դասեր
Բարձի տակին մինչ վաղորդայն:
Նրա կրնն էլ արդեն ինքնին
Խենթ սիրում էր Ռիչարդսոնին:

XXX

Նա սիրում էր Ռիչարդսոնին
 Ո՛չ թե իբրև ծանոթ, գրքից,
 Կամ թե, ասենք, Գրանդիսոնին
 Բարձր էր դասում նա Լովլասից.¹⁴
 Ո՛չ. Ալինա իշխանուհին՝
 Մոսկովյան ազգականն իր հին
 Առաջ շատ էր գովել դրանց:
 Ինքը նոր էր դեռ նշանված,
 Բայց ակամա և լռելյայն
 Մի ուրիշի ունեւր կարոտ,
 Որն իր խելքով, սրտով կրակոտ
 Ավելի էր դյուրում նրան:
 Գրանդիսոնն այս, թղթին մոլի,
 Ձրանտ էր, սերժանտ գվարդիայի:

XXXI

Սա հագնում էր նրա պես միշտ՝
 Նոր մոդայով և սաղական:
 Բայց աղքեկան՝ տալով մեծ վիշտ,
 Պսակելու շուտով տարան:
 Խելոք ամուսինը նրան,
 Իբրև վիշտը մեղմող դարման՝
 Տարավ գյուղ, ուր նա, դեռատի,
 Ինչ մարդկանց մեջ՝ աստված գիտի,
 Նախ՝ ցույց տվեց մեծ վիշտ ու ցավ,
 Քիչ էր մնում թողնել մարդուն.
 Հետո՝ սիրեց տնտեսություն,
 Վարժվեց կյանքին ու գոհ դարձավ:
 Վարժվել երկնից է մեզ կարգված,
 Բախտի տեղ է նա մեզ տրված:¹⁵

Անհաղթելի վիշտը իր ծով
 Սովորույթով նա քաղցրացրեց,
 Եվ մի մեծ դյուտ նրան շուտով
 Միանգամայն մխիթարեց:
 Նա դործի մեջ և կիսարթուն
 Հնար գտավ, թե իր մարդուն
 Ինչպես իշխի միշտ ինքնակամ,
 Եվ լավ գնաց դործը այնժամ:
 Աշխատանքին ինքն էր հսկում,
 Թթու դնում սունկը տարվա,
 Բաղնիքն անում շաբաթ օրվա,
 Ծախսերն անում, ճակատ խուզում.
 Սպասուհուն էր ծեծում անվախ,
 Եվ ամուսնուց միշտ էլ անկախ:

XXXIII

Ջերմ տաղեր էր առաջ գրում
 Ալբոմներում օրիորդական,
 Պրասկովյին Պոլինա կոչում
 Եվ խոսում էր երգանման,
 Կասյում շատ նեղ իրանակալ,
 Եվ ուսերեն H-ն անսխալ
 Ֆրանսացու պես հնչում քթով:
 Բայց ամեն ինչ փոխվեց շուտով.
 Ալբոմ, իրանակալ, Պոլինա,
 Ջերմ տաղերի տետրեր կորան.
 Այժմ Ակուլկա կոչեց նրան,
 Ում ճիշտ անունն էր Սելինա,
 Եվ մեջ բերեց բամբակադիր
 Տաքուկ խալաթ ու գլխադիր:

XXXIV

Մարդը շատ էր սիրում նրան,
 Եվ գործերին չէր խառնվում,
 Վստահում անփութ, անսահման,
 Խալաթ հագած ուտում, խմում:
 Գլորվում էր կյանքը խաղաղ.
 Երեկոյան, կամ թե քիչ վաղ
 Ընտանիքով բարեհամբույր
 Դրացիք են գալիս մերթ հյուր,
 Դարդեր պատմում, չարախոսում,
 Հիշում ծիծաղելի բաներ.
 Ժամն է անցնում, և Օլգան դեռ
 Թեյ ուղեւուն է սպասում.
 Հետո ընթրիք՝ պետք է քնե՛ն.
 Եվ մեկնում են հյուրերն արդեն:

XXXV

Նրանք իրենց կյանքում խաղաղ
 Պահում էին հին լավ ծեսեր,
 Բարեկենդաններին ուրախ
 Թխում ոռոսաց անուշ բլիններ,
 Պահում երկու պասը տարին,
 Սիրում աշխույժ, Ժիր ճլորթին,
 Նրզախումք և երգերը թով:
 Հիաներյակին, երբ հորանջով
 Պատարագ են լսում մարդիկ,
 Նրանք, սրտում հեզ զգացմունք,
 Թափում էին երկու արցունք:
 Կվասը սիրում էին սաստիկ,
 Եվ հյուրերին ճաշն անպայման
 Մատուցում ըստ նրանց կոչման:

XXXVI

Մեղմ ծերացան նրանք այսպես.
 Բայց ամուսնու առաջ բացվեց
 Դադաղի դուռն իր վերջապես,
 Եվ նոր պսակ նա ընդունեց:
 Մեռավ նա հենց ճաշի ժամին՝
 Լացացնելով հարևանին,
 Իր դուստրերին և նվիրված
 Իր կնոջը՝ անկեղծ խոցված:
 Լավ մարդ էր նա, բարի, հստակ.
 Եվ, ուր աճյունն է արդ նրա,
 Գիր կա շիրմաքարի վրա.
 Խաղաղ հանգչի սույն փարի տակ
 Դմիտրի Լարին, բրիգադավոր,
 Տիրոջ ծառան, տրուպ, մեղավոր:

XXXVII

Գալով երկիրն իր հայրենի՝
 Վլադիմիր Լենսկին այցելեց
 Հուշարձանը հարևանի
 Եվ աճյունին հառաչ ձոնեց:
 Ճմլվում էր սիրտը երկար.
 «Poor Yorick!» — կանչեց վշտահար,
 — Ինչքա՛ն է ինձ գրկում շոյել,
 Եվ ինչքա՛ն եմ ես փայփայել
 Կրծքի մեղալն օջակովյան:
 Խոստանում էր ինձ Օլգային,
 Ասում՝ հասնեմ մի այդ օրին...»
 Եվ լի վշտով անկեղծության՝
 Վլադիմիրը անակնկալ
 Դրոշմեց քարին մի մադրիգալ:

XXXVIII

Հենց այնտեղ էլ արտասովոր,
 Վշտոտ գրով ափսոսանքի
 Հարգեց աճյունն իր մոր և հոր:
 Ավա՛ղ, աղոսներում կյանքի,
 Նախախնամ դադտնի կամքով,
 Սերունդները շտապ հունձքով
 Ծլում, հասնում են և ընկնում.
 Ուրիշներն են տեղը բռնում...
 Այսպես թեթև ցեղը այս մեր
 Աճում, հուզվում, ես է գալիս,
 Պապերին է հողին տալիս:
 Կդա, կդա ժամը և մեր,
 Եվ մեր թողներն էլ ապաքեն
 Մեզ աշխարհից դուրս կմղեն:

XXXIX

Ըմբռնանցի՛ք դուք առժամայն՝
 Թեթև կյանքն այս, բարեկամնե՛ր.
 Ինքս քիչ եմ կապված նրան,
 Գիտեմ՝ սին է և սնաբեր:
 Ուրվականներ ես չեմ դիտում,
 Բայց հեռավոր հույս եմ միտում
 Եվ շոյվում եմ երբեմնակի.
 Առանց ինչ-որ աննիշ հետքի
 Կյանք թողնելը ինձ վիշտ կտար:
 Փառքի համար չեմ դբում ես,
 Բայց կուզեի ես էլ, կարծես,
 Որ սև բախտն իմ հայտնի դառնար,
 Որ իմ հուշը պահեր խոսուն,
 Ինձ հիշեցներ գեթ մեկ հնչյուն:

Նա կշարժեր մի սիրտ գոնե,
 Նվ մնալով ձեռքին բախտի՝
 Լեռայում չէր կորչի անէ
 Իմ հորինած տունը երկի:
 Գուցե (հույս է դա իմ սրտին)
 Հոչակ հանած իմ պատկերին
 Մատ մեկնի մի գալիք տգետ,
 Ասելով՝ ա՛յ, սա էր սրտետ:
 Արդ երախտիքն իմ ընդունի՛ր,
 Մուսաների ո՛վ սիրահար,
 Որ մտքումդ պիտի անմար
 Պահես երկերն իմ դյուրաթիռ
 Նվ ձեռքովդ անդամաճան
 Շոյես դափնին իմ ծերության:



ԵՐՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ

Elle était fille, elle était amoureuse.
Malfilâtre.

Նա աղջիկ էր, նա սիրահարված էր:
Մալֆիլատր

Ս

I

յդ ո՛ւր, պոե՛տ իմ պատվական».
— Օնե՛գին, ես տեղ եմ գնում.
«Քեզ չեմ բռնի: Կասե՞ս սակայն՝
Երեկոներն ուր ես լինում»:
— Լարինենց մոտ:— «Ա՛յ թե գտար,
Բայց ձանձրալի չէ՞ քեզ համար
Երեկոներն այդպես վատնել»:
— Բնա՛վ:— «Հեշտ չէ գլուխ հանել.
Հեռա՛լից գիտեմ՝ ինչ կա այնտեղ.
Նախ (թե ճի՛շտ է, տուր հավաստիք)՝
Պարզ ու առական մի ընտանիք,
Հյուրի հանդեպ միշտ անսրտնեղ,
Մուրաբաներ, զրույց ու ճառ,
Նյութն էլ՝ անձրև, վուշ կամ տավար...»

II

— Ի՞նչ կա այդտեղ վատ, արդարեւ,
«Չանձրույթ, ահա վատը, հոգի՛ս».
— Վատը ձեր կյանքն է նորածն.
Օջախը մոտ է միշտ սրտիս,
Այնտեղ... — «Էկոգադ մի՛ բանա,
Բայ է, Լե՛նսկի: Պետք է՝ դնա՛:
Յավուժ հմ շատ: Կա՛ց. չի՞ լինի
Ֆիլիդայիդ առաքինի
Տեսնել, որ այժմ իշխում է ողջ
Մտքիդ, գրչիդ, հանգիդ վրա,
Արցունքներիդ et cetera.
Տա՛ր ինձ այնտեղ» — Հեգնո՞ւմ ես: — «Ո՛չ»
— Շատ լավ: — «Բայց ե՛րբ»: — Հիմա կուզե՞ս:
Նրանք սիրով կընդունեն մեզ:

III

Գնա՛նք: — Ընկերները թռան,
Եկան: Առատ ձեռքով նրանց,
Ըստ վաղեմի սովորության,
Պատիվ տվին այնտեղ սրտանց:
Ասպնջական ծեսն այս է դեռ՝
Պնակներով մուրաբաներ.
Մոմած կժում հապանասի
Օշարակն էլ չի պակասի:

.
.
.
.
.
.

IV

Ամենակարճ ճամփով կրկին
 Նրանք շտապ թռչում են տուն.¹⁷
 Եկեք մենք էլ հերոսներին
 Ականջ դնենք հիմա թաքուն.
 — Օնե'դին, դու հորանջ ունես:
 — «Միշտ էլ նույնն եմ»: — «Բայց դու,
 կարծես,

Տրտում ես շատ: — Ո՛չ, չեմ փոխվել:
 Սակայն դաշտին մութն է փովել.
 Դե՛, Անդրյուշկա, արա՛դ քշիր.
 Հիմար վայրեր են հազվադեպ:
 Հա՛, Լարինան, ասեմ ի դեպ,
 Լավ պառավ է, պարզ, սիրալիր:
 Վախենում եմ՝ հապանասի
 Այն խմիչքն ինձ քիչ վնասի:

V

Տանյան ո՞րն էր, ասա՛ սակայն»: —
 — Նա, որ մտավ տրտում սուսիկ,
 Սվետլանային այնքան նման,
 Պատուհանին նստեց մոտիկ:
 «Բա՛հ, կրտսե՞րն է քո սիրուհին»:
 Ի՞նչ կա: — «Ես կընտրեի մյուսին,
 Թե որ պոետ ես լինեի:
 Անկյանք է դեմքն այդ Օլգայի.
 Տիրամայր է նա վանդիկյան,
 Կարմրավուն, կտրերես,
 Ինչպես հիմար լուսինն է, տե՛ս,
 Հիմար երկնում այս իրիկվան»:
 Լենսկին սառը պատասխանեց
 Եվ էլ ճամփին ձայն չհանեց:

VI

Օնեգինի աչքը իսկույն
 Լարինենց տանն առաջ բերեց
 Տպալոբրիչ ազդեցութուն,
 Դրկիցներին էլ զբաղեցրեց:
 Եղան շատ ենթադրութիւններ,
 Հայտնում էին տարբեր մտքեր,
 Պնդում հաստատ ու եռանդուն՝
 Տանյան գտաւ իր փեսացուն:
 Նույնիսկ եղան հաւաստումներ,
 Թե պսակը հտ է ձգվել
 Այն պատճառով, որ չեն գտել
 Նոր մողայի մատանիներ:
 Լենսկու հարսանիքի համար
 Արդեն վաղուց կասկած չկար:

VII

Բամբասանքներն այդ փուլ ու սին
 Տանյան լսում էր զզվանքով,
 Բայց թաքուն ինքն էլ այդ մասին
 Մտածում էր մութ բերկրանքով:
 Նրա սրտին մի միտք տիրեց.
 Հասել էր ժամն ու նա սիրեց:
 Այդպէս սերմն է հողի ծոցում
 Գարնան հրով կյանքի կոչվում:
 Նրա տենչը վաղուց ի վեր
 Տխուր աչրվում էր գրգանքում՝
 Այդ սննդին միշտ կարոտում,
 Սրտի ցաւին էր, ինչպէս մի բեռ,
 Ճնշում ջահել կուրծքն աղջկա,
 Հոգին մնում.... որ մեկը դա,

VIII

Եվ նա եկաւ: Տանջան սթափւեց,
 Ասաց՝ սա է, սա անառարկ:
 Ավաղ, հիմա ցերեկը մեծ
 Եվ մենության երազը բարկ
 Նրանով է լի. ամեն ինչ
 Կախարդական ուժով աննինջ
 Նրա անունն է ներշնչում.
 Չանձրալի են այժմ հնչում
 Նույնիսկ խոսքերն փաղաքշական:
 Մեղամաղձում սուղված խորին՝
 Նա չի լսում էլ հյուրերին,
 Անիծում է ժամանցն ունայն,
 Նրանց անկոշ այցը թեթև
 Եվ նստելը երկարատև:

IX

Ինչպե՞ս է այժմ ուշի ուշով
 Կարդում վեպերը մեղկածին,
 Ի՞նչ կենդանի հիացումով
 Գայթակղութունն ըմպում այդ սին:
 Տենչի ուժով երջանկաբեր
 Հոգի ու շունչ առած դեմքեր՝
 Յուլիայի սիրած Վոլմար,
 Մալեկ—Ադել և դե Լինար,
 Եվ նահատակ Վերթեր խռով,
 Եվ Գրանդիսոն անօրինակ¹⁸,
 Որ քնեցնում է մեզ համակ,
 Կուլսի համար երազաթով
 Մեկ կերպար են այժմ առել,
 Բոլորն Օնեգին են դառել:

X

Իրեն երեւակայելով
 Կլարիսա կամ Յուլյա, Դելֆին,
 Եւ ապրելով նրանց շնչով՝
 Տանյան անտառներում լռին
 Վտանգավոր գրքով շրջում,
 Նրա մեջ է փնտրում, գտնում
 Գաղտնի տենդն ու տենչերը յուր,
 Սրտի բերքը կենսապիյուն,
 Հառաչում և տեր կանգնելով
 Ուրիշների խինդ ու հոգսին՝
 Վերացման մեջ իր հերոսին
 Նամակ հուշում ջերմագորով:
 Բայց մեր հերոսն, ով էլ լինի,
 Դրանդիստնր չէ անվանի:

XI

Լուրջ հանդ տալով յուր սեզ ոճին՝
 Հին գրողը գորովահուշ
 Կերպարում էր յուր հերոսին
 Կատարյալի իբրեւ նմուշ:
 Նա տիպարին իր սիրական՝
 Միշտ անտեղի հալածական,
 Շնորհում էր խելք, զգոն հոգի
 Եւ գրավիչ գծեր դեմքի:
 Տարված կրքով հստակ ու վեռ,
 Այդ հերոսը պատրաստ էր միշտ
 Զոհելու յուր կյանքը անվիշտ:
 Եւ վերջանում էր նյութն աշակես.
 Միշտ արատն էր պատիժ ստանում
 Բարին՝ պատշաճ պոսկ գտնում:

XII

Իսկ այժմ իշխում է մեզ մշուշ,
 Չանձրանում ենք մենք մորալից,
 Վեպում էլ է արատն անուշ,
 Միշտ հազթող ու շոնդալից,
 Բրիտյան մուսան ստով իր սին
 Կույսի քունն է հուզում կարգին.
 Նրա կուռքն են այժմ անխտիր
 Կամ մտքերով տարված Վամսիր,
 Կամ Մեկմոտ՝ մռայլ թափառող,
 Շրջիկ հրեա կամ թե Կորսար
 Եվ կամ խորհրդավոր Սբողար:¹⁹
 Կորդ Բայրոնը հեշտ ու հաշող
 Պճնեց ռոմանտիզմով վհատ
 Եվ էգոիզմը հուսահատ:

XIII

Ի՞նչ կտ այդտեղ իմաստալից:
 Ա՛յ, թե երկինքն ինձ տա պարզե,
 Որ ձեռք քաշեմ չափածոյից,
 Եվ բնակվի մեջս նոր դե,
 Ընդդեմ Թերյան հոխորտանքին,
 Նվիրեմ ինձ հեզ արձակին,
 Չեզ կպատմեմ ես հին մի վեպ
 Զվարթ մայրամուտիս հանդեպ:
 Չարագործի խոր տանջանքի
 Պատկերը չեմ դժի ահեղ,
 Այլ կպատմեմ ես պարզ այնտեղ
 Խորհուրդը ռուս ընտանիքի,
 Սիրո տենչերը թովչական
 Եվ բարբը մեր հնադարյան:

XIV

Կալատմեմ հոր, ծեր մորեղբոր
 Պարզ գրույցներ հաճախակի,
 Որդոց հանդիպումներ սովոր
 Հին լորձ մոտ կամ առվակի,
 Դժբախտ խանդի տանջաշարան,
 Եվ անջատում, արցունք ներման.
 Կգժտեցնեմ և վերջապես
 Նրանց պսակ կտանեմ ես:
 Կհիշեմ ջերմ գրգահառաչ,
 Թախծող սիրո խոսքեր բաղում,
 Որ անց կացրած այն օրերում
 Իմ սիրուհու ոտքի առաջ
 Հուշում էր իմ շուրթն ահամա,
 Որոնց անվարժ եմ ես հիմա:

XV

Ո՛հ, Տատյա՛նա իմ սիրելի,
 Քեզ հետ լալիս եմ ջերմորեն,
 Դու նորածն բռնակալի
 Ձեռքն ես տվել բախտդ արդեն:
 Կկորչես, խեղճ, բայց մինչև այդ
 Դու հույսերով քո շլացայտ
 Մութ երանությունն ես կանչում,
 Կյանքի գրգանքն ես ճանաչում,
 Ըմպում դերիչ թույնն իղձերի.
 Անուրջներն են քեզ հալածում,
 Ամենուրեք վայր ես կարծում
 Երջանիկ հանդիպումների,
 Դեմդ ամեն տեղ անխափան
 Քո փորձիչն է օրհասական:

XVI

Տանյան սիրո թախծից մղված՝
 Պարտեզ իջաւ տխուր, ալլալլ:
 Հանկարծ աչքը կախում է ցած
 Եւ ծուլանում անել մի քալլ:
 Ելնում է կուրծքն, այտին ասես
 Բոց է պատում վայրկենապես,
 Շուրթին մարում շունչը դալուկ,
 Աչքի մեջ՝ փալլ, գլխում աղմուկ...
 Գիշերն իջաւ, լուսինն արթուն
 Դետքի ելաւ երկնակամար,
 Սոխակն այգում միգապարար
 Ծոր տվեց իր տաղին հնչուն.
 Անքուն Տանյան մթնում կրկին
 Ուղղում է խոսքն իր դայակին.

XVII

«Ես քուն չունեմ, օդն է խեղդուկ,
 Բա՛ց պատուհանն ու մո՛տ նստիր»:
 — Ի՞նչ կա, Տա՛նյա:—«Թախիծ, տաղտուկ.
 Դայա՛կ, ինձ մի հին բան պամի՛ր»:
 — Բայց ի՞նչ, Տա՛նյա: Վաղ ժամանակ
 Պահում էի մտքումս հստակ
 Շատ հին բաներ, թե՛ ճիշտ, թե՛ սին,
 Չարքի, դեի, կույսի մասին:
 Չունեմ էլ միտքն իմ երբեմնի.
 Մոռացել եմ բոլորն էլ: Հա՛,
 Վատ օրերս են հասել ահա.
 Կոտրվել եմ...—«Պատմի՛ր, նանի՛,
 Հին օրերից քո անցկացրած.
 Եղե՛լ ես դու սիրահարված»:

XVIII

— Այդ էր պակաս: Մեր ժամանակ
 Չէինք լսել՝ ինչ բան է սեր,
 Թե չէ սկեսուրս անժամանակ
 Իմ աշխարհը կմթնեցներ:—
 «Հապա ինչպե՞ս ամուսնացար»:
 — Ասածու կամքն էր հավանաբար.
 Վանճաս փոքր էր, ինձնից մի բան,
 Իսկ ես՝ տասներեք տարեկան:
 Միջնորդը մի երկու շաբաթ
 Գնաց—եկավ աճյալես մեր տուն,
 Հայրս տվեց ինձ օրհնություն:
 Ողբում էի ես հուսահատ:
 Լացով հյուսերս քանդեցին
 Եվ ինձ տարան եկեղեցին:

XIX

Եվ ինձ տարան օտարի տուն...
 Բաց դու խոսքս չես էլ լսում...—
 «Ա՛խ, ի՛մ դայակ, ի՛մ սիրասուն,
 Թախիծ ունեմ, սիրտս խառնում,
 Հեկեկանքս, լացս է գալիս...»
 — Դու առողջ չես. ավա՛ղ, բալիս
 Դու ողորմյա՛, տե՛ր, և փրկի՛ր:
 Ի՞նչ ես ուզում, Տա՛նյա, խնդրի՛ր...
 Կուզե՞ս, սուրբ ջուր ցանեմ վրադ,
 Վառվում ես ողջ...—«Հիվանդ չեմ ես.
 Ես... սիրահարված եմ... գիտե՛ս»:
 — Տերը քեզ ձեռք մեկնի հաստատ:—
 Եվ աղջկան նա աղոթքով
 Խաչակնքեց դողդոջ ձեռքով:



XX

«Սիրահարված եմ»—նորից նոր
 Շնչում էր նա դառնապես:
 — Դու հիվանդ ես, սրտի՛ս հատոր:
 «Թո՛ղ ինձ, սիրահարված եմ ես...»
 Եվ լուսինն էր դուրսը շողում
 Ու մար լույսով լուսավորում
 Տատյանայի դեմքը գունատ,
 Անհոգ ցրված վարսերն առատ,
 Արտասուքն ու աթոռակին՝
 Հերոսուհու հանդեպ նստած,
 Երկար, տաք քառիպան հագած,
 Ճերմակահեր հեզ դայակին.
 Եվ ամեն ինչ նիրհում էր լուռ
 Լուսնի ներքո աշխարհասփյուռ:

XXI

Եվ հեռուն էր թռչում սրտով
 Տանյան՝ աչքը հռած լուսին:
 Գլխում մի միտք ծագեց շուտով...
 «Գնա՛, ինձ թո՛ղ, թո՛ղ առանձին:
 Տո՛ւր ինձ գրիչ ու թուղթ, մո՛տ բեր
 Սեղանն ու գնա՛. բարի՛ գիշեր.
 Շուտ կպառկեմ»: Եվ նա մենակ,
 Խաղաղ լուսնի շողերի տակ,
 Կիսակոթնած՝ գիր է գրում:
 Օնեգինն է մտքում անվերջ,
 Եվ անդատում նամակի մեջ
 Անմեղ կույսի սերն է շնչում:
 Ավարտում է, ծալում հարմար:
 Բայց, Տատյա՛նա, այդ ո՞ւմ համար:

XXII

Ես տեսել եմ սեզ գեղուհիք,
 Ձմեռվա պես սառն ու մաքուր՝
 Խիստ անողոր ու անառիկ,
 Եվ իմաստն եմ փնտրել իզուր
 Նրանց շինծու հպարտության
 Եվ անկեղծ առաքինության:
 Նրանցից ես խույս եմ տվել
 Եվ սարսամիտ միշտ կարգացել
 Նրանց դեմքին գիր դժոխքի՝
 Թո՛ղ քո ամբողջ հույսը առ միշտ:²⁰
 Նրաց սերը բերում է վիշտ,
 Ահաբեկում են անհոգի:
 Նեվալի մոտ մեր գեղաշուք
 Նման կանանց չե՞ք տեսել դուք:

XXIII

Պաշտողների հլու շարքում
 Տեսել եմ ես այլ կանանց վեստ,
 Որ անտարբեր են միշտ լսում
 Կրքի հառաչ, անչափ դովեստ,
 Եվ տեսել եմ միշտ զարմանքով՝
 Նրանք իրենց դաժան վարքով
 Վախեցնելով սերը երկշոտ՝
 Գիտեն բերել ետ իրենց մոտ,
 Ասենք, թեկուզ կարեկցությամբ
 Կամ խոսքին, նպատակադիր,
 Տալով հնչյուն քիչ սիրալիր:
 Եվ դյուրհավատ մի շլացմամբ
 Սիրողն է միշտ գտնում կրկին
 Ունայնությունն իր սրտագին:

XXIV

Ո՞րն է Տանյայի մեղքն ավել,
 Որ պարզությամբ իր կաթոգին
 Խաբեություն չի՞ գիտակցել,
 Հավատում է իր ցնորքի՞ն.
 Որ անարվեստ է նա սիրում,
 Սրտի մղումի՞ն ունկնդրում,
 Որ հավատում է անվարա՞ն,
 Որ երկնի՞ց է տրված նրան
 Ըմբոստ երեւակայություն,
 Խեղճ և կամքի ուժ ինքնաբուխ,
 Քմաբարո, ուրույն գլուխ,
 Որ նո՞ւրբ է սիրտն ու բոցկլտո՞ւն:
 Մի՞թե նրան դուք չեք ների,
 Անխոհությունն իր կրքերի:

XXV

Կռկատուհին սառն է դատում,
 Տանյան սիրում է լուրջ կերպով
 Եվ անվարան է հանձնվում
 Սիրույն, մանկան անմեղ սրտով:
 Նա չի ասում. դեռ ձգձգենք,
 Սիրու գինը է՛լ բարձրացնենք,
 Նեւենք ցանցը խոր ու խիզախ,
 Հպարտությունը խոցենք. նախ
 Հույսով, հետո երկմտությամբ
 Տանջենք սիրտը և հետո նոր
 Կյանք տանք խանդով ամենաղոր,
 Թե չէ, վաչկի՞նքի ձանձրությամբ,
 Շղթայից խորամանկ գերին
 Հեշտ կարող է փախչել կրկին:

XXVI

Մի դժվար գործ ես դեռ ունեմ.
 Ի սեր պատվի իմ հայրենի
 Հարկ է անշուշտ, որ թարգմանեմ
 Ես նամակը Տատյանայի:
 Ռուսաց լեզուն նա վատ գիտեր,
 Չէր կարդում հանդեսները մեր,
 Եվ խոսելը նրա համար
 Իր մայր լեզվով շատ էր դժվար:
 Դե, ֆրանսերեն էր նա գրել...
 Էլ ի՞նչ, արդեն ես ասացի,
 Որ մեղնում սերը կանացի
 Դեռ ուս լեզվով չի բարբառել,
 Դեռ մեր լեզուն հպարտ ու հին
 Չի վարժվել փոստի արձակին:

XXVII

Իրտեմ՝ դրդում են մեր կանանց,
 Որ ուսերեն կարդան մեզ պես:
 Վա՛յ ինձ, ինչպե՞ս տեսնեմ նրանց՝
 Ձեռքներին «Բարեմիտ»²⁾ հանդես:
 Վկա՛ եկեք, իմ պոետնե՛ր.
 Մի՞թե սիրած անձերը ձեր,
 Որոնց համար, ձեր մեղքով, դուք
 Շատ տաղեր եք գրել ծածուկ,
 Եվ որոնց ձեր սիրտն եք ձոնել,
 Մի՞թե բոլորն էլ ուս լեզուն՝
 Իմանալով թույլ, անսահուն,
 Անուշ կերպով չեն աղճատել,
 Եվ նրանց մեջ լեզուն օտար
 Չի՞ դարձել մայրենի բարբառ:

XXVIII

Աստված շանի, որ դեմս դան
 Շեմքում կամ պարելիս հանդիստ
 Թասակավոր կաճառական
 Կամ դեղնաշալ սեմինարիստ:
 Ինչպես շուրթերն առանց ժպտի,
 Առանց ինչ որ մի արատի
 Չեմ սիրում մեր ոռւսաց լեզուն:
 Գուցե, ինձ ի դժբախտութիւն,
 Գեղեցկուհիները մեր նոր
 Թերթերի խնդրանքին լսեն,
 Քերականով մեզ հետ խոսեն,
 Կյանքն էլ սիրի ոտանավոր.
 Ես էլ այնժամ... Ի՜նչ գործն է իմ.
 Ես հնին եմ հավատարիմ:

XXIX

Անճիշտ լեզուն պարզաթոթով,
 Հնչումը խորթ և անհարիր
 Կառաջացնեն միշտ էլ խռով
 Իմ կրծքի մեջ սրտի թրթիւ:
 Ես զղջալու ուժեր չունեմ,
 Գալիցիզմներ միշտ կսիրեմ,
 Ինչպես մեղքեր ջահելության
 Եվ տաղը Բոգդանովիչյան:
 Սակայն բավ է. պետք է անցնել
 Գեղեցկուհու աչն նամակին.
 Խոստացել եմ, բայց և կրկին
 Սիրով կուզեմ ես հրաժարվել:
 Գիտեմ՝ այժմ նուրբ Պարնիի
 Գրիչն ալլես հարգ չունի:

XXX

Խնջույքների՛, վշտի՛ երգակ,²²
 Ինչո՞ւ այժմ դու մոռտս չես,
 Թե չէ, իբր անհամեստ խնդրակ,
 Քեզ նեղություն կտայի ես,
 Որ կախարդիչ հանգեր տայիր
 Կրքոտ կույսի նուրբ ու ընտիր
 Օտարազգի այս բառերին:
 Ո՛ւր ես, ե՛կ, ա՛յ ես կամովին
 Իրավունքս քեզ եմ զիջում...
 Բայց ժայռերի միջև անթով,
 Գովեստներից պաղած սրտով,
 Նա մենակ, Ֆիննական հողում
 Շրջում է և նրա հողին
 Չի լսում իմ վիշտն անմեկին:

XXXI

Ահա նամակն իմ Տանյայի.
 Ես սրբությամբ եմ պահպանում,
 Միշտ կարոտով կարդում գաղտնի,
 Եվ կարդալուց չեմ հագենում:
 Ո՞վ ներշնչեց այսքան քնքռւյթ
 Եվ այս բառերն այնքան անուշիկ,
 Անմտությունն այս գթաշարժ,
 Սրտի տխմար զրույցն անվարժ՝
 Գրավիչ և վնասակար:
 Չգիտեմ: Բայց ահա թերի
 Թարգմանությունն այդ սիրադրի՝
 Վառ պատկերի պատճենն անկար,
 Կամ երկչուղով սերտված Ֆրեյլից
 Դպրոցական աղջիկներից:

Տառյանայի նամակը Օնեգինին

- Գրում եմ ձեզ. ի՞նչ է մնում:
Ի՞նչ կարող եմ ասել ուրիշ.
Ձեր կամքին եմ աշխատում
Արհամարհանքն ինձ տալ պատիժ:
Բայց սև բախտիս հանդեպ տրտում
Եթե մի կաթ ունեք դուք գութ,
Ինձ չեք լքի գյուղում այս մութ:
Առաջ լռել էի ուզում.
Եվ իմ ամոթն, այդ լա՛վ գիտցեք,
10 — Ձեր հաշտնի ես ձեզ երբեք,
Եթե լինեք ակնկալում,
Որ մի անգամ շարաթական
Կարժանանամ ձեր տեսության,
Լուռ կլսեմ խոսքերը ձեր,
Մի հատիկ բառ ինքս էլ կասեմ
Ապա նորից կմտածեմ
Միշտ նույն բանը օր ու գիշեր:
Բայց մարդկանցից խորշում եք դուք,
Եվ ձանձրանում գյուղի կյանքից.
20 — Իսկ մենք... Չունենք ո՛չ փայլ, ո՛չ շուք,
Թեև սրտանց դո՛հ ենք ձեզնից:

Ինչո՞ւ այցի եկաք դուք մեզ:
Հեռու ընկած այս խուլ գյուղում
Երբեք չէի տեսնի ես ձեզ,
Չէի տանջվի դառն ու տրտում.
Եվ հուզմունքն իմ անփորձ հոգում,
Մի օր (գուցե թե) մեղմանար,
Սիրտս ընկեր աներ մեկին
Եվ դառնայի նվիրված կին,
30 — Առաքինի մի մոր տիպար:
Մեկի՞ն... երբե՛ք և ո՛չ սքի

- Զէի տա իմ սիրտը հրկեզ:
 Դա նշումն է վերին կամքի...
 Երկնի վճռով եմ քոնը ես.
 Իմ ողջ կյանքը մի ապահով
 Երաշխիք էր մեր հանդիպան.
 Դու եկած ես աստծու կամքով՝
 Ինձ պահպանես մինչ դերեզման:
 Երազից եմ քեզ ճանաչում.
 40 — Դու սիրելիս էիր անտես,
 Տանջում էր ինձ հայացքդ վես,
 Հոգուս մեջ քո ձայնն էր հնչում
 Վաղուց... Ո՛չ, ո՛չ, երազ չէր այդ.
 Հենց ներս եկար, ճանաչեցի,
 Ողջ հուր կտրած նվաղեցի,
 Սա է,—ասի մտքումս հաստատ:
 Ծիշտ չէ՞. քո ձայնն էր ինձ հասնում
 Իմ մենության լուռ պահերին,
 Երբ մուրացկին էի օգնում
 50 — Կամ իմ հոգու վիշտն ամոքում
 Աղոթքներով ծանոթ ու հին:
 Եվ այժմ էլ դո՞ւ չէիր արդյոք,
 Որ շողացիր հոգուս անօդ,
 Իբրեւ տեսիլ մթաթափանց
 Բարձիս վրա խոնարհվեցիր՝
 Շշնջալով ինձ սիրալիր
 Հուսո խոսքեր ջերմ ու անանց:
 Ո՞վ ես, հրեշտա՞կը իմ բարի,
 Թե՞ նենգ գործիք շար խավարի,
 60 — Կասկածներիս տուր մեկնություն:
 Սո՛ւտ է արդյոք՝ ինչ ինձ թվաց,
 Անփորձ հոգու խաբեությո՞ւն.
 Եվ ա՞յլ բան է ինձ վիճակված...
 Ինչ որ է, դե՛, բախտը իմ ես
 Այսօրվանից քեզ եմ հանձնում,

Արտասովթոր դիմում եմ քեզ,
 Քո հովանուն ապավինում:
 Մի մտածի՛ր: Ոչ ոք չունեմ,
 Ձի հասկանում ինձ ոչ մի մարդ,
 70 — Խամբեց միտքս երիտասարդ,
 Եվ լուռ, անխոս պիտի կորչեմ:
 Քեզ եմ մնում. մեկ հայացքով
 Սրտիս հույսերն կյանքի՛ կոչիր,
 Կամ թե երազն այս ընդհատի՛ր,
 Ավա՛ղ, տեղին նախատինքով:

 Վերջացնում եմ: Էլ չեմ կարդում.
 Խեղդում են ինձ ամոթ ու ահ...
 Բայց ձեր պատիվն եմ ես ընտրում
 Եվ հանձնվում նրան վստահ...

XXXII

Հառաչում է Տանյան հեծուն,
 Իսկ նամակը դողում ձեռքին,
 Եվ դրոշմաթերթը վարդագույն
 Չորանում է լեզվի ծայրին:
 Գլուխն ուսի վրա կախվել,
 Նուրբ շապիկը վայր է սահել
 Նրա ուսից թեթևակի:
 Բայց մարում է արդ լուսնակի
 Շողը: Դաշտերն շոգու միջից
 Փայլվիլում են: Գետակն աշխույժ
 Արծաթվել է, և փողն անուշ
 Արթնացնում է գլուղը քնից:
 Առավոտ է, բոլորն՝ ոտքի,
 Բայց Տանյան չի գալիս մտքի:

XXXIII

Նա չի տեսնում ծագն արևի,
 Նստած է գլխահակ կրկին
 Եվ կնիքը փորագրովի
 Ձի դրոշմում իր նամակին:
 Բայց դուռը մեղմ բաց անելով՝
 Թե՛յ է բերում սկուտեղով
 Ֆիլիպենյան ճերմակահեր:
 «Ժամանակն է, բալի՛կ, դե վե՛ր.
 Վա՛յ, սիրո՛ւնս, պատրա՛ստ ես դու,
 Ա՛յ դու թռչնակ իմ վաղորդյան.
 Վախեցրիր ինձ երեկ այնքան:
 Դու առո՛ղջ ես, փառք աստծու:
 Գիշերվա թախիժդ թռել,
 Դեմքիդ ալ կակաչ է փռվել:

XXXIV

— Ա՛խ, ես ունեմ քեզ մի խնդրանք:—
 «Դե, հարազա՛տս, հրամայի՛ր»:
 — Բայց չկարծես... ճիշտ... կասկածանք...
 Տեսնում ես, ա՛յ... Ա՛խ, մի՛ մերժիր:—
 «Հոգի՛ս, աստված լինի վի՛ա»:
 — Դե՛, թող թող սուսիկ գնա
 Այս երկտողով... մեր հարևան...
 Օ-ի մոտ... հա՛, սաստի՛ր նրան,
 Որ ոչ մի խոսք չասի, գիտե՛ս,
 Եվ իմ անունն էլ թող չտա...—
 «Ո՛ւմ մոտ, անգի՛ն, գլխի չընկա.
 Բու՛թ եմ դարձել վերջերս ես:
 Մեր շուրջն ունենք շատ հարևան,
 Բոլորն ինչպե՛ս մտքիս մնան»:

XXXV

— Ինչ դժվար էս հասկանում դու:—
«Պառաւել էմ, ի՛մ պաշտելի.
Բթանում է միտքը մարդու.
Թե չէ առաջ էս սուր էի,
Եւ իմ տիրոջ կամքն էլ երբեք...»
— Ախր հիմա ա՛յդ է ինձ պետք,
Ինձ ինչ քո խելքը պառաւի:
Տե՛ս, այս գիրը պետք է տարվի
Օնեգինին:—«Իմացա, լա՛վ:
Ի՛նչ էս, հոգւա՛կ, դու բարկանում.
Գիտես, որ ծանր էմ հասկանում...
Այդ ի՛նչ, նորի՛ց գույնդ թռաւ»:—
— Այնպէս, ոչինչ չկա, նանի՛:
Դե շուտ, տո՛ւր, որ թող տանի:—

XXXVI

Բայց օրն անցաւ, և չկա լուր,
Հաջորդ օրն էլ ուշքը ձայնի՝
Տանյան զուգոված, դալուկ ու լուռ
Սպասում է պատասխանի:
Եկաւ Օլգայի սիրելին.
«Ձերը քնկերը ո՛ւր է կրկին,—
Հարց տվեց տիրուհին պառաւ,—
Մի՞թե իսպառ մեզ մոռացաւ»:—
Տանյան շիկնեց՝ գողը սրտում:
«Այսօր կգա նա անպայման,—
Պատասխանեց Լենսկին նրան,—
Անշուշտ փոստն է քիչ ուշանում»:—
Տանյան կախեց զուխը ցած՝
Չար կշտամբանք կարծես լսած:

XXXVII

Ընկալ մութը, և սեղանի
 Ինքնանեռն էր արդեն թշուամ,
 Վրան թեյամանը չինի
 Ջերմանում էր նուրբ գոլորշում:
 Հմուտ Օլգան իր վարժ ձեռքով
 Գավաթների մեջ մուգ շիթով
 Լցնում էր թեյ տաք ու բուրյան,
 Մատուցում էր սերույք տղան:
 Կանգնած պատուհանի հանդեպ,
 Շունչը տված պաղ ապակուն,
 Տանյան իր մեջ սուզված թախծուն՝
 Մատով հյուսում էր անվրեպ
 Պատուհանին մշուշամած
 Օ և Ե գիրն իր փայփայած:

XXXVIII

Հոգին նվում էր վշտածեծ,
 Աչքին արցունք պատած անբավ:
 Հանկարծ դուրս... սիրտը լռեց.
 Կառք է դալիս... բակին հասավ
 Եվ գեներն: «Ա՛խ», և հեխե
 Յատկեց Տանյան սավերից թեթև
 Սրահից բակ, բակից այգին,
 Ետ չի նայում և փութադին
 Թռչում է նա. անցավ ճեպով
 Ծաղկոց ու մարդ, կամուրջ, թիուտ,
 Ծառուղիներ, լճակ, թավուտ,
 Յասամանը ջարդեց ոտքով
 Եվ շնչասպառ առվակի մոտ
 Նստարանի վրա ծանոթ

Ընկալ ահա... «Այստեղ է նա:
Տե՛ր իմ, ի՞նչ կպատասխանի»:
Տանջվող ու հեգ սիրտը նրա
Երազական մի հույս ունի:
Դողում է նա, շնչում է հուր,
Սպասում է, բայց ո՞ւր է, ո՞ւր:
Աղախիններն էին այգում
Երգով հատապատու քաղում:
Պատվիրված էր, որ միշտ երգեն.
(Նպատակը այն էր հայտնի,
Որ տիրական բարը գաղտնի
Նենգ շուրթերը երբեք չուտեն,
Երգով տարվեն միշտ, անդադար.
Ա՛յ գյուղական ճարտար հնար):

Աղջիկների երգը

Աղջիկնե՛ր, գեղեցկուհի՛ք,
Ձանիկնե՛ր, ընկերուհի՛ք,
Խաղի՛ ելեք, աղջիկնե՛ր,
Ուրախացե՛ք, աղջիկնե՛ր:
Ձգեցե՛ք երգը անուշ,
Անուշ երգը մեղանուշ,
Գրավեցե՛ք կտրիճին,
Մոտ քաշեցեք մեր խմբին:
Հենց կտրիճին գրավենք,
Հենց որ հեռվից նկատենք,
Փախչենք, քուլրե՛ր, դեռ ու դեն,
Բալ թափենք նրա գլխին,
Բալ ու մորի հատիկներ,
Կարմիր-կարմիր հաղարջներ:
Մի՛ գա, մի՛ գա լսելու
Մեր երգը նվիրական,
Մոտիկ մի՛ գա տեսնելու
Մեր խաղերը կուսական:

XL

Երգում են, և շատ անտարբեր,
Այդ զիւ ձայնին ունկնդրելով՝
Սպասում է նա անհամբեր,
Որ խաղաղվի սիրտն իր խռով,
Մարի աչտի բոցը անհազ.
Բայց նույն թրթիռն է կրծքի տակ,
Եվ չի անցնում տենդն աշտերից,
Այլ շրկնում է, վառվում նորից:
Խեղճ թիթեռն է այդպես դողում,
Բախում փայլուն թևր անզոր
Աշակերտի ձեռքին մոլոր,
Նապաստակն է այդպես դողում
Նկատելով հեռվից հանկարծ
Չար որսորդին թիում պահված:

XLI

Բայց շունչը տեղն եկավ կրկին,
Եվ նա տեղից ոտքի ելավ,
Շարժվեց, սակայն դեռ ծառուղին
Նոր էր մտել,—իր դեմ տեսավ
Եվզենիին փայլահայաց՝
Որպես ահեղ ստվեր կանգնած,
Եվ կրակով խայթվածի պես
Նա կանգ առավ անմիջապես:
Բայց չսպասված այդ հանդիպման
Արդյունքն աչսօր, բարեկամների,
Պատմել ուժիցս շատ է վեր.
Հոգնել եմ ես, և անպայման
Պետք է շրջեմ, հանգիստ առնեմ,
Հետո մի կերպ կվերջացնեմ:



ԳՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԻ

La morale est dans la nature des choses. *
Necker.

Քարոյականութիւնը իրերի բնութեան մէջ է:
Նեկեր

I

.
.

II

.
.

III

.
.

IV

.....

V

.....


VI

.....

VII



րքան քիչ ենք սիրում կանանց,
 Այնքան հեշտ ենք դուր գալիս մենք,
 Այնքան հաստատ որսում նրանց
 Գայթակղության ցանցով մեր նենդ:
 Կյանքն անառակ հնում արդեն
 Սիրարկեստի համբավ ուներ,
 Թմբկահարում էր ինքն իրեն՝
 Վայելելով հեշտ ու անսեր:
 Այդ գործը, մարդ ինչպե՞ս չասի,
 Վայել է սոսկ կապիկներին,
 Պապենական հին օրերին:
 Անցել է փառքը Լովլասի՝
 Կեղծամի պես հնադարյան,
 Հին օրերի փառքի նման:



VIII

Ո՛ւմ չէ տհաճ՝ կեղծավորել,
 Նույն բանն ասել կրկին-կրկին,
 Համոզելու լուրջ ջանք թափել՝
 Ինչ որ պարզ է ամեն մեկին,
 Առարկումներ լսել սովոր,
 Հերքել մտքերն այն սին, ինչ որ
 Աղջիկները շունեն երբեք,
 Երբ տարիքն է դեռ տասերեք.
 Ո՛ւմ չեն մաշի սպառնալիքներ,
 Աղերս, երդում, կեղծ ահուդով,
 Վեց թերթի չափ գրված երկտող,
 Բամբասանքներ ու արցունքներ,
 Մորքույրերի հսկողություն
 Ամուսնու ծանր մտերմություն:

IX

Այս էր Եվդենիյա մտքում:
 Դեռ վաղ, ջահել կյանքի պահին
 Ծոլորվելով դո՛հ էր դառնում
 Նա սանձարձակ իր կրքերին:
 Սովորույթից երես առած,
 Մեկով մի պահ անշափ տարված,
 Հիասթափված՝ մեկ ուրիշից,
 Մեղմ ծյուրվելով իր կրքերից,
 Արկածներից իր հաջողակ,
 Եվ լինելով երկրպագու
 Անվերջ տրտունջներին հոգու,
 Հորանջումը ծիծաղի տակ
 Թաքցնելով՝ վատնեց նա յուր
 Ութ վարվուռն տարին իզուր:

X

Կանանց նա շէր սիրում էլ լուրջ,
 Այլ սոսկ խաղում էր դյուրաբաւ.
 Մերժեն՝ շուներ բնավ տրտունջ,
 Լքեն՝ այդ էլ դադար էր լաւ:
 Կին էր փնտրում առանց կրքի,
 Լքում՝ առանց ամոսսանքի,
 Թեթեհ հիշում մտքի մեջ յուր,
 Ինչպես հանկարծ եկած մի հյուր
 Երեկոյան վիստին հասնի,
 Նստի, ու խաղն երբ վերջանա,
 Խաղատեղից շուտ հեռանա
 Եվ տանն իրեն դռնի կրկին.
 Նա չգիտի առավոտյան՝
 Ուր կգնա երեկոյան:

XI

Բայց Տանյայի գիրը խոսուն
 Օնեգինի սիրտը շարժեց.
 Այդ կույս հոգու տենչոտ լեզուն
 Նրա մտքերն ալեկոծեց:
 Նա Տանյային հիշեց խակուն,
 Դեմքն այն վհատ, լուրջ ու դժգուն,
 Եվ համակեց նրան սաստիկ
 Անմեղ երազ մի անուշիկ,
 Գուցե և հուրն իր հին հույզի
 Տիրապետեց նրան մի պահ,
 Բայց նա չուզեց խաբել՝ վստահ
 Խոստովանանքն անմեղ կույսի:
 Այժմ թռչենք մենք այն այգին,
 Ուր հանդիպեց նա Տանյային:

XII

Մի պահ նրանք մնացին լուռ,
 Օնեգինը ապա խոսեց.
 «Դուք ինձ գրել էիք: Իզուր
 Մի՛ հրաժարվեք. գիրն այդ պարզեց
 Խոստովանանքն անկեղծ հոգու,
 Անմեղ սիրո զեղումն ազդու:
 Ձեր պարզութիւնն ինձ դուր եկավ,
 Նա փոթորկեց իմ մեջ, հարկավ,
 Վաղուց լռած հույզ ու կրքեր:
 Բայց ձեզ դուիլ չեմ ուզում ես.
 Ձեր պարզութեան դիմաց նույնպես
 ես կլինեմ պարզ, աներեր:
 Խոստովանանքս ասեմ բոլոր,
 Ինքնե՛րդ եղեք ինձ դատավոր:

XIII

«Եթե կյանքս ցանկանայի
 Կապել տուն ու ընտանիքին,
 Եթե ես բախտ ունենայի
 Լինելու հայր և ամուսին,
 Եթե պատկերն ընտանեկան
 Ինձ գայթակղեր դեթ մեկ վայրկյան,
 Ապա թերևս ուրիշ մեկին
 Ձէի ընտրի ինձ իբրև կին:
 Կասեմ, թողած պերճանք ու փայլ,
 Եթե իդեալն իմ հին հառնէր,
 - Ձեզ կընտրեի իբրև ընկեր
 Իմ այս տխուր կյանքում մռայլ.
 Դա կլինէր լավ երաշխիք,
 Եվ կապրեի ես երջանիկ...

XIV

«Բայց ես շունեմ բախտի հույսեր,
 Հոգուս խորթ է ամեն վայելք,
 Եվ կատարյալ կերպարին ձեր
 Արժանի չեմ բնավ երբեք:
 Հավատացեք (խիղճս է վկա),
 Ամուսնությունն մեզ վատ կգա:
 Որքան սիրեմ՝ դարձյալ ես ձեզ
 Շուտ կլքեմ—վարքս է այսպես.
 Դուք պիտի լաք, լացով սակայն
 Ձեք ազդելու սրտին իմ լուռ,
 Բորբոքելու եք սոսկ իզուր.
 Դե՛ դատեցեք՝ Հիմենն ինչքան
 Վարդեր է մեզ տալու բարով,
 Այն էլ, գուցե, երկար օրով:

XV

«Ի՞նչ կա կյանքում ավելի վատ,
 Քան այն, երբ կինը միշտ տխուր
 Մտածում է իր բազմաբատ
 Մարդու մասին մենակ, և ուր
 Կնոջ արժեքն իմանալով
 (Բայց իր վիճակն անիծելով)՝
 Ամուսինը մոռալ է, չար,
 Սառը խանդում է միալար:
 Այսպես եմ ես: Ա՜յդ էր արդյոք
 Ձեր բոցաշունչ հոգին փնտրում,
 Երբ ինձ նամակ էիք գրում
 Դուք պարզ այնպես, այնպես խելոք:
 Միթե ա՜յս բախտն է ձեզ դաժան
 Ճակատագիրն դտել արժան:

XVI

«Անդարձ է կյանքն իր տենչերով.
 Չի նորոգվի էլ իմ հողին...
 Ձեզ սիրում եմ եղբոր սիրով,
 Եվ ավելի գուցե նրբին:
 Կսեցե՛ք ինձ դուք անդալսույթ.
 Կույս աղջիկը տենչերն անփուլթ,
 Հեշտ կփոխի ալ տենչերի.
 Այդպես ծառն էլ ամեն տարի
 Նորոգում է սաղարթն իր հին:
 Այդ է կամքը տերունական:
 Դուք կսիրեք նորից, սակայն...
 Պետք է իշխեք դուք ձեր սրտին:
 Բոլորը չեն վարվի ինձ պես,
 Պատուհասել կարող եք ձեզ»:

XVII

Եվզենին իր քարոզն ասաց:
 Արցունքն աչքին և ոչ մի բան
 Չտեսնելով, շունչը կտրած՝
 Տառյանան լուռ լսեց նրան:
 Նա ձեռք մեկնեց: Եվ վշտահար
 (Ինչպես կասեն՝ մեքենաբար)
 Տանյան հենվեց, թույլ ու նվաղ,
 Նրա թևին, զլուխը կախ.
 Թողին աչքին, վեր բարձրացան,
 Այդպես մտան դահլիճը մեծ,
 Ոչ ոք նրանց չկշտամբեց.
 Իրավունքներ երջանկության
 Ունի աղատ գլուղն իր հերթին,
 Ինչպես գոռոզ Մոսկվան մեր հին:

XVIII

Համաձայնվենք, ընթերցողներ՝
 Որ լավ վարվեց Օնեգինն իմ
 Տատյանայի հետ կարեւոր.
 Նա առաջ էլ վես, մտերիմ
 Հոգու տեր էր, բայց թե չարկամ,
 Թշնամիներ ու բարեկամ
 (Որ կարող են նույնը լինել)
 Նրան իզուր պախարակել,
 Եվ զրպարտել էին քենից,
 Բամբասանքի դամել հաճախ:
 Թշնամին հայտնի է. ավա՛ղ,
 Տերը փրկի բարեկամից:
 Բարեկամներ՝ գիտենք, գիտենք:
 Ա՛յ, լավ եկան միտս իրենք:

XIX

Ի՛նչ է: Ոչի՛նչ. թողեք՝ ունայն,
 Սև երազիս օրոր ասեմ:
 Փակագծում նշեմ միայն,
 Որ չկա մի կեղտոտ, նսեմ
 Զրպարտություն՝ անարգ ու ցած
 Ամբոխի մեջ հարգ ստացած,
 Չկա ոչ մի անհեթեթ բան,
 Ոչ էպիգրամ հայհոյական,
 Որ չկրկներ ժպիտն աշտին,
 Ազնիվ մարդկանց շրջանի մեջ
 Զեր բարեկամը միշտ անվերջ՝
 Չունենալով մի միտք ետին:
 Եվ նա, ոչի՛նչ, թիկունք է ձեզ,
 Եվ սիրում է ձեզ... եղբոր պես:

XX

Հը՛մ, հը՛մ: Ընթերցող ի՛մ ազնիւ,
 Ո՞ղջ են հարազատները ձեր:
 Բայց թերևս ուզեն՝ ճշտիւ
 Ձեզ բացատրեմ, հարազատներ
 Ո՞վ են կոչվում: Դրան դառնանք.
 Հարազատ են անշուշտ նրանք,
 Որոնց պետք է նուրբ շոյանքով
 Մենք միշտ սիրենք, հարգենք հոգով,
 Սովորույթի ուժով մեր հին
 Միշտ ծննդին հյուր գնանք մենք,
 Կամ թե փոստով շնորհավորենք,
 Որ ողջ տարվա մյուս օրերին
 Էլ մեր մասին հոգս չունենան...
 Տերը նրանց լինի պաշտպան:

XXI

Եվ, իվերջո, հաստատ ու մոտ
 Կանանց սերն է միայն էլի,
 Որ մրրիկում էլ փոթորկոտ
 Մնում է ջերմ, վստահելի:
 Այո՛: Բայց կա մոդան ազդող,
 Կա բնության հմայքն անդող,
 Եվ կարծիքներ կան աշխարհիկ,
 Այն ինչ թույլ է սեռը գողտրիկ:
 Եվ մանավանդ իր մտրիմ
 Մարդու խոսքը կնոջ համար
 Պետք է լինի բարձր ու արդար.
 Եվ ձեր կիսը հավատարիմ
 Գայթակղվում է աչդպես արագ.
 Դեն է անում սիրո կատակ:

XXII

Հապա էլ ո՞ւմ սերն է հաստատ,
 Ո՞վ է, որ չի դավաճանի,
 Ո՞վ իր խոսքն ու գործը լավ-վատ
 Կշարի ըստ մեր արշինի.
 Ո՞վ չի ցանում մեր դեմ դավեր,
 Ո՞վ կբերի մեզ բախտ ու սեր,
 Ո՞ւմ չէ արատը մեր տհաճ,
 Ո՞ւմ հետ կապրենք միշտ բարեհաճ:
 Ինչո՞ւ փնտրել սին ուրվական.
 Իդուր ջանքեր դուք մի՛ թափեք,
 Դուք միմիայն ձեզ սիրեցեք,
 Ընթերցողնե՛ր իմ պատվարժան:
 Այդ է լավը. և ավելի
 Ոչինչ չկա էլ սիրելի:

XXIII

Բայց դրույցն ի՞նչ արդյունք տվավ:
 Ավա՞ղ, դժվար չէ դուշակել.
 Սիրո տխմար տանջանքն անբավ
 Ձի դադարում ալեկոծել
 Ձահել հոգին աչն վշտահար:
 Ո՛չ, ջերմ կրքով անմխիթար
 Տանյան վառվում է առավել.
 Քունն է նրա աչքից փախել,
 Կյանքի գույն, բույր, առողջ ծիծաղ
 Եվ կուսական անդորրություն
 Կորան, ինչպես դատարկ հնչյուն,
 Եվ խամրում է կյանքը մատաղ:
 Թուխպն է այդպես փոթորկածին
 Ծածկում շողերն այգեբային:

XXIV

Տանջան թռչնում է և խամբում,
 Մարում է նա, ավա՛ղ, լռին.
 Ոչինչ նրան չի հրապուրում
 Եվ չի հուզում նրա հոգին:
 Դրկիցները լուրջ ու խոհուն
 Փսիսում են իրար թաքուն.
 «Պետք է սրան մարդու տալ շուտ»:
 Բա՛վ է. ես էլ պետք է անշուշտ
 Թարմություն տամ իմ մտքերին
 Խնդուն սիրո գեղով հիմա,
 Թեև ճնշվում եմ ակամա՝
 Ափսոսանքն ու ցավն իմ սրտին:
 Ներեցե՛ք, որ շատ եմ սիրում
 Տառչանային ես իմ տրտում:

XXV

Հմայվելով միշտ ավելի
 Իր Օլգայի անշափ գեղով՝
 Գերությանը այդ հաճելի
 Վլադիմիրը տրվեց հոգով:
 Նրա հետ է միշտ, միասին
 Սենյակումն են աղջամուղջին,
 Առավոտը անց են կացնում
 Թևանցուկով՝ ծաղկած այգում:
 Եվ ի՞նչ. սիրով արբած տղան
 Նուրբ ամոթից շփոթվելով,
 Տարված Օլգայի ժպիտով՝
 Համարձակվում է մերթ միայն
 Խոսողիկին ձեռքը հսկել,
 Կամ զգեստից համբույր քմայել:

XXVI

Կամ կարգում է կույսին խնդուն՝
 Բարոյավեպ, ուր, սիրելի՛ս,
 Շատ ավելի կա բնություն,
 Քան Շատոբրիանն է տալիս:
 Եվ այդ պահին մի երկու էջ
 (Հերյուրանքներ թյուր, սնամեջ,
 Վտանգավոր նրա համար)
 Զեղչում է նա ամոթահար:
 Կամ թե քաշված հեռու անկյուն,
 Տարված հիմա էլ շախմատով
 Եվ սեղանին հենված թևով՝
 Կենտրոնացել են լուրջ, խոհուն.
 Ու զինվորով Լենսկին ցրված
 Իր իսկ փիղն է առնում հանկարծ:

XXVII

Տանն էլ նա միշտ ու անդադար
 Զբաղված է Օլգայով իր.
 Ալբոմի մեջ նրա համար
 Գծագրում է դարդեր ներդիր,
 Նկարում է գրչով, ներկով
 Մե՛րթ մի քնար աղավնիկով,
 Մե՛րթ գյուղական պարզ տեսարան,
 Կամ Կիպրիսի տաճար, դամբան,
 Մե՛րթ թերթերում վերհուշների
 Ուրիշների ձեռքից ներքև
 Տալ է գրում նուրբ ու թեթև՝
 Լուռ հուշարձան անուրջների,
 Հետքն՝ առկայծած իր հին խոհի,
 Որ մնում է այսօրան տարի:

XXVIII

Գլուղում տեսած պետք է լինեք
 Օրիորդական շատ արքունիք,
 Ուր որ վերջ, ծայր, ամենուրեք
 Խզբղել են շատ աղջիկներ.
 Տաղերն, ընդդեմ ուղղագրության,
 Չափազուրկ են, իբրև նշան
 Սիրո, անգիր են միշտ գրվել
 Եվ կարճացվել կամ երկարել:
 Էջն առաջին հայտնում է մեզ.
 Qu'écrirez-vous sur ces tablettes,
 Ստորագրված՝ t. á v. Annette,
 Ավարտվում է արքուն ախպես.
 «Ով սիրում է քեզ է՛լ ավել,
 Թող նա գրի ինձնից ավել»:

XXIX

Այնտեղ անշուշտ պետք է լինի
 Ծաղկեփունջ և երկու սիրտ, ջահ,
 Հետն էլ երգում առաքինի՝
 Սիրելու եմ ձեզ մինչև մահ:
 Զինվորական ինչ-որ պովեստ
 Տաղ կունենա սուր, ժանտանետ:
 Ինքս էլ այնտեղ, բարեկամներ՝,
 Կգրեի սիրով տաղեր,
 Միշտ այն վստահ համոզումով,
 Որ իմ ջանքերն ալդ անտեղի
 Կարժանանան ժպիտների,
 Եվ որ հետո շար միտումով
 Չեն սկսի քննադատել՝
 Սո՛ւր, թե՛ տափակ եմ ես ստել:

XXX

Իսկ դուք, չարքի գրագարանի
 Յրիվ եկած հատորիկնե՛ր,
 Բռնահանգի վարժարանի
 Տքնածնո՛ւնդ, ճո՛խ ալբոմներ,
 Որ առեւ եք նկար ու զարդ
 Տոլստոյի վարժ վրձնից կախարդ,
 Կամ նուրբ գրչից Բարատինսկու,
 Թող հրկիզի ձեզ շանթն աստծու:
 Երբ իր in-quarto-ն է մեկնում:
 Ինձ փայլաշող մի կին խնդրող,
 Պատում է ինձ ցասում ու դող,
 Սուր էպիգրամ է սկսում
 Իմ հոգու մեջ իսկույն բլթալ.
 Իսկ դու արի՛, տո՛ւր մադրիգալ:

XXXI

Լենսկին Օլգայի ալբոմում
 Գրում է, բայց ո՛չ մադրիգալ.
 Նրա գրչից սեր է շնչում
 Եվ ոչ թե սուր մտքի պաղ փայլ:
 Գրում է Օլգայի մասին
 Դիտած, լսած բանն իսկ չնչին,
 Եվ հոսում է, ինչպես հեղեղ,
 Նրա եղերգն ստույգ, գունեղ:
 Այսպես, Յագի՛կով, դու սրտիդ
 Զերմ ավյունի սլացքներում,
 Երգում ես, տերն գիտի, թե ում.
 Ու մի օր էլ եղերգներիդ
 Փունջը ձեռքիդ կվերհիշես
 Քո ողջ կյանքի պատումը վես:

Բայց սո՛ւս: Քննադատը կտրուկ
 Պատվիրում է նետել ահա
 Եղերգների թագը խղճուկ,
 Եվ հանգաստեղծներիս վրա
 Գոռում. «Դե՛, վե՛րջ տվեք լացին,
 Միշտ միևնույն ձեր կոռոցին.
 Բա՛վ է անցյալն ողբաք ունայն,
 Այժմ տվեք ուրիշ մի բան»:
 — Բարի՛. դուցե հանձնարարես
 Մեզ թուր, դիմակ, շեփոր կրկին,
 Եվ մտքերի մեռած գանձին
 Հարուժյուն տալ մեզ պատվիրես:
 Այգայես է, չէ՞:— «Ո՛չ, ո՛չ. բնա՛վ.
 Դուք ներբողնե՛ր դրեցեք լավ,

XXXIII

Ինչպես տարիներում հզոր՝
 Անցյալում էր գրվում կարգին...»
 — Սուկ ներբողնե՛ր հանդիսավոր.
 Վե՛րջ տուր, հոգի՛ս, նույնն է կրկին:
 Երգիծաբանն ի՛նչ է ասել.
 Մի՞թե կուղես դերադասել
 Օտաւամիտ քնարերգակին
 Հանգաստեծից մեր տխրագին:
 «Բայց ամեն ինչ եղերգի մեջ
 Ողորմելի՛, սի՛ն է այնպես,
 Այնինչ ներբողն աշխի՛վ ու վես
 Խորհուրդ ունի...»—Ո՛չ, քեզ հետ վե՛ճ
 Ես չեմ բացի, այլ կլռեմ.
 Դար դարի դեմ ինչո՞ւ լարեմ:

XXXIV

Աղատութիւն և փառք սիրող
 Լենսկին ծովում գոռ խոհերի
 Գուցի գրեր նաև ներբող,
 Բայց Օլգան ձեռք չէր երկարի:
 Երբեք մի պոետ լացոտ
 Կարդացել է սիրածի մոտ
 Երկերը իր: Խոսք կա՝ իբրև
 Ձիք ավելի բարձր պարգև:
 Երանի՜ այն հեգ սիրողին,
 Որ կարգում է տենչերն իր վաղ,
 Սիրած կույսին գեղանվաղ՝
 Երգի, սիրո իր ընտրյալին:
 Երանի՜... բայց աղջիկն ընտրած
 Այլ բանով է գուցի տարված:

XXXV

Բայց ես պտուղն իմ տենչագին
 Ու դաշնավոր զբաղմունքիս
 Կարդում եմ սոսկ իմ դայակին՝
 Մանկութ սիրած ստնտուխ:
 Կամ քղանցքից բռնում հանկարծ
 Ճաշից հետո ինձ հյուր եկած
 Հարևանին և անկյունում
 Ողբերգությամբ հոգին հանում:
 Եվ կամ (կատակն արդ շունի դեր),
 Հանգից լկված ու թախծալից,
 Լճի ափը փախած տնից՝
 Հալածում եմ վայրի բազեր.
 Երգիս անուշ ձայնից խակույն
 Թւածում են նրանք հեռուն:

XXXVI. XXXVII

Իսկ Եվգենի՞ն: Իրավ եք դուք.
 Համբերեցե՛ք մի քիչ, ահա
 Ձեզ կսպասեմ ամեն մանրուք
 Նրա կյանքից ամենօրյա:
 Նա դարձել էր ճիշտ մենակյաց.
 Վեր էր կենում յոթը չեղած,
 Դիմում (թեթև մի շոր հագին)
 Լեռան լանջի պաղ առվակին,
 Գյուղնարայի երգչի նման
 Հեղեղոտն այս անցնում լողով,
 Եվ հետո սուրճ վայելելով
 Թերթում հանգեսը անպիտան
 Ու հագնվում...

XXXVIII. XXXIX

Պտույտ, գրքեր, քուն խոնջատու,
 Անտառի շուր, ջրի խոխոջ,
 Մերթ սևաշյա դեղեցկուհու
 Թատղաշ համբույր դեռաբողբոջ,
 Սանձին հլու ձի սիգաբաշ,
 Բավականին քմահաջ ճաշ,
 Մի շիշ գինի պայծառագույն,
 Միայնություն, անդորրություն,
 Ահա սուրբ կյանքն Օնեգինի:
 Եվ անզգա տրված դրան,
 Նա չէր հաշվում օրերն ամռան
 Իր գրգանքում առաքինի՝
 Չհիշելով քաղաք, բնակեր
 Եվ զվարճանք ձանձրությաներ:

Բայց հյուսիսի ամառն անդոր՝
 Ծաղրը հարավային ձմռան,
 Շողաց և վերջ, շունի շատ օր,
 Թեկուզ հավան չենք մենք դրան:
 Երկինքն արդեն աշուն շնչում,
 Արևն էլ թույլ էր ճաճանշում,
 Կարճ էր դառնում տեքն օրերի.
 Խորհրդավոր ծածկն անտառի
 Մերկանում էր, խշշում վշտոտ,
 Արձակ դաշտին մեզն էր փարվում,
 Սագերն էին ճիչով չվում
 Դեպի հարավ, և շատ էր մոտ
 Աշունն արդեն մեր ձանձրագին,
 Նույնմբերն էր շոքել շեմքին:

XLI

Օրն է բացվում մշուշամած,
 Դաշտում չկա գործ ու աշխույժ.
 Էգ գայլի հետ գայլը քաղցած
 Որս է փնտրում ճամփին անուժ.
 Նժույգն առած գայերի հոտ,
 Վրնջում է, և վեհերոտ
 Խթանում է հեծյալն իր ձին.
 Նախրապանը լուսաբացին
 Գոմից հանդ չի քշում կովեր,
 Եվ կեսօրին փողն եղջյուրի
 Չի հավաքում նրանց ի մի.
 Ճթտան մարխի լույսով երեք՝
 Խրճիթի մեջ երգով անհույս
 Թեև է մանում գեղջուկ մի կույս:²³

XLII

Սառնամանիքն է ճայթում արդ՝
Արծաթելով դաշտը անծիր.
(Հանգի համար ուզում ես վարդ,
Ա՛ռ, ընթերցո՛ղ, այն ստացի՛ր):
Լավ պարկետից ողորկ, նրբին
Գետն է փայլում սառույց հագին:
Տղաներն են զվարթ խմբով
Սառույց չափում չմուշկներով.²⁴
Կարմրաթաթիկ ծանր մի սագ
Ուզեց ջրում լողալ անուշ,
Սառցին ոտք է դնում զգուշ,
Եվ սայթաքում: Զվարթ, արագ
Թափվում է վայր ձյունն առաջին՝
Փայլում նման աստղիկներին:

XLIII

Մարդ ի՞նչ անի այդ խուլ վայրում:
Շրջի՞. բայց գյուղն այդ ժամանակ
Աչքին ձանձրույթ է միշտ բերում
Իր մերկ տեսքով միօրինակ:
Զիով սուրա հա՞նդ, տափաստա՞ն.
Իր դուլ պայտի շնորհիվ սակայն,
Սայթաքելով հարթ սառույցին,
Հանկարծ տեսար՝ վայր ընկավ ձին:
Նստի՛ր դու քո տանը անել.
Կարդա՛. ահա Պրատ, W. Scott:
Զեղա՞վ, քննի՛ր ծախքերդ մոտ,
Հուզված խմի՛ր, երեկոն էլ
Կանցնի մի կերպ. վաղը՝ նույնպես,
Եվ լավ ձմեռ դու կանցկացնես:

Տ. Եվգենի Օնեգին

XLIV

Եվգենին, Չալդ Հարովդի պես,
 Կամքով տրվեց մի ծուլության:
 Արթնանալով՝ անմիջապես
 Մտնում է պաղ լողավազան.
 Հետո հաշվով տարված, մենակ,
 Խաղաձողով զինված բարակ՝
 Բիլյարդ է նա խաղում անխոնջ
 Զույգ գնդակով ցերեկն ամբողջ.
 Գյուղում մութը կընկնի շուտով,
 Եվ վերջ խաղին. բացվեց սեղան
 Վառարանի առաջ ձմռան.
 Նա սպասում է: Եռաձիով
 Ժամանում է Լենսկին արդեն,
 Իսկույն ճաշի պիտի նստեն:

XLV

Կլիկո այրու կամ Մոետի
 Օրհնյալ զինին պաղ հուրհրան,
 Ի պատիվ մեր հյուր պոետի
 Բարձրանում է իսկույն սեղան.
 Պայծառ, նման Հիպոկրենին,
 Իր բյուր խաղով փրփուր զինին
 (Հիշեցնելով մերթ այս, մերթ՝ այն)
 Գերել է ինձ: Վերջին լուման
 Նրան եմ ես տվել հաճախ:
 Հիշո՞ւմ եք, ի՞մ բարեկամներ,
 Կախարդական շիթն այն ուրախ
 Ծնել է ի՞նչ շարություններ,
 Որքա՞ն կատակ և տա՞ղ որքան,
 Վեճե՞ր, երազների խրախճա՞ն:

XLVI

Բայց նա փրփրով աղմկալետ
 Դավաճանում է ստամոքսին.
 Եվ ես բորդոն եմ առհավետ
 Արդեն ընտրել՝ լսած սրտիս:
 Դեպի Աի²⁵ էլ սեր չունեմ.
 Նա սիրուհու նման դժխեմ
 Միշտ աշխույժ է, հողմի ուարին,
 Քմաբարո, փայլուն և սին:
 Իսկ դու, բորդո՛, նման ես միշտ
 Բարեկամի, որ սև օրին
 Հասնում է խեղճ ու դժբախտին,
 Պարապույթուն ցրում առժամ.
 Կեցցե՛ բորդոն մեր բարեկամ:

XLVII

Մարեց կրակն, ու մոխրի տակ
 Ծածկվեց ածուխը ոսկեմած:
 Շողին ազոտ շիթով բարակ
 Վետւլեաում է, և մարմրած
 Վառարանն է նվաղ շնչում.
 Ծխամոորճից ծուխ են փչում.
 Գավաթն առկա է հուրհրան.
 Մութն իջնում է երեկոյան...
 (Սիրում եմ ես ընկերական
 Գինու թասն ու զրույցն անվիշտ,
 Այն պահին, որ կոչում են միշտ
 Պահեր ի մեջ գալլի և շան,
 Ինչո՞ւ սակայն, չեմ հասկանում):
 Բարեկամներն են արդ խոսում.

XLVIII

«Դե՛հ. Տատյանան քո հարեան.
 Եվ Օլգադ ժիր լա՛վ են, առո՛ղջ»—
 — Ինձ կես թաս էլ լցրու միայն...
 Բա՛վ է... Բոլորն էլ ողջ առողջ
 Բարեում են հարգանքով քեզ:
 Ա՛խ, ինչ լա՛վն են դարձել տեսնես,
 Օլգայի ուսերն. ի՛նչ հոգի
 Ունի, ի՛նչ կուրծք... Բայց ըստ հարկի
 Պիտի դու մեկ անգամ էլ գաս.
 Թե չէ, ի՛նքդ դատիր, եղբա՛յր,
 Երկու անգամ այնտեղ եղար,
 Հետո այցդ դարձրիր պաս:
 Սակայն... Որքան հիմա՛րն եմ ես.
 Դու նրանցից հրավեր ունես:—

XLIX

«Ե՛ս»—Այո՛, տոնն է Տանյայի
 Շաբաթ օրը: Եվ Օլգան քեզ
 Մոր հետ խնդրեց: Չի վայելի,
 Որ դու կանչին չարձագանքես:—
 «Սակայն այնտեղ մեծ ժողովուրդ
 Գուցե լինի, ժխոր, խառնուրդ...»
 Ո՛չ ոք, կասեմ քեզ անվարան.
 Սոսկ ընտանիքը սեփական:
 Խո՛սք տուր, դե լա՛վ, լո՛ւռ ես կրկին.
 Դե՛հ:—«Լա՛վ, գնա՛նք:»—Իմ սիրելի՛:—
 Եվ նա պարպեց բաժակը լի
 Իր հարեան կնոջ պատվին,
 Հետո նորից բացեց զրույց
 Օլգայից: Սերն ա՛յս է հնուց:

L

Զվարթ էր նա: Վեհ ժամկետին
 Մնացել էր երկու շաբաթ.
 Ամուսնական առաքաստին
 Նվ պսակին դորովակաթ
 Սպասում էր նա խանդավառ.
 Հիմենի հոգսերն անհամար
 Նվ պահերը պաղ հորանջի
 Դեռ նյութ չէին իր անրջի:
 Մինչ մենք՝ թշնամիք Հիմենի,
 Տեսնում ենք տան հարկում միայն
 Պատկերների տաղտուկ շարան,
 Սոսկ վեպ՝ ոգով Լաֆոնտենի:²⁶
 Խեղճ Լենսկի. նա դժբախտաբար,
 Մնված էր այդ կյանքի համար:

LI

Սիրված էր նա... գոնե հաստատ
 Այդ մտքին էր նա բախտավոր:
 Ո՛հ, փառք է, երբ ունես հավատ,
 Երբ քնկճելով պաղ միտքդ չոր՝
 Սրտի վայելքն ես կլանում,
 Ինչպես ճամփորդն իջևանում,
 Կամ թե ինչպես նուրբ թիթեռնիկ՝
 Գտած դարնան անուշ ծաղիկ:
 Նա է թշվառ, ով ապագան
 Տեսնել գիտի, ով չի շշմում,
 Ով շարժումն ու բառն է ատում՝
 Դեմ լինելով թարգմանության,
 Ում սիրտն արդեն փորձից սառել
 Նվ մոռացումն է արդելել:





ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Օ, թող չղգաս այս սարսափելի տանջանքը,
ի՛մ Սվետլանա, դու:

Ժուկովսկի

Ե

1

րկարել էր շունչը աշնան,
Ձէր երևում վերջն այն տարի,
Շատ ուշացավ հերթը ձմռան:
Հազիվ եկավ ձյուն հունվարի
Լույս երեքին: Հենց արթնացավ՝
Պատուհանից Տանյան տեսավ
Ամբողջապես հագած ճերմակ
Մարդեր, տանիք, ցանկեր ու բակ,
Էռսամուտներ բյուրեղազարդ,
Նուրբ արծաթով պատած ծառեր,
Բակում ուրախ կաշաղակներ.
Ձմռան գորգը փայլուն ու հարթ
Պատել էր հանդ, լեռ ու բլուր
Եվ ամեն ինչ, և ամենուր:

II

Ձմեռ է արդ... Գեղջուկն ուրախ
 Սահնակով է հարթում ճամփան.
 Ջյան վրայով ձին գլխակալս
 Մի կերպ վարգում է անխափան.
 Փխրուն աղոս պատահելով
 Փոստակառքն է սուրում ճեպով՝
 Կառապանը նստած թառին,
 Կարմիր գոտիով, մուշտակ հագին.
 Բակում խաղում է մի տղա.
 Ժուլկային նա սահնակ դրել,
 Ինքն իբրեւ թե ձի է դառել.
 Սառեցրել է իր մատը նա,
 Բայց ծիծաղն է դարձյալ գալիս,
 Մայրն էլ ներսից ահ է տալիս:

III

Սակայն գուցե չի հրապուրում
 Քեզ այսպիսի պատկեր, որտեղ
 Ցած բնության շունչն է բուրում.
 Ընտիր ոչինչ չկա այստեղ:
 Ներշնչված մի պոետ ասածուց՝
 Գծել է վեա ոճով վաղուց
 Գեղապատկերն առաջին ձյան
 Եվ երանգներն անուշ ձմռան:²⁷
 Նա կգերի ձեզ, այդ գիտեմ,
 Զերմ տաղերում պատկերելով
 Գաղտնի զբոսանքը սահնակով:
 Բայց մրցելու ես միտք չունեմ
 Ո՛չ նրա և ո՛չ էլ քեզ հետ,
 Ֆինն աղջկա պայծառ պոետ:²⁸

IV

Տատյանան (ռուս հոգով աղջիկ,
 Պատճառն ինքն էլ շիմանալով)
 Շատ էր սիրում մեր գեղեցիկ
 Ռուսաց ձմեռն իր ցուրտ շնչով,
 Սառը եղյամն արևի տակ,
 Արշալույսի փայլ ու սահնակ,
 Վարդագույն ձյուն և ծննդյան
 Երեկոներ մութապատման:
 Հին հանդեսներն էին պահում
 Նրանք այդ երեկոների,
 Աղախիններն օրիորդների
 Վիճակն էին սիրով բացում
 Եվ գուշակում միշտ միևնույն
 Հաղթարշավով սպա փեսացուն:

V

Հավատում էր Տանյան մթին
 Զրույցներին հնամենի,
 Թուղթ բացելուն, երազներին
 Եվ գուշակող ուժին լուսնի:
 Նա վախ ուներ նշաններից.
 Իր նկատած ամեն իրից
 Գուշակում էր մի ինչ-որ բան՝
 Միշտ գերի հին ավանդույթյան:
 Վառարանի վերև կատուն
 Մռուաց, քիթը շփեց թաթով,
 Նշան էր դա խիստ ապահով,
 Որ հյուր կգա հենց իրենց տուն.
 Տեսավ ձախից վերևը յուր
 Զահեղ լուսնի դեմքն երկեղջյուր,

VI

Պիտի դողա և գունատվի:
 Իսկ երբ թռչեր աստղը ընկնող
 Մութ երկնքում խավարաշվի
 Եվ փշրվեր, այնժամ սրգող
 Նա շփոթված պիտի շտապեր,
 Քանի աստղը չէր մարել դեռ,
 Նրան հուշել իղձն իր սրտի.
 Կամ եթե սև վարդապետի
 Նա հանդիպեր պատահաբար
 Եվ կամ դաշտում մի նապաստակ
 Նրա ճամփան կտրեր արագ՝
 Շփոթված ու երկչուղահար,
 Հանձնված իր նախազգացման՝
 Պիտի սպասեր դժբախտության:

VII

Նա կարող էր նույնիսկ գտնել
 Սարսափի մեջ հմայիչ բան.
 Բնությունն է այսպես երկնել
 Մեզ՝ միշտ հակված հակասության:
 Ծնունդն եկավ: Ահա խնդր՝
 Զահելները բախտ են բացում.
 Նրանք չունեն դեռ ամսասանք,
 Նրանց առաջ հեռու մի կյանք
 Կա լուսավոր, խոստումնալից:
 Պառաւններն էլ, ակնոց դրած,
 Բախտ են բացում, դադաղ տեսած,
 Անդարձ զրկված ամեն ինչից:
 Եվ հույսն աննիւշ նրանց սակայն
 Խաբում է միշտ ձայնով մանկան:

VIII

Տանջան զննում է ուշադիր
 Հալած մոմը իր հրաշաձև,
 Եվ բացվում են հետաքրիր
 Շատ գաղտնիքներ նրա առջև:
 Խոր ասեսից, լիքը ջրով,
 Մատնիքներ են հանում հերթով.
 Եվ մատանին հանվեց նրա
 Այս տաղիկի հետ հնօրա.
 «Բահերով են դիզում արծաթ,
 Այնտեղ հարուստ են գյուղացիք.
 Այս երգի հետ քող գա բարիք
 Եվ փառք»: Սակայն երգն այս վհատ
 Չարաբեր է, իսկ էգ կատվին²⁹
 Աղջիկը մոտ կզգա սրտին:

IX

Յուրտ գիշեր է, երկինքը՝ ջինջ.
 Բույլով թովիչ ու ներդաշնակ
 Հոսում են մեղմ աստղերն աննինջ...
 Տառյանան լուռ դուրս եկավ բակ՝
 Թեթև զգեստ գցած ուսին,
 Եվ հայելին պարզեց լուսնին:
 Մութ հայելում ահա մենակ
 Դողում է մի թախծոտ լուսնակ...
 Սո՛ւա... ձյան ճռուց... անցավ մի մարդ:
 Տանջան մոտ է վազում նրան
 Եվ սրնգի երգի նման
 Մեղմիկ հարցմունք անում զվարթ.
 «Ձե՛ր անունը»:³⁰ Անցորդն զգոն
 Պատասխանում է՝ Ագաֆոն:

X

Տանջան ուզեց, որ աչդ գիշեր
 Գուշակի յուր բախտն անպայման,
 Բաղանիքում տվեց պատվեր
 Բացել երկու մարդու սեղան.
 Բայց երկյուղից մարեց հանկարծ...
 Սվետլանային ես էլ հիշած,
 Սարսափեցի,—ի՜նչ արած, մենք
 Գուշակելուց եկ հրաժարվե՛նք:
 Տանջան գոտին, շորերը յուր
 Հանեց, մտավ նուրբ անկողին:
 Լեւն է ճախրում նրա գլխին,
 Իսկ բարձի տակ թավափետուր
 Հայելին է հանգչում կախարդ:
 Տատյանան լուռ քնած է արդ:

XI

Տանջան տեսավ հրաշք երազ.
 Իբրեւ թե նա անցնում է լուռ
 Մի ձյունափայլ դաշտով անհաս,
 Շրջապատված մեզով տխուր.
 Նրա դիմաց, ձյան շեղջերում
 Աղմկում է, ալիք բերում
 Խլթխլթացող, մուգ, փրփրած
 Մի հեղեղատ, դեռ չսառած.
 Վրան գցված է երկու ձող՝
 Սառցով իրար զոդված, բարակ,
 Որպես խաբկան, թույլ կամրջակ.
 Եվ հորձանքի դեմ աղմկող,
 Նա շվար ու կասկածավոր
 Կանգ է առնում մտամոլոր:

XII

Տանյան հեղեղն է անիծում,
 Անհաճո և ուղեխափան,
 Բայց այն ափին մարդ չի տեսնում,
 Որ ձեռք մեկնի մտերմական:
 Հանկարծ մի շեղջ շարժվեց տեղից՝
 Եվ ո՞վ դուրս դար նրա տակից.
 Խոշոր մի արջ տատառակազեղմ:
 Տատյանան՝ ա՛խ, իսկ արջը մեղմ
 Մնչաց և թաթն իր սուր ճանկով
 Մեկնեց նրան. Տանյան պնդված,
 Դողդոջ ձեռքով նրան հենված՝
 Անցավ երկշոտ և թույլ քայլքով
 Գետակը և դիմեց առաջ.
 Բայց ի՞նչ. ետևն արջն էր ճանաչ:

XIII

Սիրտ շանելով ետ նայելու՝
 Փորձում է նա արագ քայլել,
 Բայց լակեյից բռնոտ, հլու
 Չի հաջողվում հեռու փախչել.
 Փնշում է նա, հեռւմ անդուր:
 Նրանց դիմաց անտառն է յուր
 Փիճիներով մռայլացած.
 Փերթերը ձյան կախել են ցած
 Բոլոր ոստերն. կեշու, բարդու
 Եվ մերկ լորու սաղարթներից
 Երկնի ցուքն է իջնում վերից.
 Ճամփա չկա. բուքն ահարկու
 Ծածկել է թուփ, մացառ, ձորակ
 Եվ խոր թաղել ձյան շերտի տակ:

XIV

Տանյան՝ անտառ, արջը նույնպես.
 Ձյան մեջ վազում է ծնկահան.
 Մերթ մի երկար ոստ է անտես
 Ճանկում վիզը, մերթ մի ճիրան
 Գինդն աղանջից պոկում ոսկի,
 Մերթ էլ կաշուն ձյան մեջ ոտքի
 Մխրճվում է կոշիկը թաղ.
 Մեկ թաշկինակն է գցում ցած
 Եվ երկյուղից չի վերցնում.
 Վազող արջը մոտ է իրեն,
 Եվ նա դողդոջ ձեռքով արդեն
 Քղանցք բռնել չի հանդգնում:
 Վազում է նա, արջն ետևից,
 Բայց նա շուտով ընկավ ուժից,

XV

Փռվեց ձյան մեջ. և արջը բիրտ
 Վերցնում է նրան, տանում:
 Անզգա է Տանյան, անսիրտ,
 Շարժում շունի, շունչ չի հանում,
 Բայց սուրում է արջն անհառաչ:
 Ահա մի խուղ նրանց առաջ,
 Ծառերի մեջ, ամեն կողմից
 Ձյունաշեղջով պատած դրսից.
 Պատուհանում լույս կա առատ,
 Աղմուկ է ներսն ու ճիշ ահեղ:
 Արջն ասաց. Բավորս է այստեղ,
 Կտաճացնի նա ֆեզ ֆիշ-շատ:
 Եվ ուղղակի դիմեց սրահ,
 Նրան շեմքին դրեց մի պահ:

XVI

Տանյան սթափվեց, էլ արջը այն
 Չկար. ինքը շեմքին էր դեռ.
 Լսեց ճիշեր, բաժակի ձայն,
 Կարծես ներսում խնճուկք լիներ:
 Չհանելով գլուխ այդտեղ՝
 Նա ներս նայեց ճեղքից մի նեղ.
 Եվ ի՞նչ տեսնի. բացված սեղան,
 Հրեշների մի մեծ շրջան:
 Մեկը հղջյուր ունի, շան դունչ,
 Մյուսն աքլորի գլուխ, տեսեք,
 Այժամորուք կախարդ կա սեգ,
 Ահա՛ կմախք՝ շարժվող-անշունչ,
 Պոչով թզուկ, ա՛յ հզակի
 Խառնուրդ կատվի և կռունկի:

XVII

Բայց այդ չէր դեռ ահ ու դարմանք.
 Ա՛յ սարդ հեծած մի խեցգետին,
 Կարմիր գլխանոցով մի գանգ՝
 Հարմար թառած սաղի վզին.
 Հողմաղացն է պարում նստած,
 Շարժում թևերն իր լայն բացած,
 Քրքիջ, երգ, ծափ, սուլոց, հաչյուն,
 Մարդկանց բարբառ, ձիու դուխուն:³¹
 Սակայն Տանյան ի՞նչ մտածեր,
 Երբ նրանց մեջ տեսավ հանկարծ
 Նրան, ում սեր ուներ պահած՝
 Բուն հերոսին վեպի այս մեր:
 Օնեգինը, բազմած սեղան,
 Նայում էր միշտ ճեղքին դռան:


XVIII

Իշխում է նա իր ակնարկով.
 Խմի՛ նրանք էլ են խմում,
 Խնդա՛ նրանք նույնպես խմբով,
 Հոնքեր կիտի՛ սուս են անում:
 Նա տեր է, այդ պարզ է, հայտնի,
 Տանյան արդեն էլ ահ չունի
 Եվ նա մտքով մի դայթակղիչ
 Բացում է դուռն արդեն մի քիչ.
 Փչեց քամին՝ հանգցնելով
 Լույսերն անդոր ճրագների.
 Հուզվեց խումբը հոգիների.
 Օնեգինն իր հրոսախմբով,
 Փայլահայացք, որոտալից
 Շարժվեց դեպի դուռն իր տեղից:

XIX

Տանյան սարսեց և անհամբեր
 Փորձեց փախչել վհատ, սրդող,
 Սակայն վազքի նա ուժ չուներ,
 Նույնիսկ ճշալ նա չէր կարող:
 Դուռն Եվգենին հրեց թեթև
 Եվ շար ոգիների առջև
 Ահա աղջիկ. խուլ, վայրապար
 Ծիծաղ պայթեց: Բոլորն էլ շար՝
 Սմբակ ու աչք, կնճիթ պռատ,
 Ժանիք ու բեղ և պոչ բրչոտ,
 Եղջուր, սապատ, լեզու արնոտ,
 Ծուռտիկ մուռթ և ոսկրոտ մատ
 Նրան ուղղած և անխնա
 Գոռում են՝ ի՛մն է, ի՛մն է նա:





XX

Ի՛մն է, սաստեց Եվգենին գոռ,
 Եվ չքվեցին հտալիտ ոգիք.
 Խավար ցրտում խորհրդավոր
 Մնացել են նա և աղջիկ.
 Եվգենին ներս տարավ նրան,³²
 Մի անկյունում նա անվարան
 Դրեց խարխուլ նստարանին
 Եվ գլուխն իր նրա ուսին
 Թեքեց: Մեկ էլ Օլգան մտավ,
 Հետը Լենսկին. ահա և լույս:
 Օնեգինը ձեռքն իր անհույս
 Յնցեց, տեսքով քինածարավ
 Հայհոյում է անկոչ մարդկանց:
 Լուռ պառկած է Տանյան ուշանց:

XXI

Աղմուկ ու վեճ, դանակն երկար
 Եվգենին ձեռքն առավ շտապ.
 Ընկավ Լենսկին, տիրեց խավար,
 Մթնում լավեց մի հուսահատ
 Ճշոց... հանկարծ խուլը ցնցվեց...
 Եվ Տառյանան ահով զարթնեց...
 Տեսավ՝ արդեն լույս է հաստատ,
 Լուսամուտից սառուցապատ
 Այգաշողն է խայտում բոսոր:
 Բացվեց դուռն ու ներս թռավ ժիր,
 Հյուսիսային արվուց կարմիր
 Օլգան՝ աշխուժ ու բախտավոր.
 «Դե՛,—ասում է,—պատմի՛ր տեսնեմ,
 Երազում ո՞վ կանգնեց քո դեմ»:

XXII

Բայց իր քրոջ այցին անգետ՝
 Պառկած է նա ձեռքին մի գիրք:
 Եվ թերթելով այն ականգետ
 Նա լուռ է և կարծես անկիրք:
 Այդ գիրքն իր մեջ շուներ իսպառ
 Ո՛չ պոետի երկունք պայծառ,
 Ո՛չ նկարներ կամ խոհ կարգին.
 Բայց ո՛չ Վերգիլ և ո՛չ Ռասին,
 Սենեկա, Սկոտ, Բայրոն հպարտ,
 Կամ «Նորաձև Կանանց Հանդես»
 Ու ռքի շեն դյուլթել այդպես.
 Զաղեկան էր՝ Մարտինն անպարտ՝³³
 Քաղդեական իմաստնապետ,
 Բախտադուշակ երազագետ:

XXIII

Այդ խորիմաստ երկը մի օր
 Շրջիկ վաճառականն իրենց
 Գյուղը բերեց խուլ, մենավոր.
 Սակարկելով, վերջը զիջեց,
 Մալվինան էլ դրած վրան՝
 Երեք ու կես ուրբելով նրան,
 Վերցնելով հետն էլ մի ստոր
 Առակագիրք, երկու կտոր
 Պետրիադա, մի Քերական,
 Մարմոնտելի հատորը հին:
 Տանյան Մարտին Զաղեկային
 Սիրեց... Ամեն վշտի դարման
 Նրա մեջ էր նա միշտ գտնում
 Եվ նրա հետ անխախտ քնում:

XXIV

Տանջված իր երազից պղտոր
 Եվ անկարող՝ մի կերպ մեկնել,
 Նա ուզում է այդ ահավոր
 Երազի մեջ իմաստ գտնել:
 Սեղմ ցանկի մեջ Տանյան խռով
 Որոնում է այբուբենով
 Այս բառերը՝ անտառ, արջ, բուք,
 Կամրջակ, հողմ, ողնի, վհուկ:
 Բայց կասկածին աղետաբեր
 Զադեկան էլ լուծում չունի,
 Թեև երազն իր այդ դժնի
 Բերելու է չար արկածներ:
 Մի քանի օր այդպես անցավ,
 Նա երազն այդ շմուռացավ:

XXV

Բայց այդը իր ձեռքով բոսոր³⁴
 Հեռու հովտից բերեց ձմռան
 Արևի հետ և բախտավոր
 Տանյայի տոնն ավանդական:
 Հարինենց տունն առավոտից
 Ժամանում են ծանոթ, դրկից
 Ամբողջ տնով՝ վաշով, կառքով,
 Կիսակառքով ու սահնակով:
 Դավթում՝ տազնապ, հեք, հրմշտոց,
 Դահլիճում՝ նոր հանդիպումներ,
 Շան հաշոց ու կանանց պաշեր,
 Շեմքում՝ աղմուկ, ճիշ, քրքրոց,
 Ողջագուրանք, պատիվ ալժան,
 Դայակի ճիշ և լաց մանկան:

XXVI

Յուր կնոջ հետ՝ գիրուկ անտես,
 Պուատյակովը եկավ խիստ գեր.
 Գլուզդինը՝ աննման տնտես
 Եվ մուրացիկ ճորտերի տեր.
 Սկոտինին մարդ ու կինը ծեր
 Զավակներով մեծ ու կրտսեր՝
 Երկու տարուց մինչ երեսուն,
 Ֆրանտ Պետուշկովն գավառասուն.
 Բուլանովն՝ իմ քեռու որդին,
 Յուր գդակով հովարավոր.³⁵
 (Որ ծանոթ է ձեզ փառավոր)
 Եվ Ֆլանովը՝ խարդախը հին,
 Խորհրատուն պաշտոնաթող,
 Ծանակ, խժռող, կաշառք ուտող:

XXVII

Եկավ Խարլիկովի տան հետ
 Եվ սրախոս մոսյե Տրիկեն,
 Ակնոց դրած կեղծամն՝ աշխետ,
 Տամբովն հեռու թողած արդեն:
 Ֆրանսիացու իր բնազդով
 Նա զինվել էր մի կուպլետով
 Ըստ մանկական եղանակի՝
 Réveillee vous, belle endormie.
 Տատյանայի համար ջոկեց
 Հին տաղգրքից նա երգը այս,
 Իբրև պոետ ու մտահաս՝
 Նրան շիրմից աշխարհ հանեց
 Եվ այնտեղ, ուր կար belle Nina.
 Դարձրեց belle Tatiana.

XXVIII

Ահա եկաւ և անհամար
 Օրիորդների կուռքն անվանի,
 Եւ մայրերի ջերմ մխիթար
 Մի վաշտապետ մոտ ավանի:
 Ո՛հ, նորությո՛ւն, ի՛նչ բախտ է դա՝
 Նվազախումբ գնդից կգա.
 Գնդապետն է կարգել այգապետ,
 Ա՛յ թե կանեն պարահանդես.
 Աղջկերքն են ցատկում խինդոտ:³⁶
 Բայց ճաշ տրվեց, զույգերն արդեն
 Շտապում են, որ տեղ բռնեն.
 Օրիորդները՝ Տանյայի մոտ,
 Տղամարդիկ՝ դեմ հանդիման,
 Խաչ են հանում, նստում սեղան:

XXIX

Մի պահ լռեց զրույցն անկարգ.
 Ծնոտները ծամում են լուռ,
 Թնդում ափսե, պնակ ու սարք,
 Բաժակները զնգում ամուր:
 Բայց հյուրերը նորից ու նոր
 Բարձրացնում են աղմուկ, ժխոր,
 Բան չեն լսում, վիճում, ճղղում,
 Ծշում են զիւ և ծիծաղում:
 Հանկարծ կենսկին ներս է գալիս
 Եւգենու հետ: Տանտիրուհին
 Յնծում է,—«Վերջապե՛ս, կրկի՛ն».
 Բացում են տեղ, աթոռ տալիս
 Նորեկ ընկերներին սիրով՝
 Հրավիրելով նստել փութով:

Նստեցին Տանյայի դիմաց,
 Եվ ցերեկվա լուսնից գունատ,
 Փախչող վիթից ահահայաց՝
 Նա աչքը յուր մութ ու վհատ
 Զի բարձրացնում: Լափող մի հուր
 Ունի կրծքում. նվաղ է, լուռ,
 Եվ շի լսում նույնիսկ արդեն
 Նրանց բարեն ուղղված իրեն:
 Աչքից պղտոր արցունք կախվեց,
 Խեղճը հիմա կուշաթափվի,
 Բայց նա կամքով, ուժով խոհի
 Իշխեց իրեն և թոթովեց
 Մի երկու բառ՝ բերանը փակ,
 Նստած անշարժ և գլխահակ:

XXXI

Զղա-ողբերգական պոռթկում,
 Ուշաթափում, աղջկա լաց
 Վաղուց էր Եվգենին ատում,
 Իբրև նրանց շատ հանդուրժած.
 Խենթուն այստեղ, քեֆում ուրախ,
 Սրտենդում էր: Սակայն նվաղ
 Հույզի առաջ աղջկային
 Իր հայացքը կախեց գետին,
 Փքվեց արդեն ու զայրացած
 Վճռեց Լենսկուն կատաղեցնել
 Եվ նրանից վրեժ հանել.
 Իր այդ վճռից ոգևորված՝
 Մտքում գծեց նա անթերի
 Ծաղրանկար շատ հյուրերի:

XXXII

Միայն Եվդենին շէր տեսնի
 Տատյանայի հուզումն անել,
 Բայց այդ պահին նրա տոնի
 Կարկանդակն էր աչք, միտք գերել.
 (Թեև աղի էր բավական),
 Իսկույն բերվեց և տապական.
 Հետո բերին, մինչ բլանմանժեն,
 Յիմլյանի գինու շիշն արդեն,
 Ըմպանակներ նեղ ու երկար,
 Նման, Զիզի', քո իրանին,
 Դու իմ հոգու բյուրեղ անգին,
 Որ տաղերիս աղբյուր եղար,
 Սիրաբորբոք իմ փիալա՜,
 Որով հաճախ արբած եղա:

XXXIII

Պոկվեց խցանն արդեն խոնավ
 Շշից. փրփրած շաշեց գինին.
 Տրիկեն խիստ լուրջ կեցվածք առավ՝
 Տանջված իր կուպլետի ձեռքին,
 Եվ վեր կացավ: Հյուրերն իսկույն
 Սահմանեցին խոր լուսթյուն:
 Տանյան նվաղ էր շատ: Նրան
 Դիմեց խոնարհ և բաղաձայն
 Երգեց Տրիկեն: Ծափեր, հառաչ
 Հասան երգչին: Արդ, հարկ է, որ
 Տանյան երգչին գլուխ տա խոր:
 Եվ մեծ, բայց հեզ պոետն առաջ
 Տատյանայի կենացն ըմպում,
 Եվ կուպլետն է նրան հանձնում:

XXXIV

Տանյան ողջուններին անբավ
 Շնորհակալիք հայտնեց սրտանց.
 Երբ Եվգենու հերթը հասավ՝
 Այդ աղջկա շփոթն անանց,
 Նվաղ ու թույլ տեսքը նրբին
 Նրա հոգում խիղճ արթնացրին.
 Եվգենին լուռ գլուխ տվեց,
 Սակայն նրա աչքում փայլեց
 Մի փաղաքշանք: Ի՞նչ բան էր այդ,
 Աղբված սրտի անկեղծ թարգման,
 Թե՞ սոսկ կատակ սովորական,
 Սկամա՞, թե՞ կամք բացահայտ,
 Բայց կար շոյանք այդ հայացքում.
 Եվ Տանյան կյանք զգաց սրտում:

XXXV

Աթոռները քաշվում են ետ,
 Եվ հյուրերը դահլիճ թափվում.
 Մեղուններն են դեպ ծաղկավետ
 Դաշտերն այդպես պարսով թռչում:
 Տոնի ճաշից դոհ, լրջադեմ՝
 Ֆասացնում են հյուր հյուրի դեմ.
 Վառարանն են կանաչք պատում,
 Աղջիկները կամաց խոսում:
 Սեղաններն են բացվում կանաչ.
 Կանչում են արդ մոլիներին.
 Բոստոն և լոմբեր ծեփերին,
 Եվ վիստ հայտնի ու սրտահաճ.
 Ընտանիքը՝ միօրինակ,
 Բոլորն անհագ թախծի զավակ:

XXXVI

Արդեն ութ ոտքեր խաղացին
 Վիստամոլներն, և ութ անգամ
 Նրանք տեղեր փոփոխեցին.
 Ահա և թեյ: Սիրում եմ ժամ
 Իմանալը ճաշ, թեյ, ընթրիք
 Վայելելով: Գյուղի մարդիկ՝
 Մենք հեշտ ենք ժամն իմանում ճիշտ,
 Մեր Բրեդետը ստամոքսն է միշտ:
 Փակագծում դիտեմ ի դեպ,
 Որ ես երգի իմ տներում
 Բարեհաճ եմ նույնչափ լինում
 Ճաշի, քեֆի, դինու հանդեպ,
 Որքան և դու, Հոմե՛ր բարի,
 Կուռքդ երեք տասնյակ դարի:

XXXVII. XXXVIII. XXXIX

Հազիվ թեյը բուրումնալից
 Աղջիկները քաշեցին մոտ,
 Հանկարծ երկար, մեծ դահլիճից
 Զիլ հնչեցին ֆլեյտա, ֆադոտ:
 Ռումով թեյն իր կիսատ թողած,
 Պետուշկովը՝ նվագ լսած,
 Իբրև Պարիս խոլ գավառի
 Օլգային է կանչում պարի,
 Լենսկին՝ տրտում Տատյանային.
 Խարլիկովան՝ հին հարսնացուն
 Թւն է դիջում մեր ֆրանսացուն,
 Պուտյակովան Բուչանովին,
 Եվ դահլիճ են մտնում ալդպես,
 Բացում շքնաղ պարահանդես:

Վեպիս առաջին իսկ տետրում
 (Դուք կհիշեք) Ալբանու պես
 Նկարագրել էի ուզում
 Պետերբուրգյան պարահանդես.
 Սակայն, տարված սին տենչանքով,
 Ես արթնացրի իմ մեջ խռով
 Կանանց ոտիկների հուշեր:
 Ձեր նուրբ հետքերն, ո՞վ ոտիկներ,
 Էլ չպիտի ինձ գայթակղեն.
 Ջահելությունն իմ դավաճան
 Մղում է ինձ խելոքության.
 Գործս ու ոճս պիտի շտկվեն,
 Եվ հինգերորդ տետրս պիտի
 Զեղումներից մաքրեմ սրտի:

Միօրինակ, անմիտ, փութկոտ,
 Ջահել կյանքի հողմի նման,
 Պատվում է վալսն աղմկոտ,
 Զույգերն անցնում՝ կազմած շրջան:
 Իր վրեժի պահն զգալով
 Եվ գաղտնաբար ծիծաղելով՝
 Օնեգինն Օլգային բռնած,
 Վալս է պարում կրակ կտրած.
 Նստեցնում է հետո նրան
 Զրուցում է հետը աշխույժ,
 Երկու բոպե անցած, ոչ ուշ,
 Նորից քաշում վալսի շրջան:
 Բոլորին զարմանք է տիրել,
 Լենսկին՝ զայրույթից շվարել:

XLII

Հնչեց մազուրկան: Բայց հնում,
 Երբ այդ պարը թնդում էր բարկ,
 Մեծ դահլիճն էր հիմքից դողում,
 Պարկետ ճալթում ոտքերի տակ,
 Յնցվում, ճռռում դուռ, պատուհան,
 Իսկ մենք հիմա, կանանց նման,
 Սահում ենք հարթ, լերկ հատակով:
 Բայց դավառում յուր հին կյանքով
 Ապրում է դեռ պարն այդ պայծառ՝
 Նախնադարյան իր նույն գեղով,
 Կրունկներով, ցատկով, բեղով:
 Եվ չի փոխել դրան իսպառ
 Ճարպիկ մոգան ամենազոր՝
 Ռուսաստանցոց ախտը այս նոր:

XLIII. XLIV

Բուլանովն, իմ շար քեռորդին,
 Օնեգինի առաջ բերեց
 Տատյանային և Օլգային.
 Նա Օլգային թեք մեկնեց,
 Հետը պարի ելավ ճարպիկ.
 Շշնջում է նրան հուշիկ
 Ինչ-որ կոպիտ մի մադրիզալ,
 Ձեռքն էլ սեղմում. այտերը ալ
 Ինքնահավան օրիորդի
 Վառ շիկնեցին, և լենսկին այդ
 Տեսավ խռով ու բարկացալ.
 Իր խանդի մեջ ու զայրույթի՝
 Պարի վերջին է նա մնում,
 Վերջնապարի նրան կանչում:

Բայց մերժում է նա: Ի՞նչ. իրո՞ք:
 Օլգան խոսք է տվել արդեն
 Օնեգինին:—Տե՛ր իմ, արդյոք
 Նա ճի՞շտ լսեց: Օլգան իրե՞ն...
 Կարո՞ղ է այդ... Դեռ բարուրտ՝
 Կոկետուլթյո՞ւն անի իր մոտ.
 Խորամանկ է արդեն դարձել,
 Դավաճանման դասեր փորձել:
 Վլադիմիրը այժմ անճարակ,
 Կանանց չար խաղն անիծելով,
 Դուրս է գալիս, ձին խնդրելով՝
 Մեկնում: Մի գույգ ատրաճանակ,
 Երկու գնդակ—և ո՛չ այլ բան—
 Իրեն բախտի վճիռ կտան:



ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

Lá, sotto i giorni nubilosi e brevi,
Nasce una gente a cui l'morir non dole
*PETR.**

Այնտեղ, ուր օրերը ամպոտ են և կարճ,
ծնվում է մի ցեղ, որի համար մեռնելը ցավ չէ:
Պետրարկա

I



Եսնելով, որ Լենսկին գնաց,
Օնեգինը, կրկին թախծոտ,
Իր վրեժից գոհ մնացած՝
Մտազբաղ էր Օլգայի մոտ:
Հորանջում էր սա էլ տրտում
Եվ աչքերով Լենսկուն փնտրում,
Կոտիլյոնից ձիգ ու անվերջ
Տանջվում, ինչպես երազի մեջ:
Բայց վերջ: Ժամն է և ընթրիքի:
Եվ անկողնի փուլեց շարան
Գալթից մինչև նաժշտարան.
Քունն է գալիս արդ ամենքի:
Միայն եվդենին մեր թախծուն
Մեն-միայնակ մեկնեց իր տուն:

II

Իշխեց անդորր: Մեծ դահլիճում
 Պուտայակովն է ծանր մարմնով
 Իր գեր կեսի կողքին խորդում.
 Բույանով, Գվողդին, Պետուշկով
 Եվ թույլ Ֆլյանով՝ սեղանատան
 Աթոռների վրա ընկան.
 Իսկ թասակով մոսյե Տրիկեն
 Հատակին է քնել արդեն,
 Աղջիկներն էլ՝ Տատյանայի
 Եվ Օլգայի սենյակներում.
 Պատուհանի առջև, տրտում,
 Շաղված լույսով Դիանայի՝
 Խեղճ Տանյան է խռովահար
 Նայում հեռու դաշտին խավար:

III

Օնեգինի այցն այդ անդետ,
 Շոյանքը մեղմ, արտասովոր
 Նրա վարմունքն Օլգայի հետ
 Տատյանային աղդել են խոր
 Եվ վրդովել: Նա չի գտնում
 Դրանց համար ոչ մի մեկնում,
 Տանջվում է իր խանդոտ թախծից.
 Կարծես մի պաղ ձեռք է ներսից
 Սեղմում սիրտն ու շարաբերան
 Սև վիհ բացում խուլ դղիրդով:
 «Կկործանվեմ,—անցավ մտքով,—
 Բայց հաճո է զոհվել նրան.
 Ես չեմ ուզում զուր տրանջալ:
 Ո՛չ. բախտ նա ինձ չի կարող տալ»:

IV

Առաջ, անի՛վ իմ պատմութեան,
 Նոր դեմք է մեզ կանչում կրկին:
 Հինգ վերստ հեռու լենսկու ավան
 Կրասնոգորից՝ գյուղում իր հին
 Զարեցկին է առողջ ապրում՝
 Փիլիսոփան՝ անապատում.
 Հնում շար էր և կովարար,
 Թղթախաղի հրոսակավար,
 Ստահակ, հոետոր պանդոկասեր,
 Այժմ՝ արդեն անկին մի այր,
 Ընտանիքի հասարակ հայր,
 Խաղաղ ու հաշտ կալվածատեր,
 Նույնիսկ ազնիւ, ընկերական.
 Շտկվում է այսպես ներկան:

V

Առաջ քծնող լեզվով նրա
 Չար քաջութունն էին գովում.
 Հինգ սաժենից, ոտքի վրա,
 Նա գնդակով տուզն էր խոցում:
 Ճիշտն ասած, նա մարտի մեջ էլ
 Կարողացավ փառք վայելել,
 Երբ կալմիկյան ձիուց հանկարծ
 Յեխերի մեջ փռվեց հարբած՝
 Ֆրանսիացոց դարձավ գերի:
 Ահա Ռեզուլն այս նորագույն՝
 Պատվի աստվածն տնագորույն,
 Դեմ չէ, որ նոր կապանք կրի,
 Եթե միայն ծանոթ վերբին³⁷
 Գինի տա միշտ պարտքով կրկին:

VI

Նա ծաղր ուներ հնում կարգին.
 Կարող էր լուրջ թվալ հիմար,
 Հիմարացնել լաւ խելոքին
 Կա՛մ բացահայտ, կա՛մ ծածկաբար,
 Թեև կատակն ու խաղն ուրախ
 Էժան չէին նստում հաճախ.
 Մեկ էլ տեսար՝ խրվեց անբան,
 Անփորձ մի համբակի նման:
 Սակայն զիտեր վիճել աշխույժ,
 Պատասխան տալ անմիտ և սուր,
 Որոշ հաշվով մնալ մերթ լուռ,
 Որոշ հաշվով լեզվին տալ ուշժ,
 Ընկերներին լարել ջահել,
 Մենամարտի նրանց հանել,

VII

Կամ հաշտեցնել կրկին սիրով,
 Որ նրանց հետ նստի սեղան,
 Հետո ստով կամ կատակով
 Ծածուկ հանի խայտառակման:
 Sed alia tempora, կտրիճն,
 (Ինչպես սերը՝ երազ թովիչ)
 Խամրում է միշտ ծերության մոտ:
 Զարեցկին, ձեզ արդեն ծանոթ,
 Այգու ստվերում երանատես,
 Կյանքի հողմից արդեն հեռու,
 Իբր իմաստուն և փորձառու,
 Մշակում էր կաղամբ, ինչպես
 Հորացիոսը, սագ, բադ բուծում,
 Մանկանց գլուխն ալբբեն մուծում:



VIII

Հիմար չէր նա. նրա սրտին
 Եվզենին չէր տածում հարգանք.
 Բայց սիրում էր դատման ոգին
 Ու միշտ առողջ խելքը անկանգ:
 Մեկ-մեկ առանց դժգոհ սրտի
 Հանդիպում էր նրան, ուստի
 Չզարմացավ առավոտյան,
 Երբ որ իր մոտ տեսավ նրան:
 Նա բարեկեց, միանգամից
 Բացած զրույցն ընդհատելով՝
 Սրան հանձնեց քմծիծաղով
 Մի կարճ երկտող բանաստեղծից:
 Եվզենին պատուհանի մոտ
 Երկտողը լուռ կարդաց փութկոտ:

IX

Դա հաճելի և զուսպ ու սեղմ
 Մարտակոչ էր ազնիվ սրտի.
 Լենսկին նրան պարզ, սառն ու մեղմ
 Հրավիրում էր մենամարտի:
 Եվզենին մեկ շարժամբ կտրուկ
 Դիմեց դեսպանին նորելուկ,
 Հակիրճ, արտաքնապես անվիշտ
 Ասաց՝ ինքը պատրաստ է միշտ:
 Զարեցկին վեր կացավ անձայն.
 Մնալն արդեն իմաստ չունեի,
 Թողել էր նա անշափ դորձեր,
 Ուստի շտապ մեկնեց: Սակայն
 Եվզենին իր հոգու խորքում
 Գոհ չէր քայլից իր անդատում:

X

Եվ հիրավի, նա դադարեց
 Շատ բանում էր ամբաստանում
 Իրեն հիմա. նախ՝ նա արդեն
 Մեղավոր էր հենց այն բանում,
 Որ ծաղրել էր երեկոյան
 Երկշոտ մի սեր նվիրական:
 Երկրորդ՝ առհնժ խենթ էր վարվում
 Բանաստեղծը. տասնութ տարում
 Ներվում է այդ: Բայց ինքն անմար
 Սեր տածելով այդ տղային՝
 Նախապաշար մտքի ձևերին
 Չպետք է մի գնդակ դառնար,
 Կամ մի մանուկ՝ կռվի պատրաստ,
 Պետք է գործեր պատվով, զգաստ:

XI

Թող իր հուզմունքն արտահայտե՛ր,
 Ո՛չ թե դառնար մոլի գաղան.
 Պիտի միայն զինաթափեր
 Նրա ջահել սիրտն անպայման:
 «Ուշ է արդեն,—նա մտածեց,—
 Երբ մանավանդ գործին լծվեց
 Հին դուելիստն այս կռվարար:
 Շաղակրատ է սա, նենդ ու շար...
 Սրա զրպարտանքը գալիք
 Ինքը, ճիշտ է, կարհամարհի.
 Իսկ շշուկը հիմարներին...»
 Ահա և հանրային կարծիք³⁸:
 Պատիվն է մեր կողմն անկասկած,
 Եվ նրան է աշխարհն հենված:

XII

Լենսկին տանը խիստ, անհամբեր,
 Սպասում է եռուն ոխով.
 Նկավ դրկիցն իր ճառասեր
 Հանդիսավոր պատասխանով:
 Հրճվեց խոլույն խանդի գերին.
 Նա վախ ուներ, որ արկածին
 Տալով բնույթ լուկ կատակի
 Նվ գիմելով պատրվակի՝
 Նվգենին խույս տար գնդակից:
 Բայց փարատվեց կասկածն արդեն,
 Զրադացի մոտ պիտի լինեն
 Իրենք վաղը լուսաբացից,
 Իրար վրա բացեն հրահան՝
 Զխտը կամ քունքն ընտրած նշան:

XIII

Վառված Լենսկին վճռեց ատել
 Կոկեսուհուն և էլ կրկին
 Մինչ մենամարտ շտեմնվել:
 Նրկար նայեց ժամացույցին,
 Բայց թափ տվեց ձեռքը վերջում
 Նվ հայտնվեց նրանց շեմքում.
 Ուգեց այցով այդ շտպասված
 Օլենկային տալ մի հարված:
 Սակայն չեղավ ինչպես և միշտ,
 Խեղճ պոետի առաջ թռավ
 Օլգան գավթից լուսաթաթավ,
 Թռչող հույսի նման, անվիշտ,
 Աշխույժ, անհոգ, խինդաշառաչ՝
 Իսկ և իսկ այն, ինչ որ առաջ:


XIV

«Ինչո՞ւ երեկ փախաք շուտով»:
 Եղավ նրա հարցն առաջին:
 Լենսկին շփոթ հուզումներով
 Իսկույն քիթը կախեց գետին:
 Անհայտացան խանդ ու զայրույթ
 Այդ հայացքի առջև անքույթ,
 Այդ ջերմիկ պարզության առջև,
 Այդ թրվուուն հոգու առջև.
 Տեսավ՝ սիրում է դեռ իրեն:
 Եվ, զղջումից մղված, արդեն
 Պատրաստ էր նա խնդրել ներում.
 Բառ չէր գտնում լեզվում ամբողջ:
 Երջանիկ էր, նույնիսկ առողջ:

XV

.

XVI



XVII

Նորից վհատ, տարված խոհով
 Օլգայի մոտ իր սիրարժան՝
 Վլադիմիրը շունի կորով
 Նախատելու նույնիսկ նրան:
 Մտածում է՝ «փրկիչ լինեմ
 Եվ թույլ չտամ, որ այն դժխեմ
 Այլասերիչն իր կեղծ հրով
 Պղծի սրա սիրտն անխռով,
 Եվ կրծոտի որդը թունոտ
 Ցողունն առողջ իմ շուշանի,
 Ու կիսաբաց դեռ թառամի
 Սրա ծաղիկն երկառավոտ»:
 Հետևութունն այս էր արդեն՝
 Նրանք զենքով պիտի չափվեն:

XVIII

Թե գիտենար, ի՞նչ վերք էր խոր
 Տատյանայի սիրտը աչրում,
 Կամ թե Տանյան իմ վիրավոր
 Իմանար իր հոգով տրտում,
 Որ Եվգենին, Լենսկին պիտի
 Վաղը ելնեն մահու մարտի,
 Ա՛խ, այդ սերը դուցե կրկին
 Կմխացներ ընկերներին.
 Բայց տվաչտանքն այդ շէր հայտնի
 Ոչ ոքի դեթ պատահաբար.
 Օնեգինը լռում էր հար,
 Տառապում էր Տանյան դադտնի:
 Գուցե դայակն իր իմանար,
 Բայց կռահում էր սա դժվար:

XIX

Ողջ երեկոն Լենսկին ցրիվ,
 Մե՛րթ լռու էր, մե՛րթ՝ կրկին բացված:
 Այդպես են միշտ, ում որ մեղմիվ
 Մուսան շոյի: Մե՛կ հոնք կիտած՝
 Կլավիրոդի առջև նստում
 Եվ նույն աղորդն էր հնչեցնում,
 Մե՛կ Օլգային նայում մեղմիկ,
 Շնչնջում՝ «Ճի՞շտ եմ երջանիկ»:
 Ուշ է, մեկնել է հարկավոր.
 Ճմլվում է մեր պոետի
 Սիրտն ու ասես այդ հրաժեշտի
 Պահին լինում կտոր-կտոր:
 Անհանգիստ է Օլգան խոհուն.
 «Քեզ ի՞նչ եղավ»:—Ոչի՞նչ:—Եվ տուն:

XX

Տուն հասնելով՝ իսկույն զննեց,
 Ինչքան որ կար, ատրճաճակ,
 Դրավ տեղը, ապա հանվեց,
 Շիլլեր բացեց թույլ մոմի տակ:
 Բայց նա մեկ միտք չի մոռանում,
 Եվ արթուն է սիրտը տրտում.
 Նա իր առջև զմայլագեղ
 Օլգային է տեսնում շքեղ:
 Լենակին գիրքն է փակում ահա,
 Անում փետուր. և տաղն իր այս,
 Սիրով շնչող ու սինեթազ,
 Խոսող, հնչուն՝ կարդում է նա
 Քնարական բարձր տենդում,
 Ասես հարբած Դելվիզ քեֆում:

XXI

Այդ տաղն, ի դեպ, դեռ չի կորել.
 Ինձ մոտ ունեմ, ցույց տամ իսկույն.
 «Ո՛ւր եք, ո՛ւր եք դուք հեռացել,
 Իմ գարունքի օրե՛ր ոսկուն:
 Ի՞նչ է տալու օրն ինձ վաղվան.
 Զուր է որսում հայացքս այն,
 Խորունկ մեղն է նրան պատել.
 Հոգ չէ՛. բախտը ճիշտ է կարգել:
 Կընկնե՞մ արդյոք նետը կրծքիս,
 Թե նա մոտովս սոսկ կանցնի՝
 Մեկ է. ժամը հսկման, քնի
 Որոշ կարգով է միշտ դալիս:
 Օրհնյալ է և օրը փուլթի,
 Օրհնյալ է և այցը մութի:

XXII

Վաղը կգա շողն արփենի,
 Եվ կբացվի պայծառ մի օր.
 Իսկ ե՞ս,—դուցե սև դամբանի
 Շեմը մտնեմ խորհրդավոր,
 Եվ մեղմ լետան տանի իր հետ
 Զահել երգչիս հուշը անհետ,
 Մոռանա ինձ աշխարհն. իսկ դո՞ւ,
 Գեղո՞ն աղջիկ, կգա՞ս լալու
 Անժամ շիրմիս վրա խաղաղ,
 Կասե՞ս մտքում՝ նա ինձ սիրեց,
 Նա միմիայն ինձ նվիրեց
 Բուռն կյանքի ալյն անուրախ...
 Իմ բաղձալի՜ ընկեր անգին,
 Ե՛կ, ես լինեմ քեզ ամուսին:

XXIII

Գրում էր նա քառամ, մքին
 (Որ մենք ուսմանտիղմ ենք կոչում,
 Թեև չկա ամենևին
 Այդտեղ ուսմանտիղմ. չեմ վիճում)
 Եվ վերջապես, ալգից քիչ վաղ,
 Արդեն հոգնած գլուխը կախ,
 Ու հասնելով հույժ նորածե
 Իդեալ բառին՝ նիրհեց թեթև.
 Բայց հազիվ էր տարվել քնով,
 Երբ Զարեցկին, կարգի պահակ,
 Ներս մտնելով ննջասենյակ՝
 Արթնացրեց նրան կանչով.
 «Ելի՛ր, վեցից անց է, գիտե՞ս.
 Օնեգինը կսպասի մեզ»:

XXIV

Բայց սխալվեց. Եվզենին դեռ
 Քնած էր մեռելի նման:
 Արդեն ցրվում են մութ ստվերներ՝
 Հավքն է խոսել երեք բերան,
 Օնեգինը քնած է դեռ:
 Արեն արդեն սահել է վեր,
 Գալարվում է բուքը վայրագ
 Պսպղալով, բայց նա ներքնակ
 Դեռ չի լքել, հանգստավետ
 Քունն է ճախրում նրա վրա:
 Արթնանում է վերջապես նա՝
 Վարագույրը քաշում է հտ,
 Տեսնում՝ ուշ է, վաղուց ի վեր
 Ինքը մեկնած պիտի լիներ:

XXV

Ջանգ է տալիս. ներս է ընկնում
 Ֆրանսիացի Գիլյո ծառան,
 Խալաթ, կոշիկ մատուցանում,
 Սպիտակեղեն տալիս նրան:
 Իր ծառային, հագնվելով,
 Նա պատվեր է տալիս փութով
 Պատրաստ լինել տեղ գնալու
 Եվ զինարկղը վերցնելու:
 Բակում պատրաստ սահնակ ունի.
 Նստեց. դեպի ջրաղաց թռան.
 Այնտեղ նրան տվեց հրաման,
 Որ Լեպաժի³⁹ զենքերն առնի
 Եվ գա իր հետ, իսկ ձիերին
 Քշի դեպի այն զույգ կաղնին:

XXVI

Թմբին հենված և ակնդետ
 Լենսկին նրան էր սպասում,
 Մինչ գյուղական մեքենագետ
 Զարեցկին երկանքն էր ծաղրում:
 Եվդենին ներումով եկավ.
 «Ո՛ր է սակայն—խիստ զարմացավ
 Զարեցկին,—ձեր մարտավիճան»:
 Իբրև կլասիկ դուելաբան
 Պեդանտ էր նա, այլև աղնիվ,
 Նա թույլ չէր տա, որ սպանվի
 Մարդ հենց այնպես, ոնց պատահի,
 Այլ արվեստի կարգով խստիվ,
 Հարգելով հին ծես ու օրենք
 (Որ նրա մեջ պետք է գովենք):

XXVII

«Վկա՞ս,—ծարեց Եվդենին իմ,—
 Ահա ձեզ նա՝ monsieur Guillot,
 Իմ ծանոթն է սա մտերիմ:
 Դուք չեք մերժի սրան, այո՞:
 Թեև չունի սա մեծ համբավ,
 Բայց մի ազնիվ տղա է լավ»:
 Զարեցկին իր շուրթը կծեց.
 Օնեգինը Լենսկուն դիմեց.
 «Ի՛նչ. սկսե՞նք»:
 «Այո՛ արդեն»—
 Հարեց Լենսկին: Նրանք անցան
 Թմբի ետև: Ազնիվ տղան
 Եվ Զարեցկին շատ լրջորեն
 Բանալիցում են հեռվում, մինչդեռ
 Թշնամիք լուռ կանգնած են դեռ:

XXVIII

Թշնամիներ: Վաղո՞ւց նրանց
 Իրար բախեց ծարավն արյան:
 Զէ՛ որ երեկ ուրախ ժամանց,
 Մոտիկ մտքեր, գործեր, սեղան
 Ունեին դեռ: Այժմ սակայն,
 Ասես քենով ժառանգական,
 Ինչպես մի մութ, չար երազում՝
 Նրանք իրար դեմ են վաղում
 Եվ մահ նյութում իրար համար:
 Կավ չէ՞ արդյոք, որ ծիծաղեն,
 Քանի ձեռքերն արյունոտ չեն,
 Սիրով սեղմեն նրանք իրար...
 Բայց ի՞նչ. երկյուղ ունի սաստիկ
 Կեղծ ամոթից ոխն աշխարհիկ:

XXIX

Փայլեց երկու ատրճանակ:
 Շամփուրին է մուրճը թխկում.
 Փողն է հրվում երկու գնդակ,
 Ոտքի հրահանն արդեն չրթում:
 Խանձոցի մեջ թափվում է շոր
 Վառողն ահա: Ատամնավոր
 Կայծքարն, ամուր պտուտակված,
 Քաշված է վեր: Գիւլոն հուզված
 Կոճղի հտեն անցավ տխուր:
 Վայր նետեցին զույգ վերարկու
 Ոսոխները: Նրեսներկու
 Քայլեր չափեց Զարեցկին լուռ
 Եվ հեռացրեց ընկերներին՝
 Ատրճանակն իրենց ձեռքին:

XXX

«Դե՛, մոտեցե՛ք»: Եվ դեռ նշան
 Չբռնելով՝ երկու ոսոխ
 Վստահ, դանդաղ առաջ եկան
 Չորսական քայլ, դեպ մահ տանող
 Չորս աստիճան՝ ծանր ու անդուր:
 Այդ ժամանակ Եվգենին յուր
 Ատրճանակն առաջ պարզած
 Վեր բարձրացրեց, դեռ կանդ չառած:
 Առաջ անցան ևս հինգ քայլ,
 Լենսկին նույնպես, ձախ աչքը փակ,
 Նշան բռնեց. այդ ժամանակ
 Եվգենին դարկ տվեց... Մռայլ
 Օրհասն էր այդ: Պոետն անձայն
 Վայր է նետում՝ ղենքը մահվան:

XXXI

Ձեռքը կամաց կրծքին դնում
 Եվ տապալվում: Աչքում նվաղ
 Ո՛չ թե տանջանք, մա՛հն է ցոլում:
 Այդպես սարի լանջից դանդաղ
 Արևի տակ փայլախառուտ
 Վայր կսահի մի ձնակույտ:
 Եվգենին ահ առած, նկուն
 Մոտ է վաղում հեք պատանուն,
 Նայում, կանչում... Ո՛ւշ է, ավա՛ղ,
 Նա կյանք չունի: Պոետն արդեն
 Անժամ վախճան գտավ իրեն:
 Փչեց հողմը, թռչնեց չքնաղ
 Մի նաղ ծաղիկ այգաբացին,
 Մարեց հուրը՝ ձոնված բազնին:

XXXII

Անշարժ ընկած՝ տարօրինակ
 Անդորր ունի նա ճակատին,
 Եվ խոր վերքից, հենց կրծքի տակ,
 Բարկ արյունն է թափվում գետին:
 Այս սրտի մեջ մի պահ առաջ
 Դեռ կար թրթիռ կենսաշառաչ,
 Թշնամոլյուն, փափագ ու սեր,
 Արյան ծփանք, երազ հույսեր:
 Այժմ, նման թափուր մի տան,
 Այնտեղ մութն է իշխում համակ,
 Լուռ է հավետ, փեղկերը փակ,
 Կավճով պատած դույզ պատուհան:
 Այնտեղ չկա տանտիրուհի.
 Իսկ ո՞ւր է նա՝ շենք կռահի:

XXXIII

Հաճո է սուր էպիգրամով
 Խալթել անհոգ քո թշնամուն,
 Տեսնել, ինչպես համառ փուլթով
 Դժկամ նայում է հայելուն՝
 Եղջյուրները կախած իր սուր
 Եվ մերժում է պատկերը յուր.
 Ավելի է հաճո, երբ նա
 «Ես եմ, որ կամ» հիմար ոռնա.
 Հույժ հաճո է՝ նրա համար
 Ազնիվ դագաղ լուռ պատրաստել
 Եվ ճակատին նշան բռնել՝
 Հասողություն ընտրած հարմար:
 Բայց թե հանձնել նրան մահվան
 Հաղիվ դտնեք հաճո այնքան:

XXXIV

Իսկ երբ խոցեք ձեր գնդակով
 Երիտասարդ բարեկամին,
 Որ անհամեստ իր հայացքով,
 Պատասխանով, դործով չնչին
 Վիրավորել է ձեզ քեֆում,
 Կամ բորբոքված, դյուրացասում
 Ձեզ մարտի է կոչել հպարտ,—
 Ասացե՛ք՝ ձեր հոգուն անպարտ
 Ի՞նչ զգացմունք կպաշարի,
 Եթե նա ձեր առջև, դետնին,
 Մահվան դրոշմն իր ճակատին՝
 Հետզհետե անշարժ մարի,
 Եվ խուլ լինի ու հավետ լուռ
 Ձեր կանչի դեմ հուսակտուր:

XXXV

Թախծոտ մրմունները սրտում,
 Ատրճանակ ձեռքին սեղմած՝
 Լենակուն է Եվգենին դիտում:
 «Մեռա՛վ արդեն» — դրկիցն ասաց:
 Մեռա՛վ... Ճիշից այդ սոսկաբեր
 Շանթահարվեց Եվգենին մեր,
 Գնաց՝ դտնի ծառաներին:
 Զարեցկին հոգս ի սիրտ, լռին
 Սահնակ դրեց դին սառնացած.
 Տուն է տանում գանձն ահավոր:
 Թպրտում են, փնշում են խոր
 Զիերն մեռելահոտ առած,
 Լկամները փրփրով թրջում
 Եվ նետի պես առաջ թռչում:

XXXVI

Բարեկամներ իմ, սլոնախն
 Ափսոսում էք. ուրախ ծաղկման
 Հույսերը դեռ ճանապարհին,
 Հազիվ փոխած շորը մանկան՝
 Թռչնեց: Ո՛ւր է հուզը ծփուն,
 Ո՛ւր է խոյանքն ազնվագույն
 Խոր հուզերի և խոհերի՝
 Քնքուշ, բարձր ու քաջարի:
 Ո՛ւր են սիրո փոթորկումներ,
 Գիտելիքի, գործի կարոտ,
 Արատի վախ, ազնիվ ամոթ,
 Եվ դո՛ւք, և դո՛ւք, վա՛ռ տենչանքներ
 Վերին կյանքի, նվիրական,
 Դո՛ւք, երազնե՛ր սուրբ քերթովյան:

XXXVII

Նա աշխարհին գուցե բարի՞ք
 Կամ գոնե փա՞ռք պիտի բերեր.
 Կամ քնարն այդ լուսած՝ դալիք
 Դարերում հար պիտի հնչե՞ր
 Շաշող ձայնով: Բանաստեղծին
 Հատկացված էր գուցե վերին
 Մի տե՛ղ կյանքի մեր սանդուղքում.
 Եվ սավերը իր տանջանքում
 Գուցե հետը մի սրբազան
 Գաղտնի՞ք տարավ, ու մեղ համար
 Կորած է ձայնն այդ կենսարար,
 Եվ շիրիմի գծից նրան
 Ձի հասնի հիմներ դարերի՝
 Օրհնությունը բյուր ցեղերի:

Բայց գուցե նա սովորակա՞ն
 Բախտի վիճակ պիտի գտներ.
 Անցներ կյանքը պատանեկան,
 Հոգու հուրը դանդաղ մարեր,
 Շատ բաներում ալ մարդ դառնար,
 Մուսա լքեր, ամուսնանար,
 Եղջուր կրեր. երջանկացած
 Ապրեր գլուղում խալաթ հագած.
 Եվ ճանաչեր աշխարհն իրոք,
 Հոգատապի տեր էլ դառնար
 Ուտեր, խմեր, թախծեր տկար.
 Եվ անկողնում առոք-փառոք
 Մեռներ՝ շուրջը երեխաներ,
 Լացող կանայք և բուժակներ:

XL

Ինչ էլ լինի, իմ ընթերցո՛ղ,
 Բայց սիրահար մի պատանի՝
 Խոհուն պոետ ու երազող,
 Զոհվեց ձեռքով բարեկամի:
 Կա մի վայր, այն գլուղից քիչ ձախ,
 Ուր պոետն էր ապրում ուրախ,
 Երկու սոճու տակ աճակից
 Ոլորվում է մոտիկ գետից
 Պոկված առվակ: Շատ է սիրում
 Մաճկալն ալգտեղ հանգստանալ,
 Հնձվոր կանայք առվից զուլալ
 Կթերով ջուր են տուն տանում:
 Ալգտեղ, թանձր սառլեր վրան՝
 Կանգնած է պարզ մի մահարձան:

XLI

Եվ նրա տակ (մեղմ անձրևին)
 Տրեխ հյուսուղ մի ծեր հոտաղ
 Վոլգայի ձկնորսի մասին
 Երբում է միշտ թախծոտ մի տաղ:
 Քաղաքացի ջահել մի կին՝
 Ամառը գլուղ եկած կրկին,
 Երբ ձի հեծած, մեն միայնակ,
 Ընթանում է հանդով արագ,
 Կանգնեցնում է ձին այդ վայրում,
 Մի պահ ձգած սանձը փոկի՝
 Ետ քաշում քողն իր գլխարկի
 Եվ վարժ աչքով այնտեղ կարդում
 Տապանագիրն, — աչքին քնքուշ
 Արտասուքն է կապում մշուշ

XLII

Դաշտով դանդաղ դնում է նա՝
 Խորասուզված երազանքում,
 Հոգին երկար ու ահամա
 Լենսկու բախտով է դեռ տարվում:
 Խորհում է. «Օլգան ի՞նչ արեց.
 Նրա սիրտը երկա՞ր տանջվեց,
 Թե՞ շուտ անցավ լացն ահամոք.
 Իսկ մյո՞ւս քույրը ուր է արդյոք,
 Եվ ո՞ւր՝ մարդկանց փախստական
 Այն թշնամին աղջիկների,
 Հիմարիկը, վշտի դերի,
 Բանաստեղծի սպանիչը այն»:
 Ժամանակին ես ձեզ լրիվ
 Դրանց մասին կտամ հաշիվ:

XLIII

Բայց ոչ հիմա: Իմ հերոսին
 Թեև սիրում եմ ես սրտով
 Եվ կհիշեմ նրան շուտով,
 Բայց այժմ՝ այլ բանի մասին:
 Արձակին է տարիս քաշում,
 Տարիս աշխույժ հանգն է քշում,
 Եվ, խոստովանք մեր մեջ լինի,
 Հանգ դառնելում ծուլլ եմ հիմի:
 Հին դրիշս շունի էլ սեր
 Մրոտելու թերթեր ցնդուն:
 Այժմ մի նոր տենչանք խնդուն,
 Այժմ ուրիշ, բայց խիստ հոգսեր
 Լռության մեջ և աղմուկում
 Հոգուս երազն են փոթորկում:

XLIV

Ես ա՛յլ տենչեր արդեն գտա,
 Եվ նոր թախիժ ունեմ կրկին.
 Բայց տենչերից վայելք չկա,
 Ափսոսում եմ թախիժս հին:
 Տենչե՛ր, ո՛ւր է ձեզ քաղցրություն
 Եվ հանգ կազմող ջափելություն.
 Մի՞թե իրող ու վերջնապես
 Թոշնեց նրա պսակը վես:
 Մի՞թե ճիշտ և իրականում,
 Առանց չքնաղ հովվերգության,
 Անցան օրերը իմ դարձան
 (Որ կատակով էի պնդում)
 Եվ մի՞թե նա էլ դարձ շունի.
 Մի՞թե մոտ եմ երևո՞ւնի:

XLV

Այսպէս հասաւ իմ միջօրեն,
 Եւ հաշտւում եմ ես արդարեւ:
 Եկ բաժանվենք մտերմորեն,
 Զահելությո՛ւն դու իմ թեթև:
 Շնորհակալ եմ ես անհամար
 Անուշ տալատանքի համար,
 Վշտի, քեֆի, վայելքների,
 Փոթորկումի, աղմուկների,
 Նվերներիդ համար: Օ՛, ես,
 Մե՛րթ խաղաղ, մե՛րթ հուզախով՝
 Ըմբողխնել եմ քեզ... և լրի՛վ:
 Բա՛վ է: Հոգով պայծառաւան
 Ես նոր ճամփա եմ արդ ելնում,
 Անցած կյանքից հանդիստ առնում:

XLVI

Բայց ետ նայեմ: Մնաք բարո՛ւ
 Վայրե՛ր, ուր ես անցրի օրեր՝
 Լի ծուլությամբ ու կրքերով,
 Խոհուն հոգուա մո՛ւթ երազներ:
 Իսկ դո՛ւ, երիտասա՛րդ ավյուն,
 Հուզի՛ր երեակայություն,
 Աշխո՛ւյժ տուր միշտ սրտիս նիրհող.
 Հաճա՛խ այցի եկ ինձ. մի՛ թող՝
 Սառչի պոեա հոգիս անշեջ,
 Դառնա կարծր, նժան քարի,
 Դաժանանա այս աշխարհի
 Մեռելացնող վայելքի մեջ,
 Այս ճահճային փոսում, ուր մեր,
 Լողն ենք տալիս, բարեկամնե՛ր:⁴⁰



ԳՆՈՒՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Մոսկվա՛, Ռուսաստանի դուստր սիրելի,

Քեզ հավասարը որտեղ կգտնվի:

Դմիտրիև

Ինչպե՛ս չսիրես Մոսկվան հարազատ:

Բարատինսկի

Հալածանք Մոսկվայի դեմ. ահա՛ ձեզ աշխարհ
տեսներ:

Իսկ որտե՛ղ է ավելի լավ:

Ուր մենք չկանք:

Գրիբոեդով

I



արնան շնչից հալածական,

Մոտ սարերից պղտոր, ահեղ

Իջան արդեն շիթերը ձյան

Դեպ մարգերը ջրահեղեղ:

Բնությունը ժպտով նրբին

Շոյեց տարվա առավոտին.

Նրկինքը փալլ առավ կապույտ.

Դեռևս մերկ անտառ, թավուտ

Հագան կանաչ մամուռի շոր.

Մեղուն, հիշած տուրքը դաշտում,

Մոմե խուցից դուրս է թռչում,

Հովիտները գունեղ են, չոր.

Աղմկում են հոտեր. լոխ

Գիշերն երգեց սոխակ կրկին:

II

Ի՞նչ վիշտ է ինձ գալի բերում,
 Գարո՞ւն, գարո՞ւն, դու պահ սիրո՞ւ,
 Նվաղ հույզն է այժմ եռում
 Արյանս մեջ, սրտիս ներքո.
 Ինչ ծանրագի՞ն զմայլանքով
 Վալեկում եմ շոյանքը զով
 Իմ երեսին փշող գարնան
 Խուլ անդորրում այս գլուղական,
 Խո՞րթ է վալեկքը ինձ արդյոք,
 Եվ այն, ի՞նչ խինդ, կյանք է շաղում,
 Ի՞նչ ցնծում է և ի՞նչ շողում՝
 Բերում է լոկ խոնջա՞նք, մորմո՞ք
 Վաղուց մեռած հոգուս համար,
 Եվ թվում է նրան խավա՞ր:

III

Գուցե դա՞րձն է մեզ վշտացնում
 Աշնան թռչնած տերևների,
 Դառը կորո՞ւտն ենք վերհիշում
 Նոր խշշոցում անտառների,
 Կամ թե աշխույժ բնության հետ
 Կապում հոգով հուզումնավետ
 Մեր տարիքի թռչնո՞ւմն առկա,
 Վերածնունդ որին չկա.
 Կամ գուցե մեր միտն է գալիս,
 Երազական ու թրվուուն,
 Մի այլ, արդեն անցած գարո՞ւն
 Եվ մեր սրտին թրթիռ տալիս
 Անուրջներով հեռու վայրի,
 Չքնաղ լուսնի ու գիշերի:

IV

Ժամանակն է, բարի՜ ծուլներ,
 Իմաստուննե՛ր էպիկուրյան,
 Դուք, անտարբե՛ր երջանիկներ
 Եվ դուք, սանե՛ր Լեվշինի^Ա տան,
 Դուք, պրիամնե՛ր մեր գլուղասուն
 Եվ դուք, տիկնա՛յք նուրբ, զգայուն,
 Գլուղ է կանչում գարունը ձեզ
 Զերմ, ծաղկավետ, աշխատակեզ,
 Ոգևորիչ դբոսանքներով,
 Գիշերներով հմայաբեր.
 Գյո՛ւղ, դա՛շտ իսկույն, բարեկամնե՛ր,
 Զեր ծանրաբեռ կարեւորներով,
 Փոստի կառքով, ինչով լինի՝
 Քաղաքներից փախե՛ք հիմի:

V

Դուք էլ, բարի՜ իմ ընթերցող,
 Փախե՛ք կառքով ձեր վարձովի
 Այդ քաղաքից միշտ աղմկող,
 Ուր ձմեռն է սոսկ հաճելի.
 Իմ քմահաճ մուսայի հետ
 Գնանք անտառն աղմկավետ,
 Գլուղը, գետի մոտ անանուն,
 Ուր եվգենին՝ անգործ, նկուն
 Ծգնավորը, անցյալ տարի
 Հարևան էր իմ սիրելի
 Ջահել Տանյային երազուն,
 Որտեղ չկա այլևս նա...
 Բայց կա տխուր հետքը նրա:

VI

Կիսաբողոր լեռնալանջով
 Գնանք՝ վազում է, ուր գալար
 Մի գետառու կանաչ հանդով
 Դեպի մոտիկ գետը վարար.
 Այնտեղ սոխակն է սիրազեղ
 Երգում, և կա մասուր այնտեղ,
 Կարկաշում է աղբյուրը հար,
 Եվ նրա մոտ՝ մի շիրմաքար,
 Ստվերում երկու սոճիների:
 Տապանագիրն այս է պատմում.
 «Ալադիմիր Լենսկին է հանգչում
 Որ վաղ զոհվեց մահով արի,
 Այսինչ թվին, այսքան ամաց.
 Հանգի՛ստ, պոե՛տ, քո ոսկերաց»:

VII

Սոսու ճյուղին սաղարթակոր
 Մի ժամանակ, վաղորդային,
 Պարզ դամբանի խորհրդավոր
 Պսակն էր մեղմ ճոճում քամին,
 Մերթ էլ երկու մտերմուհի,
 Լուսնի շողով, ըստ պատեհի,
 Նրան այցի էին գալիս
 Եվ գիրկընդխառն այնտեղ լալիս:
 Այժմ... խուլ է արձանն, անտեր.
 Հարթվել է հեզ նրա ճամփան,
 Եվ էլ պսակ չկա վրան:
 Միայն տկար և ալեհեր
 Հովիվն է իր հին երգն ասում
 Եվ անպաճույճ տրեխ հյուսում:

VIII. IX. X

Իմ խեղճ Լենսկի. թույլ ու նվաղ
 Նա երկար չէր ողբում վրադ:
 Զահել նշանածը ավաղ,
 Դրժում է վիշտն իր հուսահատ:
 Նա դյուքված է մեկ ուրիշով,
 Որն իր սիրո նոր հմայքով
 Նրա վշտին նինջ է բերել:
 Ուլանն է արդ նրան գերել.
 Սիրում է նա իր ուլանին.
 Եվ ամոթխած ու գլխահակ,
 Բեմի առջև, գլխին պսակ,
 Կանգնած է նա նրա կողքին՝
 Հուրն իր խոնարհ աչքերի մեջ,
 Շուրթին թեթև ժպիտն անշեջ:

XI

Իմ խեղճ Լենսկի. արդյոք մթին,
 Խուլ հավերժի գրկում այն խոր
 Խռովք ազդեց վհատ երգչին
 Դավաճանման լուրն ահավոր.
 Թե Լեռայի ամինն ննջած,
 Անհուն երանություն գտած՝
 Էլ ոչնչից նա չի հուզվում,
 Նրան ոչ մի ձայն չի հասնում...
 Այո՛, մոռացումը այդ պաղ
 Հետևում է իսկույն մահվան.
 Լավ ու վատ խոսք, սիրուհու ձայն
 Լռում են շուտ. և անհապաղ
 Ժառանգներն են կայքի հարմար
 Վեճեր բացում հույժ անհարմար:

XII

Եվ Օլգայի ձայնը հնչուն
 Լարինենց տանն արդեն լռեց.
 Ուլանը՝ յուր բախտի հլուն,
 Նրա հետ գունդ մեկնել ստիպվեց.
 Հրաժեշտ տալիս մայրը պառավ,
 Աչքին դուր արցունք անբավ՝
 Հազիվ շունչը տեղն էր բերում:
 Տանյան լալ չէր կարողանում.
 Միայն իջավ նրա դեմքին
 Ասես դալուկ ստվեր մահւլան.
 Երբ բոլորը դավիթ ելան
 Եվ անհանգիստ խռովեցին
 Կառքի շուրջը ամուսների՝
 Տանյան մաղթեց ճամփա բարի:

XIII

Եվ շատ երկար, մշուշահած,
 Նայում էր նա նրանց ճամփին...
 Մենա՛կ, Տանյան մենա՛կ մնաց:
 Ավա՛ղ, իր ջերմ ընկերուհին,
 Իր աղալնյակն՝ ապրած ազատ,
 Մտերմուհին իր հարազատ
 Բախտի ձեռքով տարվեց հեռու,
 Եվ էլ նրան չի տեսնելու:
 Նա շրջում է մտաթափառ,
 Մերթ ամայի այգին գնում...
 Բայց ո՛չ մի տեղ, ո՛չ մի բանում
 Նա չի գտնում իրեն համար
 Զուսպ արցունքի ամոքման դեղ.
 Կուրծքը սրտին թվում է նեղ:

XIV

Եվ մենության մեջ այդ դաժան
 Վառվում է կիրքն արդեն ուժգին
 Սիրտն էլ արդեն շատ բարձրաձայն
 Հիշեցնում է Օնեգինին:
 Էլ չպիտի նրան տեսնի
 Եվ նրա մեջ պետք է ատի
 Յուր եղբորը մահացնողին:
 Մեռա՞վ նա... և բանաստեղծին
 Ոչ ոք այլևս չի հիշում.
 Հարսն ուրիշին սիրտը տվեց,
 Եվ պոետի հուշը ցրվեց
 Ինչպես ծուխը լուրթ երկնքում:
 Գուցե երկու սիրտ դեռ հիշեն
 Նրան թախծով... բայց ի՞նչ թախծեն...

XV

Երեկո էր անդորրաբեր,
 Լսվում էր լոկ բզզոց, խոխոց.
 Լռել էին պարախմբեր:
 Գետի ափից փայլեց դողդոջ
 Ջկնորսական խարույկ: Մենակ,
 Լուսնի արծաթ շողերի տակ,
 Անուրջներով տարված տրտում՝
 Տանյան քայլում էր լուռ դաշտում:
 Քայլեց, քայլեց: Բլրից ներքև
 Կալվածատուն հանկարծ տեսավ
 Գյուղով, մոտը՝ անտառը թավ
 Եվ մի այգի գետից վերև:
 Տեսավ նա, և սիրտը արդեն
 Խփեց արագ և ուժգնորեն:

XVI

Վարանումն է նրան տիրում.
 «Առա՞ջ դնամ, թե՞ ետ կրկին...
 Նա չկա՛. ինձ չե՛ն ճանաչում.
 Նայեմ տանը, տեսնեմ աչգին»:
 Տանյան բլրից իջնում է ցած
 Շնչակտուր, տարակուսած
 Շուրջն է նայում կասկածով լի.
 Եվ մտնում է բակն ամայի:
 Շնեբն հաչով վրա ընկան:
 Նրա երկշոտ ճիշի ձայնին
 Գոռգոռոցով ու խմբովին
 Բակի բոլոր տղերքն եկան,
 Գամփոններին ետ քշեցին
 Եվ օրիորդին ազատեցին:

XVII

«Այս տուն մտնել չի՞ կարելի»—
 Նա հարց տվեց: Միանգամից
 Տղայք թռան, որ բանալի
 Բերեն պառավ Անխայայից:
 Անխայան ինքը հայտնվեց,
 Եվ նրանց դեմ դուռը բացվեց:
 Տանյան մտավ մեր հերոսի
 Ապարանքը՝ այժմ ամայի:
 Դահլիճում նա բիլյարդ տեսավ,
 Վրան խաղաձողը բարակ,
 Օթոցին՝ մի ձիամտրակ:
 Բլբլաց Անխայան պառավ.
 «Պատի վառարանն է ահա,
 Այստեղ հաճախ նստում էր նա:

XVIII

Ճաշում էր նա ձմեռն այնտեղ,
 Լենսկու հետ, ողորմի՜ նրան:
 Այս սենյակն էլ, եկե՛ք այստեղ.
 Դարձրել էր առանձնարան.
 Այստեղ էր սուրճ խմում, քնում,
 Իր տնտեսից հաշիվ առնում,
 Առավոտյան կարդում գրքեր...
 Այդպես էր և պարոնս ծեր.
 Մեկ էլ տեսար, օր կիրակի,
 Ակնոցն աչքին, հենց այս տեղում
 Դուրաչկի էր ինձ հետ խաղում:
 Աստված նրա հոգին փրկի
 Եվ հանգիստ տա ոսկորներին,
 Որ հանձնել ենք մեր մայր-հողին:

XIX

Տանյան, գորովն իր հայացքում,
 Նայում է շուրջն ամեն բանի.
 Եվ ամեն ինչ թանկ է թվում,
 Կենդանացնում վհատ հոգին
 Կիսատանջող սփոփանքով.
 Թե՛ սեղանը մար ճրագով,
 Թե՛ գրքի կույտ, թե՛ մահճակալ՝
 Վրան գորգը փռված անծալ,
 Թե՛ աղջամուղջ դրսից նայող
 Եվ սենյակի գունատ խավար,
 Ե՛վ Բայրոնի դիմանկար,
 Ե՛վ չուգունե արձան՝ հսկող,
 Գլխին գլխարկ, մթահայաց
 Ու թևերը խաչմեր ծալած:

XX

Տանյան խցում այդ նորօրեն
 Երկար մնաց, թովված ասես.
 Բայց ուշ է, և ցրտեց արդեն.
 Հովտում մութն է, մռայլատես
 Անտառը խոր քուն է մտել,
 Լուանին սարն իր ետև ծածկել,
 Եվ ջահել ուխտավորուն
 Վաղուց հարկ էր մեկնել իր տուն:
 Իր մեջ զսպած ամեն հուզմունք,
 Բայց չիշխելով հառաչանքին՝
 Տանյան տուն է գնում կրկին,
 Բայց նախ խնդրում՝ տալ իրավունք,
 Որ ինքն էլի ամրոցը գա
 Եվ միայնակ գրքեր կարդա:

XXI

Տնտեսունուց Տանյան պոկվեց
 Դարբասի մոտ: Մեկ օր անցած
 Առավոտյան վաղ հայտնվեց
 Կրկին շեմում իր փայփայած,
 Եվ սենյակում Օնեգինի,
 Միայնակ ըստ ամենայնի,
 Մոռանալով արար-աշխարհ՝
 Նա լաց եղավ լուռ ու երկար:
 Հետո գրքեր կարդալ փորձեց,
 Բայց չէր զգում իր մեջ պապակ.
 Սակայն մի խորթ գրքաճաշակ
 Դիտեց այդտեղ և սկսեց
 Կարդալ արդեն հոգով ծարավ,
 Եվ մի ուրիշ աշխարհ մտավ:

XXII

Մեր Եվգենին թեև խստիվ
 Չէր ախորժում գրքեր կարդալ,
 Բայց և այնպէս սակավաթիվ
 Երկեր ուներ նա արտոնյալ՝
 Երգչին Գյաուր և Ժուանի
 Եվ մի երկու վեպ անվանի,
 Որոնց մեջ մեր դարն է հնչում
 Եվ այսօրվա մարդը շնչում,
 Ճշմարտացի դրսևորված՝
 Բարոյագութիկ հոգով մոլոր,
 Որ եսասեր է և միշտ չոր,
 Երազանքով անչափ տարված,
 Սին գործերի մեջ եռացող,
 Իր խռովյալ խելքով սրդող:

XXIII


Շատ էջերի վրա կային
 Նղումագների ճնշման հետքեր.
 Եվ դրանցից աղջկային
 Իր սուր աչքը չէր քաշում վեր.
 Տանյան տեսնում էր նուրբ դողով՝
 Ի՛նչ դատումով և ի՛նչ խոհով
 Օնեգինն է եղել տարված,
 Ինչի՛ հետ՝ լուռ համակերպված:
 Լուսանցքներում նայում էր նա
 Նրա մատտի գծումներին
 Ամեն տեղ Եվգենու հոգին
 Դրսևորված էր ակամա,
 Մե՛րթ խաչով, մե՛րթ սեղմ բառիկով,
 Մե՛րթ հարցական մի կարթիկով:

XXIV

Եվ սկսում էր քիչ առ քիչ
 Տատյանան աշտմ ճանաչել
 Ավելի պարզ—փա՛ռք քեզ, փրկի՛չ՝
 Նրան, ում կարոտը քաշել
 Սահմանված է իրեն համար.
 Վտանդավոր, տխրուն հիմա՛ր,
 Դրախտի՞ զարմ, թե՞ դժոխքի,
 Հրեշտա՞կ է, թե՞ շար ոգի.
 Ի՞նչ է. վարպետ սոսկ նմանմա՞ն,
 Ողորմելի տեսի՞լք տրտում,
 Մոսկվացի՝ հարողդյան շորո՞ւմ,
 Օտար քմայքների թարգմա՞ն,
 Նոր բառերի անմիտ հանդե՞ս...
 Մա՛րդ, թե՞ ծաղր է նա վերջապես:

XXV

Առեղծվածը մի՞թե լուծեց,
 Միթե անուն գտա՞վ արդեն:
 Ժամերն անցան, հանկարծ հիշեց,
 Որ տանն սպասում են իրեն,
 Ուր իր մայրը և դրացին
 Խոսում էին հենց իր մասին.
 — Երեխա չէ, բայց չի ուզում,—
 Պառավն ասում էր ու տնքում...
 Օլգայիցս մեծ է. սրան
 Մարդու տալու, աստված վկա,
 Ժամանակն է, բայց ճար չկա.
 Միշտ մերժում, միշտ մեկ պատասխան՝
 Մարդ չեմ ուզի: Տխուր է միշտ,
 Թափառում է և ունի վիշտ:



XXVI

«Սիրահարված հո չէ՞» — Բայց ո՞ւմ.
 Բույանովին վաղ է մերժել.
 Պետուշկովին՝ սառը մերժում:
 Գուսար Պիլստինն էր հյուր եկել,
 Սիրտը կալավ մեր Տանյային,
 Շատ էր խնդրում, զորում լեզվին:
 Ասի՝ գործը դնում է լավ.
 Բայց ի՞նչ, այդ էլ գլուխ չեկավ: —
 «Է՛հ, մնում է Մոսկվա տանել՝
 Աղջիկտեսի տոնավաճառ.
 Կգտնվի մեկը հարմար»:
 — Ա՛խ, եկամուտս թույլ չի տա: —
 «Մեկ ձմեռվա կունենաս փող.
 Թե պակասեց, ես կտամ փոխ»:

XXVII

Մեր պառավը շատ հավանեց
 Լավ խորհուրդը հարեանի.
 Տեղն ու տեղը վճիռ հանեց,
 Որ ձմեռը Մոսկվա տանի:
 Եվ Տանյան այդ լսեց արդեն:
 Բարձր խավին համեստորեն
 Ներկայանալ գավառական
 Պարզ վարմունքով սովորական,
 Եվ հնաձե՛ հագուստներո՛վ
 Ու հնաձե՛ կոշիկներով,
 Ի դեմ հեզնոտ հայացքների
 Մոսկովյան պճնամոլների՞...
 Ոհ՛, ի՞նչ սարսափ. ինչպե՞ս գնա.
 Լավ է՝ այս խուլ գլուղում մնա:

XXVIII

Արևի հետ արթնանալով՝
 Դաշտ ու հանդ է նա շտապում,
 Եվ աչքերը խանդադորով
 Նրանց ուղղած՝ սիրտը բացում.
 «Մնաք բարո՛ւ, լո՛ւռ հովիտներ,
 Եվ դուք, ծանո՛թ, սեզ կատարներ,
 Անտա՛ռ, աղբյո՛ւր, մնաք բարո՛ւ
 Դու էլ, չքնա՛ղ երկինք իմ մով
 Եվ դու, աշխո՛ւյժ, ժի՛ր բնություն:
 Փոխում եմ կյանքն իմ անխռով
 Փայլուն հոգսի մի ժխորով...
 Մնաս բարո՛ւ, ազատությո՛ւն:
 Ինչի՞ եմ ես ձգտում և ո՛ւր,
 Ի՞նչ կբերի բախտն ինձ տխուր»:

XXIX

Նա երկար է շրջում հիմա.
 Այժմ բլուր, ծաղիկ, գետակ
 Նրան սպհում են ահամա
 Իրենց գեղով տարօրինակ.
 Նա հին մտերմուհու նման
 Մարգին, դաշտին հովածածան
 Հրաժեշտ է տալիս տրտում:
 Բայց ամառը շուտ է թռչում:
 Հասան ոսկի աշնան օրեր.
 Բնությունն է դողում գունատ՝
 Մատաղի պես դուգած, վհատ...
 Հյուսիսն արդեն փչեց ամպեր,
 Ահեղ ոռնաց,—ահա կրկին
 Եկավ ձմեռ կախարդուհին:

XXX

Եկա՛վ, առատ փաթիլ բերեց,
 Թեքեց ոստեր հաստ ու բարակ,
 Ալիքաձև ու լայն փուլեց,
 Դաշտերն առավ իր գորգի տակ,
 Եվ ափերն ու գետը սառած
 Նուրբ սալանով պահեց ծածկած:
 Սառնամանիք շողաց: Եվ մենք
 Շատ խինդ ու խաղ ձմեռն ունենք:
 Բայց չի ելնում Տանյան տխուր,
 Որ ձմեռը դիմաւորի,
 Շնչի մի քիչ սառցափոշի
 Եվ առաջին ձնով մաքուր
 Երեսն ու կուրծքն իր լվանա:
 Ձմռան ուղուց սարսում է նա:

XXXI

Խախտել են օրն ուղեորման
 Վերջին ժամկետն էլ է անցնում.
 Ենթարկւած է մեծ նորոգման
 Արդեն հին կառքը դարբնոցում:
 Երեք սալակ հնամենի
 Հատկացւում են իրեղենի.
 Պղինձ, սնդուկ, աթոռ, ներքնակ,
 Մրդի անուշ, բարձ, աթոռակ,
 Աքաղաղների աղնվածին,
 Աման, կոնք, թաս, et cetera,
 Ինչ որ ունեն և ինչ որ կա:
 Ծառաները բարձրացրին
 Հրաժեշտի լաց, ճիշ աղաղակ:
 Տասնևութ ձի հանում են բակ,

XXXII

Եվ հին կառքին նրանց լծում.
 Նախաճաշը եփվում է դեռ,
 Սալահները անվերջ բարձվում,
 Կռվում կանայք, կառապաններ:
 Երթավարը մեծամորուք
 Հեծավ ձիուն թափ, լղարով.
 Դարբաս թափվեց ծառայանին
 Հրաժեշտ տալու խանումներին
 Կառքում նստած. սալթաքելով
 Տիրակառքը սողում է դուրս:
 «Նաղա՛ղ ու ջե՛րմ վայրեր, իմ հո՛ւյս
 Եվ իմ օրրա՛ն, մնաք բարո՛ւ,
 Գուցե ընդմիշտ...»—Տանյան խոսեց,
 Եվ աչքերից արցունք հոսեց:

XXXIII

Երբ լուսավոր դարի առջև
 Լալն սահմաններ բանա՛նք կյանքի,
 Այն ժամանակ (ըստ ակներև
 Փիլիսոփայական ցանկի՝
 Հինգ դար հետո) հավանորեն
 Ճանապարհները շատ փոխվեն,
 Ռուսաստանում շատ խճուղի
 Ամեն կողմով խիտ տարածվի,
 Եվ լալն թուջե մեծ կամուրջներ
 Մեր գետերով հպարտ անցնեն,
 Լեռները սեգ տեղահանվեն,
 Փռվեն չքնաղ գետնուղիներ
 Եվ ու՛ ենանք մեր սուրբ երկրում
 Ճաշարաններ կայաններում:

XXXIV

Մեր ճամփաներն են ողբալու,⁴²
 Փայտե կամուրջները՝ փտուն.
 Կայաններում փայտոջիլ, լու
 Մեկ ընկած մոտ շեն թողնում քուն.
 Կայաններում ցուրտ, անպանդուկ
 Ձևի համար կախված է լուկ
 Ճշուն, սովյալ գնացուցակ,
 Գրգռելով սոսկ ախորժակ,
 Մինչ ցիկլոպներն մեր գյուղական,
 Զինված մարմանդ մեր կրակով՝
 Ռուսաստանյան կռաններով
 Կառքն են բռնում եվրոպական,
 Օրհնանք տալով մեր մայր-երկրին,
 Նրա խորունկ դերբուկներին:

XXXV

Սակայն ձմռան պահին մեր չոր
 Հաճելի և հեշտ է ճամփան.
 Ինչպես անմիտք ոտանավոր՝
 Նա հարթ է և դյուրասահան:
 Ունենք ժիր ավտոմեդոններ,
 Եռնի սահնակ արագաբեր,
 Վերստերն անցնում են անընդհատ,
 Աչքին թվում մի ցանկապատ:⁴³
 Բայց Լարինյան դժբախտաբար,
 Սոսկ խնայման թելադրանքով,
 Քարշ էր գալիս իր տան կառքով,
 Ոչ թե փոստի, որ անհամար
 Չանձրուլթ տվեց նուրբ աղջկան:
 Յոթ գիշերայդ տեղեց ճամփան:

XXXVI

Արդեն մոտ են: Նրանց առաջ
 Ահա Մոսկվան սպիտակաշեն,
 Հին գմբեթները ոսկեխաչ
 Բոց են կտրել ողջ հրեղեն:
 Ա՛հ, եղբայրնե՛ր, ի՞նչ օր էր այն,
 Երբ ես տեսա կիսաշրջան
 Կազմած ժամեր, զանգատներ,
 Պարտեզ, պուրակ, ապարանքներ:
 Ես շատ անգամ, դառն ու դժխեմ՝
 Աստանդական բախտիս ձեռքին,
 Մոսկվա՛, քեզ եմ հիշել կրկին:
 Մոսկվա՛... ինչքա՛ն ձայնն այս վսեմ
 Մոտ է մեր ոռււ մարդու սրտին,
 Ի՛նչ ներդաշնակ՝ նրա զարկին:

XXXVII

Շրջապատված իր անտառով
 Ահա Պյոտրի ամրոցը մեծ,
 Հպարտ իր նոր օրվա փառքով:
 Նապոլեոնն իզուր սպասեց
 Այստեղ, վերջին բախտով արբած,
 Որ գա իր մոտ Մոսկվան՝ չոքած,
 Կրեմլի բանալիներ բերի:
 Ո՛չ, չդարձավ Մոսկվաս գերի,
 Զխոնարհեց գլուխ նրան:
 Ո՛չ թե հանդես, գերու նվեր,
 Նա հերոսին այդ անհամբեր՝
 Մատուցանեց հրո խրախճան:
 Եվ այստեղից մտամոլոր
 Դիտում էր նա բոցերն այն գոռ:

XXXVIII

Մնաս բարո՞ւմ, ընկած փառքի
 Կանգուն մկա, Պյոտրի՛ ամբոց:
 Առա՛ջ. սպիտակ ուղեփակի
 Մոտ են արգեն. Տվերյան փողոց
 Մտան հիմա դերբուկաշատ.
 Այստեղ-այնտեղ խանութ, պալատ,
 Մանուկ, լապտեր, կին, շինական,
 Բուլվար, այգի, վաճառական
 Բուխարացի, կառք, աշտարակ,
 Կրպակ, քողտիկ, բանջարանոց,
 Կազակ, դեղատուն, կուսանոց,
 Մոդաների խանութ, սահնակ,
 Առյուծակիր կուռ դարբասներ,
 Խաչի վրա գորշ ագռավներ:

XXXIX. XL

Ուղերթը այդ խիստ հոգնաջան
 Մի երկու ժամ տևեց այդպես:
 Նեղ նրբանցքում Խարիտոնյան
 Շքեղ մի տան մոտ վերջապես
 Կառքը կանգնեց. հասակավոր,
 Չորրորդ տարվա թոքախտավոր:
 Մորաքրոջ տուն նրանք եկան.
 Դուռը բացեց կրնկահան
 Մի ծեր կալմիկ՝ գուլպան ձեռքին,
 Ակնոց դրած, պատուած շորով:
 Դիմավորեց նրանց ճիշով
 Ընկողմանած իշխանուհին.
 Երկու պառավ ջերմ գրկվեցին,
 Լաց եղան և հառաչեցին:

XL1

— Իշխանուհի՛ս, mon ange!—«Pachette!»

— Ալի՛նա:—«Ո՛ւմ մտքով կանցներ.

Այդ ե՛րբ: Շա՛տ կմնաք մեզ հետ:

Արի՛, քույրի՛կ, նստի՛ր, իմ սե՛ր:

Երազո՛ւմ եմ ես, թե ուշիմ»:

— Սա էլ Տանյան՝ դստրիկն է իմ:—

«Ա՛խ Տանյա, մոտ եկ, ի՛մ խնդում.

Ասեա թե վեպ եմ ես կարդում...

Գրանդիսոնին, անո՛ւշ քույրիկ,

Հիշո՛ւմ ես»:
— Ի՛նչ, գլխի չընկա:

Հա՛, Գրանդիսոն: Բայց նա դեռ կա՛:—

Այո՛, Սիմյոնին է մոտիկ.

Թաթախումին եկավ ինձ հյուր.

Նոր էր կարգել տղային յուր:

XLII

Մյուսն էլ... Բայց այդ հիմա թողնենք:

Ազգուտակին վաղը ամբողջ

Տատյանային ցույց տալ փորձենք.

Ափսո՛ս, շատ եմ ես վատառողջ,

Եվ չեմ կարող դուրս գալ տնից:

Բայց հոգնած էք ճանապարհից.

Գնանք, ես էլ հանգիստ առնեմ...

Կուրծքս հոգնեց... Չունեմ ավլուն...

Խինդն էլ եմ ես ծանր տանում,

Ո՛չ թե միայն վիշտը, հոգի՛ս.

Եվ էլ բանի պետք չեմ գալիս...

Ո՛հ, զգվելի՛ պառավություն...»

Եվ հենց այդտեղ, անշափ հոգնած,

Նա լաց եղավ և խոր հազաց:

XLIII

Թեև հաճո են Տանյային
 Գործովն ու խինդ այդ հիվանդի,
 Բայց նոր տունը նրա սրտին
 Թվում է շատ օտարոտի.
 Մետաքս վարագույրի ստվերում
 Քուն չի դալիս նոր անկողնում:
 Հանգի ձայնին առավոտյան՝
 Արթնակոչին այդ վաղորդյան,
 Նա ելնում է իր անկողնից,
 Պատուհանի առջև կանգում:
 Բացվեց լույսը, բայց չի տեսնում
 Իրենց դաշտերը նա նորից.
 Նրա առջև մի բակ է չոր,
 Ցանկապատ, խոհանոց, ախոռ:

XLIV

Ահա ճաշի հյուր են տանում
 Նրան ամեն օր մի նոր տեղ,
 Պապ ու տատի ներկայացնում
 Տատյանային ծուլ ու սրտենդ.
 Փաղաքում են ամենուրեք
 Ազգական հյուրերին նորեկ,
 Աղուհացով բացում սեղան:
 «Մեծացել է Տանյա: Սրան
 Կնքեցի դեռ երեկ գրկիս:
 Այսպես էի ես քեզ գրկում:
 Ես ականջդ այսպես պոկում:
 Բլիթ էի ես քեզ տալիս»:
 Եվ տատերը ձայնակցեցին.
 «Մեր տարիքն, ա՛խ, շուտ հոսեցին»:

XLV

Այնինչ իրենք դեռ համարյա
 Նույնն են դարձյալ, ինչ որ կային
 Լայն գլխադրով իր շղարշյա
 Նույնն է Ելեն իշխանուհին,
 Լուկերյա Լվովնան՝ շպարվող,
 Լյուբով Պետրովնան՝ դեռ փչող,
 Իվան Պետրովիչը՝ խելատ,
 Սեմյոն Պետրովիչը ժլատ.
 Մոսյե Ֆինմուշն է հետևում
 Պելագեյա Նիկոլաւինին,
 Որ ունի շալից և ամուսին.
 Սա մնում է դեռ ակումբում,
 Առաջվա պէս հեզ է և խուլ,
 Ե՛վ մեծախում, և՛ շատակով:

XLVI

Նրանց դուտրերը՝ Մոսկովյան
 Գեղուհիներն արդ սրտաբուխ
 Տատյանային գրկում, նրան
 Զննում են նախ ոտից գլուխ,
 Գտնում մի քիչ տարօրինակ,
 Գալառական, թյուրաճաշակ,
 Այլև մի քիչ նիհար, գունատ,
 Ընդհանրապէս թեկ ոչ վատ:
 Հետո ինքնին ծագում է սեր.
 Նրան սիրում, հյուր են տանում,
 Համբուրում են, ձեռքը սեղմում,
 Շինում նոր ձևի խոսպոպներ,
 Ապա հայտնում, քիչ ծոր տալով,
 Իրենց սրտի գաղտնիքը ծով,

XLVII

Սիրո հաղթանակներ հիշում,
 Հալտնում անուրջ, տենչ ու արկած,
 Այդպես անմեղ զրույց անում՝
 Զրպարտությամբ քիչ համեմած:
 Եվ իբրև տուրք բլբլոցի,
 Խնդրում են, որ նա էլ բացի
 Գաղտնիքներն իր օրիորդական:
 Տանյան լսում է այդ, սակայն,
 Սառն ու առանց կարեկցանքի.
 Չի հասկանում նա ոչ մի բան,
 Եվ գաղտնիքն իր նվիրական՝
 Գանձն արցունքի ու բերկրանքի,
 Պահպանում է միշտ լռելյայն
 Ու ոչ ոքի չի հայտնում այն:

XLVIII

Ամեն զրույց, ամեն նոր բան
 Հասկանալ է Տանյան ուզում,
 Բայց դահլիճին միանգամայն
 Անկապ, տափակ միտք է հուզում.
 Եվ ամեն ինչ սառն է, դժգույն,
 Եվ զրպարտանքն իսկ անավյուր:
 Չոր, անմարմին զրույցներում
 Բամբասանքում և հարցերում
 Չի հանդիպի մտքի առկայծ
 Գոնե թեկուզ պատահաբար,
 Չի ցնցվի մի սիրտ հեգնավառ,
 Չի ժպտա մեկ դատմունք հոգնած.
 Գեթ խենթություն ծիծաղելի
 Չունես, աշխա՛րհ դու եղկելի:

XLIX

Ջահել տղայք արխիւային
 Տանյային են խմբով նայում
 Եւ իրար մեջ նրա մասին
 Անբարեհաճ սրտով խոսում:
 Տխուր ինչ-որ կատակաբան,
 Համարելով իդեալ նրան
 Նրա համար դռան ետեւ
 Եղերերդ է հյուսում թեթեւ:
 Հիւանդ մորաքրոջ տուն գալով
 Վշադեմսկին էլ նրան տեսավ,
 Խոսեց հետը, ուշքը տաքով,
 Նրա մասին, այդ տեսնելով,
 Եւ շտկելով կեղծամ, մորուք՝
 Հետաքրքրւեց մի ծերուկ:

L

Բայց ուր Մելպոմենը կրքոտ
 Իր ոռնոցն է հանում ծորուն,
 Ուր պաղասիրտ ամբոխի մոտ
 Նա քղամիդն է ցնցում փայլուն,
 Ուր թաւեան նիրհի միջից
 Չի լսում ճիշ, ծափ խնդալից,
 Եւ Տերփսիքորն է ուր միայն
 Ջահել սրտեր թովում նազան
 (Ինչպես տարիներում վաղանց,
 Այո՛, ձեր և իմ ժամանակ),
 Չի գրավում Տանյան դիտակ
 Խանդոտ կանանց կամ տղամարդկանց՝
 Մոդաներին հույժ գիտակից,
 Ո՛չ օթյակից, ո՛չ պարտերից:

LI

Նրան տարան ժողովարան.
 Նեղվածք, մոմի լույսեր երեր,
 Թնդուն նվազ, հույզեր ծփան,
 Ժիր, առկայծուն թռչող զույգեր,
 Նուրբ զգեստներ սիրուն կանանց,
 Թովիչ խմբեր տղամարդկանց,
 Հարսնացուներ հանված ի տես
 Շշմեցնում են վարկենապես.
 Պճնամոլներ կան կրակված՝
 Ժպիրհ վարքով, բաճկոնակով
 Եվ դիտակով անուշադիր.
 Գուտարներն, արձակուրդ եկած,
 Փայլում, դահլիճն են թնդացնում,
 Հրապուրում և հեռանում:

LII

Գիշերը շատ աստղեր կան վառ,
 Շատ գեղուհիք կան Մոսկվայում,
 Բայց երկնային բույլին պայծառ
 Լուսինն է փայլ տալիս մոլորում:
 Իսկ նա, որին չեմ ուզում ես
 Իմ քնարով կոչել հանդես,
 Կանանց մեջ վեհ լուսնի նման
 Փայլ է տալիս ինքը միայն:
 Ի՜նչ սեզ. նազով երկնայինի
 Դնում է նա ոտքը գետին,
 Ի՜նչ գրգանք է շողում կրծքին,
 Ի՜նչ նվաղուն հայացք ունի...
 Բայց հերիք է, վե՛րջ տանք սրան.
 Մարեւ եմ տուրքն իմ խենթության:


LIII

Աղմուկ, քրքինջ, վազոց, բարև,
 Մազուրկա, վալս, դալոպ... այնինչ
 Երկու մորքույրերի միջև
 Տանյան նստած, աչքով զննիչ
 Նայում է և չի տեսնում բան.
 Ատում է նա բարձր շրջան,
 Խեղդոց զգում այնտեղ. կրկին
 Երազում է գյուղն իր լոին,
 Խեղճ դեղջուկին, դաշտերն անծիր,
 Իր անկյունը այն մենավոր,
 Ուր ջինջ առուն է իր սովոր,
 Ծաղիկներն ու վեպերը իր,
 Եվ ծառուղին այն սովերոտ,
 Ուր նա եկավ այնպես իր մոտ:

LIV

Մտքով հեռուն է դեգերում
 Նա՝ մոռացած հանդես ու բալ,
 Մինչ նրանից աչք չի պոկում
 Շատ լրջատես մի գեներալ.
 Մորաքույրերն արմունկներով
 Տանյային սթափեցրին ճեպով՝
 Փսփսալով նրան հուշիկ.
 — Մի ձա՛խ նայիր, դե շո՛ւտ, ջանի՛կ:—
 «Զա՛խ, ո՛ւր, այնտեղ ի՞նչ կա սակայն»:
 — Կա, թե չկա, նայի՛ր դու լավ.
 Խմբի հետ է, տե՛ս, հեռացավ,
 Մոտն էլ երկու զինվորական.
 Տե՛ս, կանգնած է հիմա կողքով...—
 «Ո՛վ, գեներալն այն գեր մարմնով»:

Բայց մենք այստեղ շնորհավորենք
 Հաղթանակն իմ Տատյանայի,
 Եվ այլ կողմ մեր ընթացքն ուղղենք,
 Որ հերոսիս դառնանք էլի:
 Ի դեպ երկու խոսք այդ մասին.
 Ես երգում եմ իմ մտերմին,
 Եվ փայֆներն իր անհամար:
 Օրհնիր երկունքն իմ այս երկար,
 Ով դու, Մուսա՛ վիպերգուրյան,
 Եվ ինձ տալով ամուր հենակ՝
 Մի՛ թող՝ շեղվեմ աջ ու ահյակ:
 Բա՛վ է. նետեմ լուծն իմ բեռան:
 Կլասիցիզմին տվի պատիվ.
 Ուշ է, բայց կա նախաշավիղ:





ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Fare thee well, and if for ever
Still for ever fare thee well.

Byron *

Մնաս բարեւ, և եթե ընդմիշտ,
Ապա ընդմիշտ մնաս բարեւ:

Բայրոն:



I

Երբ Լիցեյի պարտեզներում
Ծաղկում էի ես անխռով,
Երբ Ֆիցերոն չէի կարդում,
Ապուլեոս կարդում սիրով,—
Այն օրերին, հովտում շքնաղ,
Լճերի մոտ լուսաբաբախ,
Կարապետների կանչով զարնան
Ինձ ալյուրե եղավ Մուսան:
Ուսանողի իմ խուցն իսկույն
Այգաշուղաց: Այնտեղ Մուսան
Բացեց խնջույք ջահելության,
Երգեց մանկան հոգսեր պարզուն,
Ե՛վ պատմության հին փառքը մեր,
Ե՛վ սրտազող ջերմ երազներ:

II

Հաջողութունն այդ առաջին
 ժպիտ շահեց, մեզ թև տվեց,
 Մեզ նկատեց, մահն առաջին,
 Ծեր Դերժավինն ու մեզ օրհնեց:

.

III

Եվ ես օրենք դարձնելով
 Միայն քմայքն իմ կրքերի,
 Ամբոխի հետ կապված հույզով՝
 Իմ Մուսային խենթ վեճերի
 Եվ քեֆերի հանդես տարա
 Արհամիւրքով կես գիշերվա.
 Եվ քեֆերին խենթ ու անմիշտ
 Նվերով էր գալիս նա միշտ,
 Բաքոսուհու նման ասնտեղ
 Երգով ծաղկում ամեն կենաց,
 Նրա սիրով էին տարված
 Ընկեր-տղայքն իմ խելահեղ,
 Իսկ ես հպարտ էի հոգով
 Իմ հողմաթև ընկերուհով:

IV

Բայց պոկվեցի այդ շրջանից
 Եվ հեռացա... հետս Մուսան:
 Հաճախ է նա գորովալից
 Քաղցրացրել իմ համր ճամփան
 Կախարդանքով հեքիաթների,
 Գրկում Կովկաս լեռնաշխարհի
 Ինձ հետ, ինչպես մի Լենորա
 Ճամփորդել է ձիու վրա.
 Եվ Տավրիսում արեգնահուր
 Ծովափ է ինձ տարել մթնով,
 Որ ես լսեմ ճողփյունը զով,
 Ներեիդյան շշուռն անլուռ,
 Հավերժ հիմնը ալիքների,
 Զոնված հորը աշխարհների:

V

Եվ մոռացած խնջույք ու փայլ,
 Մայրաքաղաքն աղմկալին՝
 Մոլդավիայի գրկում մռայլ
 Հյուր էր գնում վրաններին
 Նա վաշկատուն շատ ցեղերի,
 Ու դառնալով ինքն էլ վայրի՝
 Փոխարինում դիցալեզուն
 Բարբառներով աղքատ, անգույն,
 Տափաստանի երգով խանդոտ:
 Հանկարծ այդ էլ փոխվեց, և նա
 Եկավ այգիս գեղահմա,
 Իբրև գավառական օրիորդ՝
 Վշտոտ խոհի փայլը աչքին,
 Մի ֆրանսերեն գրքույկ ձեռքին:

VI

Եվ ես նոր եմ իմ Մուսային
 Աշխարհիկ ռաուտի⁴⁴ հանում
 Եվ ստեպատուր նրա փայլին
 Երկյուղախանդ սրտով նայում.
 Ժեռում են արդ աղնվական,
 Դիվանագետ, զինվորական,
 Հպարտ կանայք և սպաներ.
 Մեղմիկ նստեց նորեկը մեր՝
 Դյութված մարդկանց այդ ժխորով,
 Խոսքի, շորի փայլով այդ նոր,
 Զահել տիկնոջ առջև բոլոր
 Սեդ հյուրերի խոնարհումով,
 Կանանց շուրջը աղոտ գծված
 Շրջանակով տղամարդկանց:

VII

Նա հավանեց կարգն անսասան
 Օլիգարխիկ զրույցների,
 Սառնությունն այդ հպարտության,
 Այդ խառնուրդն աստիճանների
 Եվ տարիքի: Բայց ո՞վ է այն,
 Ընտրյալ խմբում կանգնած անձայն,
 Որ թվում է խորթ ու դժխեմ.
 Մարդիկ անցնում են նրա դեմ
 Իբրև տեսիլ ձանձրութաբեր.
 Հպարտա՞նք, թե՞ սպլին է կրում.
 Նա ի՞նչ ունի այս կողմերում:
 Ո՞վ է նա: Եվգե՞նին է մեր:
 Միթե իրո՞ք: Ի՞նքն է, որ կա:
 — Վաղո՞ւյ է մեր կողմն ընկել նա.

VIII

Նա նո՞ւյնն է, թե՞ զուսպ է դարձել,
 Խենթո՞ւկ է դեռ տարօրինակ,
 Իբրեւ ի՞նչ է վերադարձել,
 Եվ կրում է ինչի՞ դիմակ:
 Արդ Մելմո՞տ է նա ոճրատեք,
 Կոսմոպոլի՞տ, հայրենասե՞ր,
 Հարո՞ւղ, քվա՞կեր, սուտ ճգնավո՞ր
 Թե՞ այլ դիմակ ունի նա նոր,
 Եվ կամ՝ գուցե ազնիվ տղա՞,
 Ինչպե՞ս գուք, ես, աշխարհն արար:
 Ի դեպ, խորհուրդ տամ ձեզ հարմար.
 Թողե՛ք մողան ձեր հնամյա:
 Չանձրացրել է նա մեզ անկոչ...
 — Ծանոթ է ձեզ:— Այո՛ւ և ո՛չ:

IX

Ինչո՞ւ սրա մասին ունեք
 Դուք այդ կարծիքն անբարեհաճ.
 Նրա՞ համար, որ դուք և մենք
 Դատավոր ենք սոսկ վայրահաչ.
 Որ ջերմ հոգու քայլն անդգույշ
 Ծիծաղելի է կամ թե փուշ՝
 Շղճիմ ինքնասերի համար,
 Որ խելքն անձուկ վայրից խավար
 Ուժով է դուրս թռչել փորձում,
 Որ սովոր ենք հաճախ խոսքին
 Տալու գործի արժեք ու դին,
 Որ լուրջ մարդկանց լուրջ են թվում,
 Հիմար բաներ, որ մենք միայն
 Համաձայն ենք միջակության:

X

Երնե՛կ նրան, ու՛լ ո՛չ մանկութի,
 Ա՛յլ տարիքում հասունության,
 Քայլ առ քայլ է առել բնութի,
 Վարժվել կյանքի այս սառնության,
 Ով խորթ երազ չի ակործել
 Եվ աշխարհիկ կյանքից խորշել.
 Եղել է ֆրանտ՝ քսանութ տարում,
 Ամուսնացած՝ երեսունում,
 Եվ մարել է պարտքերն արդեն՝
 Դեռ չհասած հիսուն տարվան,
 Ով փառք և փող ու աստիճան
 Չեռք է բերել դանդաղորեն,
 Ում մասին ասվել է միայն՝
 Զքնաղ մարդ է սա անպայման:

XI

Սակայն ծանր է նույնիսկ խորհել,
 Որ անցել է մեր կյանքն ունայն,
 Որ նա մեզ է ազատ խաբել,
 Մենք միշտ դավ ենք նյութել նրան.
 Որ իդձերը մեր լավագույն,
 Անուրջները թարմ և խայտուն
 Փտել են միշտ արագ, թեթև,
 Ինչպես նեխիչ աշնան տերև.
 Ծանր է տեսնել ամբողջ կյանքում
 Միայն երկար շարքեր ճաշի,
 Կյանքին նայել իբրև ծեսի,
 Եվ հարգելու մարդկանց խմբում
 Քայլել՝ նրանց չհարգելով
 Նրանց խոհն ու կիրքն ատելով:

XII

Սնունդ տալով խոսք-զրույցի՝
 Դառն է (եղե՛ք ինձ համաձայն)
 Մարդկանց աչքում հույժ խելացի
 Շահել համբավ խենթի միայն,
 Կամ վշտահար խելագարի,
 Կամ դիվահար ցավագարի,
 Եվ կամ թե իմ Դևի, առհնք:
 Եվգենին (արդ նրան հիշենք)
 Իր ընկերոջն սպանելով,
 Կյանք վարելով աննպատակ
 Մինչև քսանվեց տարին դատարկ,
 Անգործ, պարապ ձանձրանալով՝
 Անկին, առանց մի պաշտոնի,
 Անպետք եղավ ամեն բանի:

XIII

Նրան խռովք տիրեց անհուն,
 Ուզեց փոխել տեղն ամեն օր
 (Հույժ տանջաբեր մի հատկություն,
 Քչերի խաչն այդ կամավոր)。
 Թողեց նա գլուղն իր գետափի,
 Մենությունն անտառի, արտի,
 Ուր մի ստվեր արյունլիւա
 Իր տեսիլն էր ամենօրյա,
 Եվ թափառեց աննպատակ,
 Որ իր սրտին էր լուկ հաճո.
 Բայց շրջելն էլ վերջ ի վերջո
 Չանձրույթ դարձավ մի անխորտակ,
 Եվ նա ընկավ ճիշտ Չացկու պես
 Նավից ուղիղ պարահանդես:

XIV

Հյուրերն իրար անցան խոսույն,
 Սկսեցին խուլ շշնջալ.
 Մոտենում են տանտիրուհուն
 Մի տիկին և լուրջ գեներալ:
 Տիկինն աճապարանք շուներ,
 Ոչ սառն էր, ոչ զրույցասեր,
 Չուներ նշույլ հանդգնության,
 Չէր նկրտում հաջողության.
 Իր դեմքը չէր ծամածռում,
 Չէր նմանվում ուրիշներին,
 Հասարակ էր ամբողջովին,
 Նա հարազատ ցուքն էր թվում
 Du comme il faut... (Շիշկո՛վ, մեղա՛,
 Թարգմանելու կարող չեղա):

XV

Կանայք նրան մոտ են դնում,
 Պառավները ժպտում սիրով,
 Տղամարդիկ աչքին ընկնում
 Նրան խոնարհ գլուխ տալով:
 Աղջիկներն էլ սուսիկ դարձան
 Նրան տեսնելուն պես, միայն
 Հպարտ էր և քիթը տնկած
 Գեներալը՝ հետը եկած:
 Չքնաղ կոչել չէր կարելի
 Այդ տիկնոջը. չկար սակայն
 Ամենեին նրա մեջ այն,
 Ինչ վերերում սեպ էր դրոշմի,
 Ուր մոդայի կամքն է իշխող,
 Կոչվում է vulgar. (Չեմ կարող...

XVI

Օս այս բառին տաժում եմ սեր,
 Բայց չեմ կարող այն թարգմանել.
 Մեր կողմերում նա նոր է դեռ
 Եվ դժվար թե դառնա ընտել:
 Գուցե պետք դա էպիգրամին...) *(...)*
 Բայց տիկնոջը դառնանք կրկին.
 Նստած էր նա չքնաղ, դյուրթոտ
 Սեղանի շուրջն, ու նրա մոտ
 Նինա Վորոնսկայան պայծառ՝
 Կլեոպատրան մեր նեվայի:
 Բայց կընդունեք դուք երեի,
 Որ մարմարե գեղով դժվար
 Ստվեր գցեր փայլը սրա
 Յուր հարեան կնոջ վրա:

XVII

«Ինչպե՞ս,— Եվգենին էր շշմել,—
 Մի՞թե նա է: Ո՛չ... նա՛ հաստատ...
 Ինչպե՞ս, գլուղի խորքից բաղմե՛լ...»
 Եվ մեկնում է նա անընդհատ
 Իր դիտակը այժմ նրան,
 Ով արթնացրեց իր մեջ անձայն
 Ինչ-որ մի դեմք՝ ծանոթ այնպես.
 «Իշխա՛ն, ասա՛, դու չգիտե՞ս,
 Ով է այն բերեռով կարմիր՝
 Իսպանական դեսպանի մոտ»:
 Իշխանն այժմ դարձավ հեզնոտ.
 — Դու մեր շրջանն ինչո՞ւ թողիր.
 Գնանք ծանոթացնեմ հիմա:—
 «Ո՞վ է սակայն»:
 — Իմ կինն է նա:—

XVIII

«Կարգվե՞լ ես. ե՞րբ»։—Երկու տարին
Մոտ է։—«Եվ ո՞ւմ գտար արժան։
— Լարինային։—«Տատյա՞նային»։—
— Ծանոթ է քեզ։—«Մեզ հարեան»։
— Դե ե՛կ, տանեմ։—Իշխանն խսկուն
Ներկայացրեց իր ամուսնուն
Այս հարազատ բարեկամին։
Նայեց սրան իշխանուհին...
Եվ որքա՛ն էլ, հոգին խռով,
Լարվեց Տանյան ու զարմացավ
Սրա այցից, սակայն բնավ
Չարտահայտեց այդ ոչնչով .
Յուր մեջ նա նույն տոնը պահեց,
Սրա գալը զուսպ ողջունեց։

XIX

Այո՛. ո՛չ միայն շսարսեց,
Զկարմրեց կամ դալկացավ,
Այլե՛ նույնիսկ հոնք չշարժեց
Եվ շսեղմեց շրթունք բնավ։
Նայելով շատ խորաքնին՝
Նրա մեջ Տանյային նախկին
Օնեգինը էլ չէր գտնում,
Զրուցելու փորձ էր անում,
Բայց զո՞ւր։ Տանյան հարցի դիմեց.
Ե՞րբ է եկել, և ո՞ր վայրից,
Եվ ո՞չ իրենց այն կողմերից.
Հետո հոգնած դեմքով նայեց
Յուր ամուսնուն և դուրս գնաց.
Օնեգինը անշարժ մնաց։

XX

Մի՞թե Տանյան է սա նախկին,
 Որին առանձնության գրկում,
 Մեր այս վեպի հենց սկզբին,
 Գյուղի խաղաղ հեռու խորքում,
 Ինքը ինչպես խրատաբան
 Քարոզ տվեց բարոյական.
 Նա՞, որից ինքն ունի նամակ,
 Ուր ամեն ինչ պարզ է, հստակ,
 Ուր նրա բոլոր սիրտն է խոսում:
 Այն աղջիկն է... թե՞ սոսկ անուրջ...
 Ա՞յն աղջիկը, որին շատ լուրջ
 Արհամարհեց հեղ լիճակում,
 Նա՞ էր հիմա իր մոտ այդքան
 Ե՛վ անտարբեր, և՛ ինքնիշխան:

XXI

Թողնում է նա ռաուտն անձուկ
 Եվ մտազբաղ մեկնում է տուն.
 Երազներով վառ կամ տաղտուկ
 Շփոթվում է, չի գտնում քուն:
 Արթնացավ. և նամակ ունի՝
 Իշխան N-ից երեկոյի
 Հրավեր: «Տե՛ր իմ, Տանյայի տո՛ւն...
 Գնա՛մ, գնա՛մ»: Եվ նա իսկույն
 Հարգալից պատասխան գրեց:
 Բայց ի՞նչ է այս, ի՞նչ փոթորկում,
 Նրա սառը և ծուլ հոգում
 Այդ ի՞նչ հանկարծ այդպես շարժեց.
 Ունայնությո՞ւն, ափսո՞ս, թե՞ դեռ
 Զահեկության հին հոգսը՝ սեր:

XXII

Նորից հաշվում է նա ժամեր,
 Օրվա վերջին մնում նորից:
 Խփեց տասը. նա անհամբեր
 Մեկնեց աշնտեղ. հասավ, գավթից
 Մտնում է ներս նա սարսուռն,
 Մենակ գտնում իշխանուհուն.
 Եվ նայում են մի պահ իրար՝
 Նստած: Չի դուրս գալիս մի բառ
 Օնեգինի շուրթից տրտում,
 Մռայլ է, և պատասխանի
 Կարողութուն հաղիվ ունի.
 Համառ ինչ-որ մի միտք գլխում
 Տանյային է նայում: Սակայն
 Խաղաղ է սա և անվարան:

XXIII

Ամուսինը եկավ: Խզեց
 Նրանց տհաճ աչդ. tête-à-tête,
 Եվ գենու հետ նա վեր հիշեց
 Արկած ու խաղ՝ անցած անհետ:
 Ծիծաղում են: Հյուրերն եկան.
 Ջրույցն աղով զրպարտության
 Աշխուժացավ աշնուհետե,
 Եվ տիկնոջ մոտ բացվեց թեթև
 Անմիտ ընթացք զրուցատրոթյան,
 Որ խզվում էր երբեմնակի
 Առկայծումով առողջ մտքի՝
 Բարձր, բայց ոչ վերացական,
 Որ չէր բերում վտանգ իր հետ
 Աշխուժությամբ ազատավետ:

XXIV

Այնտեղ էր ողջ սերույթը մեր
 Բարձրակենցաղ մայր քաղաքի,
 Ամենուրեք եղող դեմքեր,
 Եվ ապուշներ՝ միշտ ըստ հարկի,
 Հասակն առած կանայք դժխեմ,
 Վարդերով ու թասակաճեմ,
 Ժպտամերժ մի քանի օրիորդ,
 Այնտեղ կար և մի դեսպանորդ,
 Որ քննում էր լրջմիտ հարցեր
 Դիվանական և արքունի,
 Մազերն օծած մի ծերունի,
 Անգիր սերտած հին կատակներ՝
 Դիպուկ, նրբին, իմաստավոր,
 Որ թվում են մեզ անսովոր...

XXV

Կար էպիգրամ սիրող պարոն,
 Որին հուզում էր ամեն բան՝
 Շատ քաղցր թեյ և մարդկանց տոն,
 Կանանց փայլը տափակության,
 Վեճեր մթին վեպի մասին,
 Վենզել՝ տրված զույգ քույրերին,
 Թերթերի սուտ և կռվի լուր,
 Ջյուն և նույնիսկ տիկինը յուր...

.

XXVI

Այտնեղ և մի Պրուասով կար,
 Որ նենգ հոգով էր անվանի,
 Ալբոմներում նա անդադար
 Մատիտներդ է մաշել, St. Priest
 Մեկ դիկտատոր կար և պարի,
 Կարծես նկար ամսագրերի,
 Զատկի քերովբեի նման
 Կարմրայտ և ձիգ կանգնած անձայն,
 Եվ մի ճամփորդ կար տարագիր՝
 Գերօսլայված լպիրշ հտպիտ,
 Որ կորզում էր անշափ ժպիտ
 Յուր կեցվածքով հույժ ջանադիր.
 Նրան վճիռ տրվեց անձամբ
 Լուռ հայացքի փոխանակմամբ:

XXVII

Բայց եվգենին իմ անընդհատ
 Տանյայով էր միայն տարված.
 Ո՛չ աղջկանով այն խիստ դունատ,
 Պարզուն, երկչոտ, սիրահարված,
 Ա՛յլ անտարբեր իշխանուհով՝
 Անմատչելի նոր դիցուհով
 Արքայական մեր նեվայի.
 Օ՛ դուք, մարդի՛կ, գուք եվայի
 Պատճենն եք սոսկ՝ մեր նախամոր.
 Ինչ ունեք դուք, ձեզ չի դյութում,
 Զեզ անդադար օձն է կանչում
 Դեպի ծառն այն խորհրդավոր.
 Դուք դրախտն էլ չեք հավանի
 Առանց այն արգելված պտղի:

XXVIII

Ինչպե՛ս է ա՛յն Տանյան փոխվել,
 Ի՛նչ իր դերի թովչանքն ունի,
 Եվ ինչ արա՛գ է յուրացրել
 Ձևերն իր նոր աստիճանի.
 Ո՞վ կգտնի նուրբ աղջկան
 Այս վեհաշուք, ինքահեծան
 Տիրուհու մեջ դահլիճների:
 Սա՞ էր իրեն դարձել գերի,
 Սա՞ էր գիշերն միշտ իր մասին,
 Մինչև Մորփեն իշխեր նրան,
 Թախծում վշտով իր կուսական,
 Նվաղ աչքերն ուղղում լուսնին՝
 Երազելով գտնել իր հետ
 Կյանքում խոնարհ մի արահետ:

XXIX

Ձի հարցնում սերը տարիք,
 Բայց կուսական ջահել սրտին
 Բերում է նա պոռթկուն բարիք,
 Ինչպես գարնան մրրիկն արտին.
 Կրքի անձրևի մեջ փթթում,
 Թարմանում է նա և հասնում,
 Եվ առնում է կյանքը նոր ուժ,
 Փարթամ գույներ, պտուղ անուշ:
 Բայց անպտուղ ուշ հասակում,
 Շրջադարձում մեր տարիքի,
 Տխրալի է կայծը կրքի,
 Այդպես մրրիկն աշնան ցրտում
 Ճահճացնում է հանդն անպատճառ
 Եվ մերկացնում անտառ ու ծառ:

XXX

Ավա՛ղ, Եվգենին անկասկած
 Տատյանային տածում է սեր,
 Սիրո խոկման թախծով տարված՝
 Հանգիստ չունի ցերեկ-գիշեր.
 Չի ենթարկվում սաստին կնեքի
 Եվ ամեն օր նրանց բակի
 Կամ դավթի մոտ կառքից իջնում,
 Նրա մոտ է անվերջ լինում.
 Ուրախ է, երբ արժանանա
 Բոան ծածկել նրա ուսին,
 Եվ կամ թոթվել մերթ ջերմագին
 Նրա ձեռքն ու կարողանա
 Ծառաների շղթան պատռել,
 Բաշկիրնակը գետնից հանձնել:

XXXI

Նա Եվգենուն չի նկատում,
 Թեկուղ ճաքի սա խելագար.
 Տանն ազատ է միշտ ընդունում,
 Փոխանակում մի երկու բառ,
 Մերթ սոսկ թեթև գլուխ տալիս,
 Մերթ չի տեսնում լուռ անցնելիս.
 Կոկեռություն նա չի անում՝
 Բարձր խավը աչդ չի տանում:
 Կունատվում է Եվգենին մեր,
 Բայց չի տեսնում, չի խղճում նա.
 Իսկ սա հալվում և համարյա
 Դառնում է լուրջ թոքախտի տեր.
 Բժիշկները միաբերան
 Ուղարկում են ջրաբուժման:

Բայց չի մեկնում. գուցե հարմար
 Կհամարի յուր պապերին
 Գնալ այցի: Տանյան իսպառ
 Ձի խառնվում (այս՝ իբրեւ կին).
 Իսկ սա համառ, դեռ հույս ունի,
 Դեռ ձգտում է ինչ-որ բանի.
 Եվ իր հիվանդ տեղով հանդերձ,
 Շարագորում է սիրո ուղերձ
 Իշխանուհուն դողդոջ ձեռքով:
 Թեեւ քիչ էր առհասարակ,
 Եվ իրավամբ, հարգում նամակ,
 Բայց անշուշտ էլ շուներ կորով
 Հանդուրժելու սրտում խոր վիշտ:
 Ահա նամակն այն ճիշտ և ճիշտ:

Օճեզինի նամակը Տառյաճային

Դուք անկասկած վիրավորանք
 Կզգաք վշտիս խոստովանքից:
 Ո՛հ, ի՞նչ ուժով ձեր գոռ դեմքից
 Պիտի շանթի դառն անարգանք:
 Ի՞նչ եմ ուզում, ինչի՞ համար
 Բացում եմ ձեր առջև հոգիս.
 Եվ կամ գուցե ի՞նչ հիշաշար
 Հրձվանքի նյութ եմ ձեզ տալիս:

10 — Ձեզ անցյալում հանդիպելով,
 Ձեր մեջ սիրո կայծ տեսնելով՝
 Չընծայեցի հավատ նրան.
 Ես չտվի ընթացք կրքիս,
 Եվ զզվելի ազատ կյանքիս

Զցանկացա դնել սահման:

Մեզ բաժանեց ես մի բան...

Ընկալվ կենսկին՝ զոհն իմ փորձի...

Ամեն ինչից՝ սրտի արժան,

Իմ սիրտն այնժամ ես կտրեցի:

Կարծում էի ես՝ խորթ, օտար,

20 — Բե ինձ ազատ կյանքն է տրված

Բախտի դիմաց: Տե՛ր իմ աստված,

Իմ սխալն ինչպե՛ս պատժեց ինձ չար...

Ո՛չ, ձեր տեսքին լինել գերի,

Ամեն տեղ ձեր հետքով ման գալ,

Ձեր ժպիտը, խաղն աչքերի

Սիրահարված աչքով որսալ,

Միշտ ձեզ լսել, հոգու աչքով

Տեսնել հոգին ձեր կատարյալ,

Տվյալտանքի նվազումով

30 — Մարել... ահա կյանք երանյալ:

Եվ դրանից զուրկ եմ. անկամ

Դեգերում եմ ձեզ փնտրելով.

Ինձ համար թանկ են օր և ժամ,

Բայց վատնում եմ ունայն թախծով

Ինձ մնացած օրերն անկյանք:

Առանց այն էլ ծանր են նրանք:

Գիտեմ, որ ես մոտ եմ մահվան,

Բայց որպեսզի ես դեռ ապրեմ,

Պիտ իմանամ առավոտյան,

40 — Որ այդ օրը ձեզ կտեսնեմ...

Մի վախ ունեմ՝ խնդիրն իմ հեզ

Ահեզ ժամին՝ խորամանկման

Չաղիր մի քաջ կթվա ձեզ,—

Եվ լսում եմ ձայնը ցասման:

Գեթ իմանաք՝ ինչ դառն է հա՛ր
 Տանջվել սլապակ սրտի տապով,
 Եվ ամեն ժամ կամփռվ տկար
 Սաստել արյան խռովքն ուժով,
 Զգտել փարվել ծոնկին ձեր մունջ,
 50 — Հեկեկալով ձեր դեմ զեղել
 Խոստովանանք, խնդիրք, տրտունջ,
 Եվ այն, ինչ սիրտն է հեղեղել,
 Մինչդեռ պետք է առերես պաղ,
 Զինված շինծու խոսք ու ձևով՝
 Զեղ հետ զրույց անեմ խաղաղ
 Եվ ձեզ նայեմ զվարթ դեմփռով...

Ի՞նչ և է, դե՛, ամենեին
 Էլ ուժ չունեմ ինձ զսպելու.
 Վճռել եմ. ձեր կամքին հլո՛ւ՝
 60 — Հանձնում եմ ինձ ճակատագրին:

XXXIII

Պատասխան չիք: Նորից ու նոր
 Երկրորդ, երրորդ ուղերձ գրեց.
 Զիք պատասխան: Գնաց մի օր
 Մի հավաքույթ: Ոտք ներս գրեց՝
 Դեմն ելավ նա՝ դեմքին ցասում,
 Ո՛չ տեսնում է և ո՛չ խոսում:
 Ո՛հ, ինչպե՛ս է պատել իրեն
 Տարեմուտի ցրտով արդեն.
 Ինչպե՛ս համառ իր շուրթերով
 Վրդովմունքն է ճգնում զսպել:
 Եվզենին սուր աչքն է սեպել.
 Բայց կարեկցանք, հուզմուք խռով,
 Արցունքի բիծ... ո՛ւր են... Զկա՛ն:
 Այդ դեմքն ունի լոկ հետք ցասման...

XXXIV

Եւ մի գուցե երկյուղ թաքուն,
 Որ հին դադանիքը յուր սրտի
 Չհայտնվի յուր ամուսնուն...
 Այն, որ Եվգենին սոսկ գիտի:
 Հույս չկա: Սա դուրս է գալիս,
 Հիմար քայլին անեծք տալիս
 Եւ առավել հիմար՝ նորից
 Հեռանում աշխարհիկ կյանքից:
 Եւ իր լռին մենարանում
 Սեամադձն է հիշում դաժան,
 Որ ճնշում էր իրեն այնքան
 Անցած կյանքի խառնարանում,
 Որ օծիքից իրեն բռնեց
 Եւ մութ անկյուն հանկարծ նետեց:

XXXV

Նա սկսեց նորից կարդալ.
 Եւ անխտիր կարդաց Ռուսո,
 Մանձոնի և madame de Staël,
 Շամֆոր, Հերդեր, Բիշա, Տիսսո,
 Կարդաց նաև սկեպտիկ Բելին,
 Այլև կարդաց Ֆոնտենելին.
 Մերոնցից էլ կարդաց մի քիչ՝
 Առանց խոտանելու ոչինչ,
 Թե՛ ալմանախ և թե՛ հանդես,
 Ուր այնքան շատ կան խրատներ,
 Ուր կան իմ դեմ հայհոյանքներ,
 Ուր իմ մասին գտել եմ ես
 Այսօրինակ մադրիգալներ՝
 E sempre bene, պարոններ:

XXXVI

Բայց ի՞նչ աչքը գրքին ուներ,
 Իսկ մտքերը հեռվում էին.
 Տենչանք ու վիշտ, ցանկություններ
 Ճնշում էին նրա հոգին.
 Նա տողերում այդ տպագիր
 Կարդում էր ա՛յլ տողեր ներդիր
 Հոգու աչքով: Եվ գլխովին
 Հանձնվել էր այդ տողերին.
 Այդտեղ կային հնավանդ կյանք,
 Մութ անցյալի շատ զրույցներ,
 Անկապ, խռով, մութ երազներ,
 Վտանգ, բժժանք ու բամբասանք,
 Երկար հեքիաթ ցնդագուշակ,
 Զահել աղջիկների նամակ:

XXXVII

Եվ հույզերն ու մտքերը իր
 Քնեցնում էր դանդաղորեն.
 Երևակայությունը ժիր
 Փարավոն էր նետում իրեն.
 Մերթ տեսնում էր՝ մի պատանի,
 Ասես հանգիստ քնած լինի,
 Անշարժ ընկած ձյան մեջ թաթալ,
 Եվ լսում ձայն՝ արդեն մեռավ.
 Մե՛րթ՝ թշնամիք իր մոռացած,
 Զրպարտիչներ, նենգ վախկոտներ,
 Դավաճանած գեղուհիներ,
 Մե՛րթ ընկերներ արգահատած,
 Մե՛րթ պատուհան դյուղի տան մեջ՝
 Դեմը նստած նա... նա անվերջ...

XXXVIII

Նա դրանցով շատ էր տարված,
 Եվ քիչ մնաց խելքը ցնդեր
 Կամ բանաստեղծ դառնար հանկարծ
 Եվ մեզ կարգին շնորհ աներ:
 Եվ ճիշտ. ուժով մագնեփղմի
 Ռուսաց տաղի մեխանիզմի
 Գաղտնիքն աշակերտս հիմար
 Քիչ էր մնում, որ հասկանար.
 Որքա՞ն էր նա պոետ թվում,
 Երբ բարկ վառարանի կողքին
 Իր սենյակում նստած լռին
 Benedetta էր մոմոռում,
 Idol mio և անսթափ՝
 Նետում հուրը գիրք, հողաթափ:

XXXIX

Խռան օրեր. ձյունհալն ընկավ.
 Չմեռն արդեն տեղի տվեց.
 Եվ բանաստեղծ նա չդարձավ,
 Ո՛չ մեռավ, ո՛չ խելագարվեց.
 Գարունը կյանք տվեց նրան,
 Եվ սենյակներ ու օթեան,
 Ուր ձմեռն էր անց կացրել փակ,
 Բուխարիկ ու փեղկեր կրկնակ
 Լքեց պայծառ մի առավոտ
 Եվ Նեվալի սառած ափով
 Առաջ սուրաց նա սահնակով:
 Արևի տակ ձյունը կեղտոտ
 Յեխ էր կազմել փողոցներում:
 Բայց ո՞ւր էր այդ ճամփով գնում

Օնեգինը: Արդեն կանխավ
 Գուշակեցիք դուք. անկասկած
 Նրա՝ Տանյայի մոտ թռավ
 Իմ հիմարը՝ խեղճի չեկած:
 Մեռելատիպ մտնում է նա,
 Բայց միջանցքում ոչ ոք չկա,
 Դահլիճն՝ անմարդ, խորքում՝ նույնպես:
 Բացեց մի դուռ՝ վայրկենապես
 Արձանացավ սա ապշահար.
 Իշխանուհին նստած մենակ,
 Կարդում էր մի ինչ-որ նամակ,
 Գունատ էր նա, դեռ անհարդար,
 Արցունքի գետն իր այտերին
 Եվ ծնոտը հենած թևին:

Ո՛հ, այդ պահին ո՞վ չէր կարդա
 Նրա անխոս վիշտը գաղտնի,
 Խեղճ Տանյային այն առաջվա
 Այդ կոմսուհու անձում տեսնի:
 Եվ գենին խոր վշտով վայրագ
 Նրա ոտքերն ընկավ արագ.
 Նա խոր ցնցվեց ու վշտագին
 Հայացքն ուղղեց Օնեգինին՝
 Լուռ, անցասում և անայլայլ...
 Սրա հայացքն աղերսական,
 Հիվանդ, թույլ ու նախատական
 Նա հասկացավ, և նա դարձյալ
 Նո՛ւյն աղջիկն էր այն պարզագին՝
 Նո՛ւյն տենչով, նո՛ւյն սրտով կրկին:

XLII

Նա դեռ սրան չէր բարձրացնում,
 Եվ նայելով լուռ, կարեկիր՝
 Անհուշ ձեռքը չէր փախցնում
 Սրա ագահ շրթունքներից...
 Ի՞նչ տենչ ուներ նա այդ պահին...
 Նրանք երկար լուռ մնացին...
 Տանյան խոսեց մեղմ վերջապես.
 «Բա՛վ է, ելե՛ք: Ձեզ պետք է ես
 Անկեղծորեն բացատրեմ:
 Օնեգին, դուք հիշո՞ւմ եք դեռ
 Ծառուղին, այն ժամը, երբ մեր
 Բախտը բերեց մեզ դեմ առ դեմ,
 Եվ ձեր դասը ես գլխիկոր
 Լսեցի: Հերթն իմն է այսօր:

XLIII

«Այն ժամանակ ես դեռ այնքա՛ն
 Զահել և լավն էի, կարծեմ,
 Եվ ձեզ սիրում էի, սակայն
 Ի՞նչ գտա ձեր սրտում դժխեմ,
 Ի՞նչ պատասխան. դա՛ռը մերժում.
 Չէ՛ որ նոր բան ձեզ չէր բերում
 Հեզ աղջկա սերը այն լուռ:
 Այժմ էլ զգում եմ ես սարսուռ,
 Հենց որ, աստվա՛ծ իմ, դառնաղետ
 Ճառն եմ հիշում... Բայց մեղավոր
 Ձեմ կոչում ձեզ. այն ահավոր
 Ժամին ազնիվ եղաք ինձ հետ,
 Դուք վարվեցիք արդարացի.
 Ձեզ շնորհապարտ ես մնացի:

XLIV

«Այնպահ, գրկում խուլ մենության,
 Սին համբավից հեռու գյուղում,
 Ձեզ դուր չեկա, ճիշտ է... Սակայն
 Ինչո՞ւ էք այժմ ինձ հալածում,
 Ինչո՞ւ ունեք ինձ աչքի տակ:
 Նրա համա՞ր, որ շարունակ
 Վերին խավում պիտի լինեմ,
 Հարստություն, անուն ունեմ,
 Որ հաճո է կռվում խեղված
 Ամուսինս արքունիքին,
 Որ իմ ամոթն այժմ ամենքին
 Կարող է հեշտ հասնել հանկարծ
 Եվ ձեզ մեր հանրության աչքում
 Շնորհել գայթակղելի կոշում:

XLV

«Ես լալիս եմ... Ձեր Տանյային
 Եթե դուք չէ՞ք մոռացել դեռ,
 Ապա գիտցե՞ք՝ որ դառնագին
 Լուսանքը, խիստ զրույցը ձեր,
 Եթե ես ուժ ունենայի,
 Միշտ նախընտրել կուզենայի
 Այս անպատիվ, նվաստ կրքից,
 Նամակներից, արցունքներից:
 Այնպահ կյանքին իմ երազուն
 Դուք գեթ հարգանք էիք տածում...
 Իսկ ա՞յժմ, ո՞հ, ի՞նչն է նետում
 Ձեզ իմ ոտքերն.—ի՞նչ փոքրություն.
 Սաղո՞ւմ է ձեր սրտին, խելքին
 Լինել գերի ճղճիմ կրքին:

XLVI

«Իսկ ինձ համար, Օնեգին, այս
Անդուր կյանքի կեղծ փայլը մեր,
Նորակարգ տուն և բարձր դաս,
Հաջողութուն, երեկույթներ
Չարժեն ոչինչ: Սիրով կրկին
Դիմակաների այս հնոտին,
Այս թմբիրն իր պերճ աղմկով
Կփոխեի վայրի այգով,
Այն դրքերով, մեր այն խղճով
Կացարանով, ուր անցյալում
Հանդիպել եմ ես ձեզ տրտում,
Շիրմանոցով այն անաղմուկ,
Ուր թողել եմ ես խաչի տակ
Ծառի ստվերում մի խեղճ դայակ...»

XLVII

«Իսկ բախտն անքա՛ն էր մոտ, այնպե՛ս
Հնարավոր... Սակայն մի այլ
Ուղի մտա: Գուցե թե ես
Կատարեցի անդգույշ քայլ.
Մայրս դառը արցունքն աչքին
Աղերսում էր: Իր վիճակին
Անտարբեր էր Տառլանան խեղճ...
Ամուսնացել եմ ես: Եվ վերջ.
Դուք ինձ հանդիստ թողեք խնդրեմ:
Գիտեմ՝ ունեք դուք ձեր սրտում
Հպարտութուն, պատվի ղգացում:
Ձեզ սիրում եմ (ինչո՞ւ կեղծեմ),
Բայց այլ մարդու եմ ես տրված,
Եվ կմնամ միշտ նվիրված»:

XLVIII

Նա դուրս ելավ: Եվզենին դեռ
 Շանթված մնաց ոտքի վրա...
 Արդյոք հիմա ի՞նչ խոր հույզեր
 Փոթորկում են սրտում սրա:
 Բայց զնգոցով զույգ խթանի
 Ներս է մտնում Տատյանայի
 Ամուսինը... Մեր հերոսին,
 Նրա կյանքի այս չար պահին,
 Ո՛վ ընթերցող, այժմ թողնենք...
 Թողնենք ընդմիջտ: Մենք շատ երկար
 Միշտ նրա հետ մեկ ճանապարհ
 Տրորեցինք: Շնորհավորենք
 Արդեն իրար՝ հասած ափին,
 Եվ կարծում եմ՝ ժամանակին:

XLIX

Ընթերցող իմ, ով էլ լինես՝
 Բարեկամ, թե չարկամ, անքույթ
 Ուզում եմ քեզ հրաժեշտ տալ ես.
 Մնաս բարո՛ւ: Եթե անփուլթ
 Այս տներում փնտրել ես դու
 Դուռ վերհուշներ խռովազդու,
 Հոգնության դեղ հանգստաբեր,
 Սուր խայթոց կամ ժիր պատկերներ,
 Անքերական դարձված կամ բառ,—
 Տա աստված, որ այս գրքույկում
 Գտնես տենչիդ բավարարում,
 Կամ թերթերի վեճի համար
 Գեթ մի հատիկ զվարճալի:
 Դե՛, բաժանվենք, մնաս բարի՛,

L

Եւ դու, նժդե՛հ տարօրինակ,
 Դու էլ, իդեա՛լ անդավաճան,
 Եւ դու, աշխո՛ւյժ, թեև բարակ
 Իմ երկ: Ձեզ հետ գտա շատ բան,
 Ինչ պոետն է տենչում հավետ՝
 Մոռացա կյանքն աղմկավետ,
 Զրույց արի մտերմական:
 Շատ օրեր այն օրից անցան,
 Երբ դեռատի Տանյան թախծուն
 Ու Եւդենին ինձ անմեկին
 Տենչանքիս մեջ հայտնվեցին,
 Երբ իմ ազատ վեպի հեռուն
 Կախարդական բյուրեղի մեջ
 Ձէր նշմարվում պարզ մինչև վերջ:

LI

Իսկ նրանք, ում դեռ նախնական
 Տներն էի սիրով կարդում...
 Հեռու են կամ արդեն չկան՝
 Ինչպես Սադին կասեր տրտում.
 Առանց նրանց վեպն ավարտվեց:
 Բայց նա՛, ով ինձ իդեալ տվեց
 Տատյանայի դեմքի համար...
 Օ՛, շատ հնձեց օրհասը չար:
 Երանի՛, ով կյանքը քեֆով
 Վաղ լքեց և մինչև մրուր
 Չըմպեց դինու բաժակը յուր,
 Ով մինչև վերջ չկարդալով՝
 Հրաժեշտ տվեց կյանքի վեպին,
 Ինչպես որ ես Օնեգինին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷՆՂԻՆԱԿԻ

¹ Գրված է Բեսարաբիայում:

² Dandy— ֆրանս:

³ Գլխարկ à la Bolivar:

⁴ Հայտնի ճաշարանատեր:

⁵ Սառեցրած զգացմունքի հատկանիշ՝ արժանի Չալդ Հարուլդին: Դիդլոյի բալետները տողորված են երեակայության կենդանությանը և արտասովոր հմայրով: Մեր ռոմանտիկ գրողներից մեկը դրանց մեջ գտնում էր շատ ավելի պոեզիա, քան ամբողջ ֆրանսիական դրականության մեջ:

6. Tout le monde sut qu'il mettait du blanc; et moi, qui n'en croyais rien, je commençais de le croire, non seulement par l'embellissement de son teint et pour avoir trouvé des tasses de blanc sur sa toilette, mais sur ce qu'entrant un matin dans sa chambre, je le trouvai brossant ses ongles avec une petite vergette faite exprès, ouvrage qu'il continua fièrement devant moi. Je jugeai qu'un homme qui passe deux heures tous les matins à brosser ses ongles, peut bien passer quelques instants à remplir de blanc les creux de sa peau.

(Confessions de J. J. Rousseau.).

Դրո՞ւմը կանխեց յուր դարը. ներկայումս ամբողջ լուսավոր Եվրոպայում եղունգները մաքրում են հատուկ խոզանակով:

Թարգմանություն. բոլորը գիտեին, որ նա սպիտակ ներկ է գործածում. ևս սկզբում չէի հավատում նրան, բայց հետո հակվեցի դեպի այդ կարծիքը ո՛չ միայն նրա համար, որ նրա գեմբի գույնը գեղեցիկանում էր, իսկ նրա զարդասեղանի վրա գտնվում էին սպիտակ շպարի ամաններ, այլև՝ նրա համար, որ մի անգամ, մտնելով նրա սենյակը՝ ևս տեսա, որ նա մաքրում էր յուր եղունգները հատկապես այդ նպատակով պատրաստված մի փոքրիկ խո-

զանակով, և այդ գործը նա շարունակեց իմ ներկայութեամբ: Եւ որոշեցի, որ նա, ով ամեն առավոտ երկու ժամ հատկացնում է եղունգներ մաքրելուն, կարող է մի քանի ակնթարթ հատկացնել յուր մաշկի անհարթութիւնները սպիտակ շպարով լցնելուն:

(Ժ. Ժ. Ռուսս, «Խոստովանութիւն»):

7. Այս ամբողջ հեգնական տաղը ոչ այլ ինչ է, եթե ոչ նուրբ գովքը մեր շքնաղ հայրենակցութիւնների: Այդպես Բուսլոն, հանգիմանութեան ձեռով, գովում է Լյուդովիկոս 14-րդին: Մեր տիկնայք միացնում են լուսավորութիւնը, սիրալիրութեանը և բարբերի խիստ մաքրութիւնը այս արեւելեան շքնաղութեանը, որ այնքան հմայել է տիկին Ստալին:

(Տե՛ս Dix ans d'exil*)

8 Ընթերցողները հիշում են պետերբուրգեան գիշերի շքնաղ նկարագրութիւնը Գնեդիչի հովիւերգութեան մեջ.

Ահա գիշերը, բայց չեն գունատւում ամպերի ոսկե շերտերը:
Առանց աստղերի և լուսնի շողշողում է ողջ հեռուն:
Հեռու ծովափին երեւում են արծաթե առաքաստներ
Հազիւ տեսնելի նավերի, կարծես կապույտ երկնքում լողացող:
Անաղջամուղջ փայլով է գիշերվա երկնքը փայլում,
Եվ մայրամուտի ծիրանին ձուլվում է արեւելքի ոսկուն:
Ասես լուսաստղը երեկոյից անմիջապէս հետո բերում է
Շիկնած առավոտ: Դա ժամանակն էր ոսկե ամռան,
Երբ ցերեկները հափշտակում են գիշերվա իշխանութիւնը,
Երբ օտարականի հայացքը հմայում է հյուսիսային երկնքում
Դյուրիշ ձուլումը ստվերի և բաղքը լույսի,
Որի նման զարդ երբեք չունի հարավի երկնքը:
Դա պայծառութիւն է, նման հմայքին հյուսիսի աղջկա,
Որի լուրթ աչերը և կարմիր այտերը
Հաղիւմ են ստվերվում հյուսիսի շեկ ալիքներով:
Այդ պահին նեւէայի և փարթամ Պետրոպոլի վրա
Իջնում են անաղջամուղջ երեկոն և անսովեր գիշերները:
Այդ պահին Ֆիլոմելան կես գիշերվա երգը հազիւ ավարտած:
Նոր երգ է սկսում, բացող օրը ողջունելով:
Բայց ուշ է. Թարմութիւն փչեց նեւէայի տունդրաներին,
Իջաւ ցող ու շաղ
Ահա կես գիշեր է. երեկոյան հաղիւմ թիրուղ աղմկող
Նեւլան շի ցնցվում. ցրվել են բաղաբացի հյուրերը.
Ոչ մի ձայն ավին, ոչ մի ծիանք ջրի վրա, ողջ լռել է.

* «Ա. քսոբանքի տաս տարին» — տիկին դե Ստալին գիրքը:

Միայն երբեմն կամուրջների գղիրդն է թռչում ջրի վրա,
Միայն երբեմն երկարածիդ կանչ է լսվում հեռու գյուղից,
Որտեղ գիշերով իրար ձայն են տալիս մարտական պահակները:
Քնած է ամեն ինչ

9 Արթմնի աստվածուհուն բարեհաճ

Տեսնում է սրտեք հմայված,

Անրուն գիշեր անցկացնելով՝

Հենված գրանիտի վրա.

(Մուրավյով. «Նեվայի աստվածուհուն»)

10. Գրված է Օդեսայում:

11 Հեղինակը, մոր կողմից, ունի աֆրիկական ծագում: Նրա մեծ պապ Աբրամ Պետրովիչ Աննիրալը ութ տարեկան հասակում գողացվել է Աֆրիկայի ափերից, բերվել Կոնստանդինապոլիս: Ռուսաց դեսպանորդը, փրկելով նրան, ուղարկել է իրրե նվեր Պետրոս Մեծին, որը նրան միկրտել է Վիլնյայում: Այնուհետև, նրա եղբայրը եկել է նախ Կոնստանդինապոլիս, իսկ հետո Պետերբուրգ, առաջարկելով փրկագին տալ նրա համար. բայց Պետրոս առաջինը չի համաձայնվել վերադարձնելու յուր սանին: Մինչև խոր ծերություն Աննիրալը դեռ հիշելիս է եղել Աֆրիկան, հոր շքեղ կյանքը, տասնինն եղբայրներին, որոնց մեջ ինքը եղել է կրտսերը. նա հիշելիս է եղել, թե ինչպես էին հոր մոտ տանում նրանց, ձեռքները մեջքներին կապած, մինչդեռ ինքը եղել է ազատ և խաղացել է հայրական տան շատրվանների տակ. հիշելիս է եղել նաև յուր սիրելի բրոջը՝ Լազանիային, որ լողալիս է եղել հեռվից այն նավի հոտը, որով ինքը հեռացել է:

18 տարեկան հասակում Աննիրալը ցարի կողմից ուղարկվել է Ֆրանսիա, որտեղ և սկսել է յուր ծառայությունը ռեգենտի բանակում: Նա վերադարձել է Ռուսաստան գլուխը սրով ջարդված և ֆրանսիական լեյտենանտի աստիճանով: Դրանից հետո նա անբաժանելիորեն գտնվել է կայսեր անձի մոտ: Աննայի թագավորության ժամանակ Աննիրալը՝ Բիրոնի անձնական թշնամին, բարետեսը պատրվակով ուղարկվել է Սիբիր: Զանձրանալով մարդկանց սակավությունից և կլիմայի դաժանությունից՝ նա ինքնակամ վերադարձել է Պետերբուրգ և ներկայացել իր բարեկամ Մինիխին: Մինիխը զարմացել է և խորհուրդ տվել նրան, որ անմիջապես թարնվի: Աննիրալը քաշվել է յուր կալվածքը, որտեղ և ապրել է Աննայի թագավորության ողջ ժամանակամիջոցում՝ համարվելով ծառայության մեջ և Սիբիրում: Ելիզավետան, գահ բարձրանալով՝ նրան շրջապատել է իր հովանավորությանմբ: Ա. Պ. Աննիրալը մեռել է արդեն Եկատերինայի թագավորության ժամանակ, հեռացված

ժառայութեան կարևոր զրադմունքներէց, գեներալ-անշնֆի կոչումով, 92 տարեկան հասակում:

Նրա որդին՝ գեներալ-լեյտենանտ Ի. Ա. Աննիբալը անվիճելիորեն պատկանում է եկատերիշյան դարի ամենապահանաւոր մարդկանց թվին (մեռ. 1800 թվին):

Ռուսաստանում, որտեղ հիանալի մարդկանց հիշատակը շուտ է անհետանում, պատմական գրանցումների սակավութեան պատճառով, Աննիբալի կյանքը հայտնի է միայն ընտանեկան ավանդութիւններով:

¹² «Դնեպրյան ջրահարսի» առաջին մասից:

¹³ Քաղցրահնչունագոյն հունակուն անունները, ինչպիսիք են, օրինակ՝ Ագաֆոն, Ֆիլատ, Ֆեոդորա, Ֆելլա և այլն, մեզ մոտ գործածվում են միայն հասարակ մարդկանց մէջ:

¹⁴ Դրանդիսոն և Լովլաս, երկու հռչակաւոր վեպերի հերոսներ են:

¹⁵ Si j'avais la folie de croire encore au bonheur, je le chercherais dans l'habitude.

Քարգմանություն. եթե ես անմտութիւն ունենալի դեռեա հավատալու երջանկութեանը, ես այն կորոնի սովորութեան մէջ (Շատորրիան):

¹⁶ «Խեղճ Յորիկ» — Համլետի բացադանշութիւնը ծաղրածվի գանդի վրա: (Տես Շերպիլի և Ստեկո):

¹⁷ Նախորդ հրատարակութեան մէջ փոխ. *домой летят* [թռնում են տուն] սխալմամբ տպւած էր *зимою летят* [թռնում են ձմեռը] որ շուներ ոչ մի իմաստ): Քննադատները, այդ չհասկանալով, անախրոնիզմ էին գտնում հաջորդ տների մէջ: Համարձակվում ենք հաւատացնել, որ մեր վեպի մէջ ժամանակը հաշված է ըստ օրացույցի:

¹⁸ Յուլյա Վոլմար — Նոր Էլիզա: Մալեկ-Ադել M-me Cottin-ի միջակ վեպի հերոս: Գուտաւ վե Լինար — զբոսահի Կրյուզների չքնաղ պատմվածքի հերոսը:

¹⁹ Վամպիր-պատմվածք, սխալմամբ վերագրված լորդ Բայրոնին: Միլմոտ — Մատյոբրինի հանճարեղ ստեղծագործութիւնը. Jean Sbogar — Կարլ Նոդեյի հայտնի վեպը:

²⁰ *Lasciate ogni speranza voi ch'entrate*. Համեստ մեր հեղինակը թարգմանել է հիանալի տաղի միայն առաջին կեսը:

²¹ Պարբերաթիւթ, որ մի ժամանակ հրատարակում էր հանդուցլալ Ա. Իզմայլովը բաւական անկարգ կերպով: Հրատարակիչը մի անգամ մամուլով ներողութիւն խնդրեց հասարակութիւնից, որ ինքը տոներին քնֆով է եղել:

²² Ե. Ա. Բարատինսկի:

23 Մամուլում զարմանում էին, թե ինչպես կարելի է կույս անվանել հասարակ գեղջկուհուն, մինչդեռ ազնվատոհմ օրիորդները, ըիշ ներքեը, անվանված են աղջկերհ:

24 «Այս նշանակում է», նկատում է մեր բննադատներից մեկը, «թե տղաները սղղում են շմուշկներով»: Ճիշտ է:

25 Ինձ իմ ջահել օրերում

Պոետական Աի-ն

Դյուր էր գալիս աղմկոտ փրփուրով,

Նման սիրո կրքին.

Կամ խելահեղ ջահելությանը, և այլն:

(Թուղթ առ Լ. Պ.)

26 Ավգուստ Լաֆոնտեն, ընտանեկան վեպի հեղինակը:

27 Տե՛ս Առաջին ձյունը, իշխ. Վյազմսկու բանաստեղծությունը:

28 Տե՛ս Ֆինլանդական ձմռան նկարագրությունը Բարատինսկու «Էդայի» մեջ:

29 Կանչում է կատուն էգ կատվին

Վառարանի վրա բնելու:

Հարսանիքի գուշակություն. առաջին երգը գուշակում է մահ:

30 Այս ձևով իմանում են ապագա փեսացվի անունը:

31 Մամուլում հանդիմանում էին ХЛОП, МОЛЫБ և ТОП բառերը [րխկ, աւֆ, դոփ] իրրե անհաջող նորմոծություն: Այս բառերը արմատական ուսանական են. «դուրս ելավ Բովան վրանից հովանալու և լսեց փոված դաշտում մարդկանց աւֆ [МОЛЫБ] և ձիերի դոփ [ТОП]» (Բովա արքայազնի հեքիաթը): Թրխկ [ХЛОП] գործածվում է ժողովրդի լեզվի մեջ փոխանակ թխկոցի (хлопанье), ինչպես Ֆրշ (ШУП) փոխանակ Ֆշոցի (шипение).

Նա Ֆրշ արեց օձի նման:

(Հին ռուսական տաղեր):

Զի կարելի կաշկանդել մեր հարուստ և չքնաղ լեզվի ազատությունը:

32 Մեր բննադատներից մեկը այս տողերում կարծեմ գտնում է մեզ համար անհասկանալի անվայելչություն:

33 Գուշակության գրքերը մեզ մոտ հրատարակվում են Մարտին Ջադեկայի ֆիրմայի անունով, հարգարժան մի մարդ, որը երբեք չի գրել գուշակության գրքեր, ինչպես նկատում է Բ. Մ. Ֆեդորովը:

34 Լոմոնոսովի հայտնի տողերի պարոդիան է.

Արշալուսյաը իր բոսոր ձեռքով

Առավոտյան խաղաղ ջրերից

Հանում է արևի հետ իր ետեից—և այլն:
35 Բույանումն, իմ հարևանը

եկավ երեկ ինձ մոտ շապիթած բեղերով,
Մաղերը խառն, թավազգեստ, հովարավոր գլխարկով:
(«Վտանգավոր հարևանը»):

36 Մեր քննադատները՝ գեղեցիկ սևոճի հավատարիմ հարգողները
խիստ կերպով դատապարտում էին այս ոտանավորի անվայելչու-
թյունը:

37 Փարիզի ճաշարանատեր:

38 Գրիրոնգովի տողն է:

39 Հռչակավոր զինագործ:

40 Առաջին հրատարակության մեջ 6-րդ գլուխը ավարտվում էր
հետևյալ կերպ.

Իսկ դո՛ւ, երիտասարդ ավյուն,
Հուզիր երևակայություն,
Աշխույժ տուր միշտ սրտիս նիրհող.
Հաճախ այցի եկ ինձ. մի՛ թող՝
Սառչի պոեստ հողիս անշեջ,
Դառնա կարծր՝ նման բարի,
Դաժանանա այս աշխարհի
Մեռելացնող վայելքի մեջ,
Շուրջը՝ անսիրտ սնապարծներ,
Եվ շողափայլ շատ ապուշներ,

XLVII

Շուրջը՝ բոու և փոքրոգի,
Երես առած նենգ զավակներ,
Չարագործներ ծիծաղելի,
Բութ, ձանձրալի դատավորներ,
Աստվածավախ կանայք հտպիտ,
Հոժար ճորտեր գոհաժպիտ,
Շուրջը՝ զզույց, բախում կրկին,
Դավաճանման ձևեր նրբին,
Ե՛վ րմայրներ անագորույն,
Ե՛վ վճիռներ սառն, անհոգի,
Հաշիվների, խոսքի, մտքի
Հույժ ձանձրալի դատարկություն,
Մի ճահճային փոս, որտեղ մեր
Լողն ենք տալիս, բարեկամներ:

41 Լեշին—հեղինակ անտեսության վերաբերյալ բազմաթիվ երկերի:

42 Մեր ճամբարները այգի են աչքերի համար.

Ծառեր, կնձղափուսեր, առուներ,

Աշխատանքը շատ, փառքը մեծ,

Բայց, ափսո՛ս, անցնել չի լինում հաճախ.

Հերթով կանգնած ծառերից

Անցորդները քիչ օգուտ ունեն.

Ճանապարհը, կասես, լավն է,

Եվ կհիշես՝ «ոտքով գնալու համար»:

Ազատ է ռուսական ուղեգնացությունը

Միայն երկու գեպըում. երբ

Մեր Մակ-Ադամը կամ Մակ-Եվան՝

Մեր ձմեռը, պայթելով զայրույթից,

Կատարում է իր ամայացնող արշավանքը,

Ճամփան կոփում սառցն թուջով,

Եվ ծածկում է առավոտյան ձյունը

Նրա հետքերը թավափաթիլ ավազով,

Կամ երբ դաշտերով անցնում է

Այնպիսի կիզիչ երաշտ,

Որ կարող է ջրափոսի միջով փիեց փի

Անցնել ճանճը՝ աչքերը խփած:

(Կայարան. իշխ. Վյազեմսկի):

43 Համեմատությունը առնված է K*-ից, որը այնքան հայտնի է երևակայության խաղացկունությամբ: K-ն պատմում էր, որ մի անգամ իշխան Պոտյոմկինի կողմից ուղարկված լինելով կայսրուհու մոտ՝ սուրացել է այնպես արագ, որ կառքից դուրս ցցված իր թրի ծայրը անընդհատ թխթխկացել է՝ կաշեկով վերստացույցի սյուններին, նշանակում է ամբոխ:

44 Rout—երեկոյան հավաքույթ առանց պարերի, խկապես նշանակում է ամբոխ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱՐԳԱՆՁԻ*
(ՉՈՆ)

Ոչ նյութ տալը սեզ աշխարհին...

Այս ձոնը ուղղված է Պուշկինի մտերիմ Պյոտր Ալեքսանդրովիչ Պլետնյովին (1752—1862). սա բանաստեղծ էր, հրատարակիչ և Պուշկինի հետ ունեւր բարեկամական նամակագրություն:

ԴՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

I

Իշխ. Վլադիմսկի (1792—1878)—բանաստեղծ, գրական քննադատ, ռուսական ռոմանտիզմի ակնանավոր ներկայացուցիչ:

II

«Լուսլան և Լյուդմիլա»—Պուշկինի վաղ ստեղծագործություններից մեկը, որով հռչակվեց հեղինակի անունը:

Բայց ճյուսխում ունեմ վտանգ:

Այստեղ ակնարկվում է այն հալածանքը, որ նյութվում էր Պուշկինի դեմ Պետերբուրգում, որի հետեանքով նա այդ ժամանակ արտրված էր հարավ՝ Բեսարաբիա, բարձրաստիճան մարդկանց դեմ գրած իր դիպուկ ու սրամիտ էպիգրամները և ազատասիրական գաղափարները համար:

III

Madame (արտասանի՛ր մաղամ)—տիկին.

Monsieur (արտ. մոսյո՛)—պարոն.

Monsieur l'Abbé (արտ. մոսյո Լյաբե)—Օնեգինի տնային զաստիարակը:

VI

Յուլիեալ — հռոմեական բանաստեղծ, սատիրագիր, վախճ. 130 թվին:

Vale (արտ. վալե)—մնաք բարյա՛վ:

* Ծանոթությունների մեջ գլուխների տակ հռոմեական թվանշաններով ցույց ենք տալիս համապատասխան գլուխների տները:

էնէաս — հռչակավոր հռոմեական բանաստեղծ Վիրգիլիոսի
(70—19 թվ. մ. թ. ա.) «էնեականը»:
Բոմոլ — Հռոմի առասպելական հիմնադիրը:

VII

Թեոկրիտ — հունական հովվերգակ (ապրել է III դ. մ. թ. ա.):

VIII

Նագոն (3 մ. թ. ա.—17 մ. թ. հ.) — հռոմեական անվանի բանաստեղծ — սիրերգակ Օվիդիոս Նագոնը, որը կյանքի վերջում արտոված էր Սև ծովի ափերը և այնտեղ էլ մեռավ:

Յոբլասի այս նետնորդն անդող:

Ակնարկված է Ֆրանս. գրող Լուվի դե Կուվրեյի (1760—1797) վկայի հերոս Յորլասը, որը դայթակղեցնողի և սիրային արկածների հերոսի տիպարն էր:

XV

Բոլիվար — լայնեղր գլխարկի մի տեսակ, որ կոչվում էր հարավային Ամերիկյան իսպանացիներից ազատագրելու համար մարտնչող Սիմոն Բոլիվարի (1783—1830) անունով:

Բրեգետ — Բրեդետ ֆիրմայի ժամացույց:

XVI

Talon (արտ. տալոն) — անվանի մի ճաշարան Պետերբուրգում:
Կավերին (1794—1855) — Պուշկինին ծանոթ մի գուսար էր, գվարձասեր և խնջույքասեր:

Roast-beef (արտ. ռոստրի ֆ) — ճաշի մի տեսակ, տապակած տավարի միս:

XVII

Entrechat (արտ. անտրեշա') — բալետային ցատկ, ձևավոր շարժում:

Ֆեդրա, Կլեոպատրա, Մոխնա — թատրոնական ռեպերտուարի հերոսուհիների անուններ:

XVIII

Ֆոնվիզին, Դ. Ի. (1774—1792) — ռուսական ռեալիստական կատակերգության հիմնադիրներից:

Կեյամբին, Յ. Բ. (1742—1791) — ռուս բանաստեղծ-թատերագիր. թեև հետևում էր կլասիցիզմի ավանադական ձևերին, բայց ինքնուրույնության դրոշմ ուներ:

Յզերով, Վ. Ա. (1770—1816)—ուսու թատերագիր, հետևորդ
Կնյաժնինի:

Սեմյոնովա, Ե. Ս.—այն ժամանակ հայտնի դերասանուհի:

Կառենին, Պ. Ա. (1792—1853)—գրող, թարգմանիչ, որ ի միջի
այլոց թարգմանել է Կոռնելի թատերգությունները:

Շախովսկոյ, Ա. Ա. (1777—1864)—մի բանի կատակերգու-
թյունների հեղինակ:

Դիդլո (1767—1837)—հայտնի բալետմեյստեր Պետերբուրգում:

XIX

Տերփսիֆոս (ա)—սպարերի մուսան, ըստ հունական դիցաբանու-
թյան:

XX

Խստոմինա, Ե. Ի. (1799—1848)—հռչկավոր պարուհի, որ մաս-
նակցում էր Դիդլոյի բալետներին:

Էռլյան տաղ

Էոլ (էոլաս կամ էոլոս)—բամբինների աստված, որ տալիզով
նվագում էր բազյր մեղեդիներ, ըստ հունական դիցաբանության:

XXV

Չադակ կամ Չադակ, Պ. Յ. (1793—1856)—«Մոսկովյան ըն-
կերության» հայտնի անդամ, որ հալածվում էր իր բազաբական-
հասարակական համոզմունքների համար, հեղինակ «Փիլիսոփայա-
կան նամակների»:

XXXII

Դիանա, Ֆլորա — սրտի և ծաղիկների աստվածուհիները, ըստ
հռոմեական դիցաբանության:

Էլվինա — պտղաբերության աստվածուհին, ըստ հռոմեական
դիցաբանության: Ժուկովսկու բալլադներից մեկում պատկերված
է իբրև հավատարիմ սիրուհի:

XXXIII

Արմիդեն — Տասուոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի հե-
րոսուհու անունից. այստեղ զործածված է գալթակղեցնող գեղեց-
կուհու իմաստով:

Յզերով, Վ. Ա. (1770—1816)—ուսն թատերագիր, հետևորդ
Կնյաժնինի:

Սեմյոնովա, Ե. Ս.—այն ժամանակ հայտնի գերասանուհի:

Կատենին, Պ. Ա. (1792—1853)—գրող, թարգմանիչ, որ ի միջի
այլոց թարգմանել է Կոռնելի թատերգությունները:

Շախովսկոյ, Ա. Ա. (1777—1864)—մի քանի կատակերգու-
թյունների հեղինակ:

Դիդլո (1767—1837)—հայտնի բալետմեյստեր Պետերբուրգում:

XIX

Տերփսիֆոս (ա)—պարերի մուսան, ըստ հունական դիցաբանու-
թյան:

XX

Իստոմինա, Ե. Ի. (1799—1848)—հռչկավոր պարուհի, որ մաս-
նակցում էր Դիդլոյի բալետներին:

Էռլյան տաղ

Էոլ (էռլաս կամ էոլուս)—բամիների աստված, որ տավիրդով
նվագում էր բաղլըր մեղեդիներ, ըստ հունական դիցաբանության:

XXV

Չադակ կամ Չաադակ, Պ. Յ. (1793—1856)—«Մոսկովյան ըն-
կերություն» հայտնի անդամ, որ հալածվում էր իր բաղաբական-
հասարակական համոզմունքների համար, հեղինակ «Փիլիսոփայա-
կան նամակների»:

XXXII

Դիանա, Ֆլորա — սրսի և ծաղիկների աստվածուհիները, ըստ
հռոմեական դիցաբանության:

Էլվինա — պտղաբերության աստվածուհին, ըստ հռոմեական
դիցաբանության: Ժուլիսկու բալլադներից մեկում պատկերված
է իրրե հավատարիմ սիրուհի:

XXXIII

Արմիդեն — Տասոյի «Աղատագրված Երուսաղեմ» պոեմի հե-
րոսուհու անունից. այստեղ զործածված է գայթակղեցնող գեղեց-
կուհու իմաստով:

VI

Գյոտինգենցի էր իր հոգում
Ակնարկված է այն, որ XVIII դարի վերջում գերման. Գյո-
տինգեն բաղաբուսական էր «Բանաստեղծների միությունը»:

XXX

Ռիչարդսոն (1689—1761)—անգլիական վիպասան (Տես հե-
ղինակի № 14 ծանոթությունը):

XXXII

Ճակատ խուզում

Ըստ սովորության, կալվածատերերը խուզում էին երիտասարդ
հորտերի հակառակ մաղերը ի նշան այն բանի, որ նրանք պետք է
ուղարկվեն բանակ:

ԳՂՈՒՆ ԵՐՐՈՐԴ

I

Էկլոգա—պարզ, սրտադին խոսք:

Ֆիլիդա—դասական կանացի անուն:

X

Կլարիսա, Ֆուլյա, Դելֆին (ա)—Ռիչարդսոնի, Ռուսոյի, Ստալի-
վեպերի հերոսուհիները:

XIII

Ընդդեմ քեբյան հոխորտանքին.

Նշանակում է՝ հակառակ Ապոլլոնի կամքին:

XXII

Թող քո ամբողջ հույսը առնիշտ.

Ըստ Դանթեի «Աստվածային կատակերգության» աշտպիսի մա-
կագրություն է հղել դժոխքի մուտքի վրա, որ նշանակում է՝ վերա-
դարձի հույս չունենաս:

XXIX

Բողղանովիչ, Ի. Ֆ. (1793—1802)—ռուս բանաստեղծ, հեղինակ
«Դուռնակա» հայտնի պոեմի:

XXXI

Ֆրեյշից—Վերերի «Freischütz» («Ազատ կրակող») օպերան:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

XIV

Հիմեն—Հիմենա, ամուսնության աստված, ըստ հռոմական դիցարանության:

XXVII

Կիպրիս—սիրո աստվածուհի Կիպրոս կղզուց:

XXVIII

qu'écrirez-vous sur ces tablettes (արտ. կեկրիբեվու սուր ս՛տարլետ)—ինչ որ գրես այս էջերում:

t. á. v. Annette (արտ. տուտ ավու Անետ)—ամբողջապես բոնը՝ Անետա:

XXX

Տոլստոյի վարժ վրձնից կախառդ:

Տոլստոյ, Ե. Պ. (1783—1873)—ռուս նկարիչ, քանդակագործ:

In quarto (արտ. ինկվարտո)—գիրք, ալբոմ՝ թերթի մեկ քառորդի ծավալով ծավլած:

XXXI

Յազիկով, Ն. Մ. (1803—1843)—ռուս լիրիկ բանաստեղծ:

XXXVII

Գյուլնարայի երգիչ—Բայրոնը:

Հելեսպոնտ—Դարդանելի նեղուցը, որով մի անգամ լող տալով անցել է Բայրոնը:

XLIII

W. Scott — արտասանիւր Վալտեր Սկոտ:

XLV

Կլիկո, Մոնտ—գինու անունների:

Հիպոկրեն — նեկտար, բանաստեղծական ներշնչման աղբյուր:

XLVI

Բորդո, Աի—գինու անունների:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

X

Լէլ—սիրտ ոգին, ըստ հուսական գիցարանության:

XXII

Սեճեկա—հին հռոմեական փիլիսոփա և ողբերգու, ներոնի ժամանակակից:

XXIII

«Պետրիադա»—Լոմոնոսովի (1711—1765) գրած էպոպեան:

Մարմոնտել (1723—1799)—ֆրանս. գրող:

XXVII

Réveillez vous, bell endormie (արտ. սեւիլեւու, բել անդոր-մի)—արթնացի՛ր, բնած գեղեցկուհի:

Belle Nina (արտ. բել Նինա)—գեղեցիկ Նինա:

Belle Tatiana (արտ. բել Տատիանա)—գեղեցիկ Տատյանա:

XXXII

Զիգի—Պուշկինի ծանոթուհիներէից, Պ. Ա. Օսիպովալի գուտար Եվփրատայա Վուլֆը:

XL

Ալբանի—խաւական նկարիչ:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

I

Կոտիլյոն—վերջնապար:

V

Ռեգուլ (ուս)—հռոմեական զինվորական, որը գերի ընկավ կարթագենցիների ձեռքը, նրանց կողմից իբրև միջնորդ զնաց Հռոմ հաշտության պատգամով, բայց հակառակ առաջարկություն արեց հռոմայեցիներին և ըստ իր խոստման վերադառնալով Կարթագեն՝ տանջամահ արվեց կարթագենցիների կողմից:

VII

Sed alia tempora (արտ. սեդ ալյա տեմպորա)—բայց ժամանակները այլ են:

XX

Դելվիգ, Ա. Ա. (1798—1831)—ռուս բանաստեղծ, Պուշկինի դպրոցական ընկերը:

XXII

Լետա—ըստ հունական դիցաբանության՝ մոռացման գետը:

XXVII

Monseur Guillot (արտ. մոսյե Գիլո)—պարոն Գիլյոն:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

XXII

Գյաուր, ժուան—Բայրոնի հրկերի հերոսները:

XXXI

Et cetera (արտ. էտ ցետերա)—և այլն:

XXXV

Ավտոմեդոն—ավանդական հայտնի կառավար:

XLI

Mon ange (արտ. մոն անժ)—հրեշտակ:

Pachette (արտ. Պաշետ)—կանացի անուն է:

L

Մելպոմեն—երգերի մուսան, ըստ հունական դիցաբանության:

Բալետ—կատակերգության մուսան, ըստ հունական դիցաբանության:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

I

Ապոլևուս—հին հռոմեական գրող:

II

Դերժավին (1743—1816)—նախապուշկինյան շրջանի անվանի ռուս գրող. սա հիացել էր Պուշկինի լիցեյական մի բանաստեղծությանմբ և կանխատեսել նրա մեծ ապագան:

IV

Լեւորա—Բյուրդերի բալլադի հերոսուհի:

Տավրիս—Դրիմ:

VIII

Քվակեր—կրօնական ազանդի անդամ, բողոքականության ոգի
ունեցող:

XIV

Du comme il faut (արտ. դի կոմ իլ ֆո)—ըստ պատշաճի:

Շիշկով, Ա. Ս. (1754—1841) մենիստր, գրական-լեզվական
հարցերում պահպանողական անձնավորություն:

XV

Vulgar (արտ. վալգեր)—գոեհիկ:

XXIII

Tête-à-tête (արտ. տետ ատետ)—գեմ առ դեմ, եկուսով իրար
հետ:

St. Priest (արտ. սեն պրի)—պետերբուրգյան ծաղրանկարիչնե-
րից մեկի անունն է:

XXVIII

Մորփե (Մորֆեոս)—քնի աստված, ըստ հռոմայեցիների:

Madame de Staël (արտ. մադամ դը Ստալ)—տես վերը:

Շաֆֆր—գրականագետ:

Հերդեր—գրող:

Քիշա—բժիշկ և հեղինակ:

Քել—գրող և մտածող:

Տիսո—բժիշկ և գիտնական:

Ֆոնտենել—գրող:

Sempre bene (արտ. է սեմպրե բենե)—միշտ լավ է:


XXXVIII

Benedetta, Idol mio (արտ. բենեդետա, իդոլ միո)—այն
ժամանակվա օպերաների արիաներ:

LI

Սադի (Սաադի)—պարսիկ բանաստեղծ:







ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0005071

ЦЕНА

11
22658